14864

1910

891.99
Շ-21

2003

№ 395

ԱԶԳ. ԳՐԱԴԱՐԱՆ ԲՈՍԹՈՆԻ
19 03
ARMENIAN NAT. LIBRARY OF BOSTON.
ԱԶԳ. ԳՐԱԴԱՐԱՆ ԲՈՍԹՈՆԻ
19 03
ARMENIAN NAT. LIBRARY OF BOSTON.

395

891.99
6-21

ԱԶԳԱՑ ՄԱՏԵՆԱՇԱՐ — ԹԻՒ 17

ԱՇՈՒՂ ՇԱՀՆԱԶԱՐ

„ՏԱՆՋԻԱԾՆԵՐԸ"

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Լ. ՏՈԼՍՏՈՅԻ ՅԱՌԱՋԱԲԱՆՈՎ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ԱՐՏԱՇԷՍ Ց. ՇԻՇՄԱՆԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ
1910

Տպագր. Ց. Ճիվէլէկեան

THE FOREIGN BOOK-STORE
BOSTON, MASS.
LIBRAIRIE HOVHANNES
Tchakmakdjilar

56701-ահ

ՊԵՏ. ԿԵՆՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2056-70

Ա.

1.— Արշաւանք Հայ Դիւցազնի
2.— Կովկասի Դիւցազնուհին
3.— Հերոսների դարձը դէպի Կովկաս.

Բ. ՀԱՏՈՐ

4.— Դիւցազնի աքսորուիլը եւ դիւցազնուհու բռ-նաւորուելը.
5.— Գեղացիական շարժումը Ռուսաստանում.
6.— Դիւցազնական արշաւանք Գնդապետ Մելքով դէպի կախաղան.
7.— Հայ Օրիորդի միթինգը եւ ճառը Ռուսաստա-նում:

ԱԶԳ. ԳՐԱԴԱՐԱՆ ԲՈՍԹՈՆԻ
1903
ARMENIAN NAT. LIBRARY OF BOSTON.

ՆՈՒԷՐ ԲԱՐԵԿԱՄԻՍ

Գիրքս նուիրում եմ Քե՛զ, իմ Յարգելի բարեկամ Արամ էֆ. Գույումճեան։ Դո՛ւք որպէս Հայ, եւ որպէս մեծ զգացում ունեցող անհատ, Չմերժեցիք օգնել ինձ, իմ յուսահատական վարկեաններում ես որպէս գրչի մշակ, եւ որպէս երախտապարտ Ձեր ազնիւ զգացումներին, ինչո՞վ կարող էի յայտնել իմ խորին երախտագիտութիւնս։ Ուստի խնդրում եմ ընդունեցէք, գրքոյկս իբրեւ նուէր անմոռանալի բարեկամութեան։

Մնամ Յարգանօք

ԱՇՈՒՂ ՇԱՀՆԱԶԱՐ

1910, Ապրիլ 12

ԻԲՐԵՒ ՅԱՌԱՋԱԲԱՆ

Չկայ Եւրոպական ազգերի մէջ ոչ մի ազգ, որ այնքան տանջուած լինի, հարստահարուած լինի ինչքան Հայերը։

Չկայ ոչ մի Երկիր, որ այնքան զրկանք կրած, այնքան կեղեքուած լինի որքան Հայաստանը– Արմենիա —Հայաստան խօսքերի հետ կապուած է մէկ ազգի ճակատագիր, մէկ տանջուած ազգի բախտ, որ այսքան երկարաձիգ ժամանակիր ճգնաժամի մէջ պահպանել է իւր ազգութիւնը, իւր ազգային անջնջելի անունը։

Արմենիա կամ Հայաստան չի նշանակում զւարճարան, այլ տանջարան, տանջարան բառիս բուն նշանակութեամբ։ Բայց այդ ազգը այդքան երկարաձիգ տարիների ընթացքում ճորտ կամ գերի՞ դարձաւ, չբողոքե՞ց. Ո՛չ, նա բողոքեց, բայց բողոքը, արդար ճիչերի ձայնը արձագանգ չգտաւ «Բուրժուազիաների» Հայրենիքում, քաղաքակիրթ Եւրոպայում. Չապստամբե՞ց. Ո՛չ, նա ապստամբեց, նա վերցրեց իբրեւ իդէալ ազատութիւն խօսքը և ձգտեց դէպի այդ իդէալը, այդ գաղափարը, նա ցանկացաւ արեան գնով ընդունել, գրկել այդ ազատութիւնը, և հաւատացէք, որ այդպիսի մէկ ազգ, այսօր չէ վաղը կ՚հասնի այդ գաղափարին, իւրեն սրտի իդէալին. Մի ազգ որ չի ցանկանում ստրուկ ապրել, մի՛ ազգ, որ գիտէ արտադրել այդքան հերոսներ, որոնց կեանքը մէկ մէկ արիւնոտ ռոման է, հաւատացած եմ որ կ՚հասնի իւր նպատակին։

Լ. ՏՕԼՍՏՕՅ

Թարգմ. Ռուսերէնից

ՀԱՅ ՀԵՐՈՍԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Ա.

Երեկոյ էր, Վ. գիւղի մէկ տան առաջ նստած նէի մէկ Օրիորդ ու երիտասարդ. մերթ խօսում էին, մերթ թագաւորում էր լռութիւն, որի միջից լսւում հեկեկոցի ձայներ։ Օրիօրդը ընդհատում է լռութիւնը և ասում.

— Ո՞ւր պիտ գնա՛ս. իմ Թանկագին, մի գնա աղաչում եմ, թող որ քո տեղը ուրիշը գնա։

— Ո՛չ. պատասխանում է երիտասարդը ի՞նչպէս չ՛գնամ, ես էլ հայ եմ, ես էլ զգացում ունեմ. հար երիտասարդը պէտք է անպատճառ զգացում ունենայ։ Դո՛ւ, իմ հրեշտակ, վերադարձիս սպասի՛ր, աղօթիր, աղօթիր ինձ համար։ Եթէ ո՛ղջ մնամ, եթէ ողջ վերադառնամ, այն ժամանակ միայն մեր նպատակը կ՛իրագործւի։

— Իսկ եթէ չ՛գա՞ս, եթէ քեզ սպա՞ննեն, ինձ ո՞րին ես յանձնում անգո՛ւթ. չես խղճում քո ծերացած ծնողներին, ի՞նձ էլ չե՛ս խղճում. ա՛հ անխի՛ղճ, իէթ քո սիրոյ կրակով ինձ պէտք է այրե՞ս, մաշե՞ս։

— Ո՛չ, սիրելիս, մի յուզուիր, մի յուզուիր իմ հրեշտակ, ես ուխտել եմ գնալ, օգնել այն տառապեալ ազգին իմ կարեաց չափ. թո՛ղ իմ արիւնս էլ խառնուի այն միւս հերոսների արիւններին։ Պիտ գնա՛մ, իմ արիւնը թափեմ այն նուիրական հողի վերայ. իսկ եթէ բախտը ժպտայ երեսիս. ողջ վերադառնամ, այն ժամանակ գոհ սրտով կիրագործեմ նպատակս։ Ա՛խ նպատակ. նպատակ. որի մէջ պարունակւում մէկ մարդու կեա՛նք, մէկ թշուառ մարդու կեանք։ Ի՛մ թանկագին. ճիշդ է շատ դժուար է քեզանից հեռանալ, սիրտս մաշւում է, գլուխս պտտւում երբ յիշում եմ որ պէտք է բաժանուեմ քեզանից...։

Իմ աննման, դու չ'կարծես որ քեզ կարող եմ մոռանալ, ո՛չ, եթէ ես պաշարուած լինիմ. եթէ ես ընկնիմ թուրքի անարգ գնդակից, քո անունը տալով պէտք է վերջին շունչս փչեմ։

Ա՛խ անգութ գի՛շեր։ Աստղերն էին նայում երկնքից իրենց կախարդիչ աչիկներով, իսկ լուսինը նայում էր մո՛ւթը խաւար երկնքից լո՛ւռ, անխռով և վկայ էր կանգնած հայգուկի ու օրիորդի մէջ, գլխամաշ իւր փայլուն շողերը ձգում էր այդ զոյգի վերայ, և անցորդները նայում էին հետաքրքրուած, ու պարզ կարողանում էին հասկանալ երիտասարդի ճակատից և դժգոյն դէմքից, նրա վճռական դեմքը. իսկ միւսի վրայից կարելի էր հասկնալ, որ նա՛ սիրոյ կրակով տանջըւած ու մաշուած մի դէմք էր, մի մելամաղձոտ դէմք։

— Լսի՛ր, հոգի՛ս, մի՞թէ մենք չե՞նք կարող ընդմիշտ միասին ապրել մինչեւ յաւիտեան, և սիրոյ երջանկութեան մէջ կեանքը վայելել։

Ձայնը վշտի շեշտ ունէր. մէկ օրիօրդի սիրտ էր ասողը, մէկ յուսահատ օրիօրդի սիրտ՝ իւր վառ ըղձացումներով։

Երիտասարդը ուղւած, ընկճուած ձայնով պատասխանում է ոտանաւորով։

— Ո՜հ ի՞նչ ծաղր, ո՜հ ի՞նչ ծանակ,
Պիտի նիւթեմ ինձ համար,
Թէ մոռնամ հայրենիքս
Սէրդ դրկեմ վշտահար։

Կռւում էին երկու սրտեր, մէկը՝ որ այրուած էր մհայրենիքի սիրով, թշուառ Հայաստանի կրակով, իսկ միւ՞սը, միւսը անհատական սիրով որ բուն էր դրել դեռ նոր բացւած սրտի մէջ, ու տանջում էր նրան, մէկը մէկից վառ, մէկը միւսից զգայուն։

— Լսիր, սիրելիս, ասում է երիտասարդը, դու ինձ խնդրում ես որ չ'գնամ, մնամ այստեղ և իրագործեմ մի այլ ծրագիր։ Մի՞թէ ամուսնութիւնը այդպէս հե՞շտ էք կարծում. մէկը որ երիտասարդ է մանաւանդ հա՛յ երիտասարդ, նա՛ ամուսնանալու ոչ մի բարոյական իրաւունք չունի մինչեւ որ իւր խղճի պարտքը չ'կատարի։ Մենք չենք ցանկանում որ հայերը աւելանան, և ամբողջ տեղերքը լցւի անբախտ, և թշուառ հայերով, առանց այն էլ ամէն երկիր լցւած է թշուառ հայերով։ Հայ երիտասարդը չպէտք է ամուսնանայ, այլ պէտք է գնայ հեռո՛ւ, շատ հեռո՛ւ, Մասիս սարիցն էլ հեռո՛ւ, դէպի Վասպուրական, դէպի Խանա՛սօր, դէպի Սասուն, այն թշուառների լացով պէտք է առողջացնի իւր վէրքերը, նոցա ուրախութեամբ պէտք է հրճւի նրա վիրաւոր սիրտը. վերջապէս նա այնտեղ, այն արեան դաշտում պէտք է ամուսնանայ թշնամու գնդակով։ Ամուսնութիւնը ի՛մ հրեշտակ, մէկ պատիւ է, յարգանք, այն էլ պատկանում է հայ հերոսին։ Ա՜խ լսո՞ւմ ես այն ձայները, որ գոռում են մի՛շա անընդհատ իրենց անշուք հողաթմբերից, վրէ՜ժ, անէ՜ծք դաւաճաններին, անէծք անզգայ Հային։

Կա՞րող ես երեւակայել, իմ հրեշտակ, մէկ րոպէով որ ես անցնում եմ մեր գերեզմանների մօտո՛վ, կարծես թէ լսում եմ այդ անշունչ գերեզմաններից. --Մահ բռնա՛կալին, մահ դահիճներին, հայ երիտասարդներ մի՛ք կուրանալ մենք դեռ չենք հանգստացել. արիւն է հոսում Հայաստանի գետերով, մեր սիրտը դեռ վրէժի կարօտ է, հանգստացրէք մեզ հա՛յ ժողովուրդ. Լսի՛ր սիրելիս. դու կ՛համոզւիս որ կայ մէկ սէր, որ սէրերից վեհագոյնն է, կայ մէկ իդէալ, որ ամէն թշուառ մարդ պէտք է հետեւի այդ իդէալին.

Եթէ կայ մէկ երջանկութիւն այն էլ՝ հայրենիքի, ազատութեան. սահմանադրութեան և հաւասարութեան սէրն է, սէ՛ր որ սէրերից ամենայվեհագոյնն է.

Ո՞ւմ համար ամուսնանամ ի՛մ հրեշտակ, ո՞ւմ համար սուն ու տեղ դնեմ, ինձ համար թէ՞ թշնամու համար.

Լսի՛ր, սիրելիս, Հայաստանում է՛լ չ՛պղծուած օջախ չ՛մնաց. Եկեղեցիներ չմնաց, կոյս աղջիկ չմնաց. փչացաւ ա՛յն ամէնը, ոտնակոխ արին, հիմնահատակ արին խորտակեցին ա՛յն ամէնը որը՝ պատկանում էր հայ երիտասարդին։ Որի՞ համար է ապրում ժամանակակից երիտասարդութիւնը. Թող իմ մայրն էլ Անօյի նման, Զիչօյի նման սեւ հագնի, ինձ համար դո՛ւ էլ սեւ հագիր, իմ հրեշտակ, դո՛ւ էլ, եթէ սիրում ես ինձ հարազատ սրտով սպասիր իմ դալստեանը. եթէ ողջ մնացի կ՛վերադառնամ ու կ՛կատարեմ, կիրագործեմ այն երկրորդական ծրագիրը, որի համար դու ես ըսպասում.

Օրիորդը իրաւ որ հասկցաւ գործի եղելութիւնը. Նրա սիրտն էլ վառւեց հայրենիքի կրակով, Նրա աչքին երիտասարդը աւելի եւս դուր եկաւ. որովհետեւ նա պէտք է ամուսնանայ, ո՛չ թէ սովորական երիտասարդ-

հետ, որոնք իրենց օրերը, ժամանակները վատնում են շռայլութեամբ, այլ մէկ ուրիշի հետ, հայ հերոսի հետ, որի համար թանգ է, մեռնել թշնամու գնդակով, անտէ՛ր, անտիրական սարերի կուրցքին, ձորերի միջին, քան թէ մնայ տանը և սովորական երջանկութեան մատնուի այս աղտոտ աշխարում. Օրիորդը չէր խօսում, այլ լո՛ւռ մունջ նայում էր երիտասարդի կրակւած դէմքին, որի վրայ կարելի էր հասկանալ փրկո՛ւթիւն, ազատո՛ւթիւն, անէծք թշնամուն. Նայում էր օրիորդը և արտասուքը հեղեղի նման՝ ողողում էր նրա՝ մարգարտեայ այտերը ու թափւում երիտասարդի ձեռքերի վերայ. Օրիորդը նայեց լուսնին մի այնպիսի հայեացքով, որ կարծես ցանկանում էր յայտնել իւր նպատակը. — Ա՛խ լուսի՛ն, անգութ լուսին, երանի քե՛զ. դու զգացում չունես. նայում ես անտարբեր. Երանի քե՛զ լուսի՛ն, մի քանի օրից յետոյ դու պէտք է տեսնես այս հերոսին լեռներում, դաշտերում, անտէ՛ր անտիրական. Լուսի՛ն, քե՛զ եմ յանձնում իմ սիրելուն, խաւա՛րիս, մարի՛ այդ դժգոյն կայծերդ, եթէ անտէր անպաշտպան թողնես իմ սիրականին. Երանի ձե՛զ հա՛յ կանայք, որ ունէք քաջ զաւակներ, թշուառ Հայաստանի նախանձախնդիր զաւակներ.

Մի քանի վայրկեանից պէտք է բաժնուէին միմեանցից. Մէկը պէտք է գնար հե՛ռու, շատ հե՛ռու, իւր բախտը պէտք է ձգեր իւր ճակատագրի վերայ, իսկ միւսը պէտք է մնար, պէտք է սպասեր, պէտք է սեւ հագնէր սպասեր իւր հօր տանը։

Մի քանի վայրկեան տիրել էր լռութիւնը, երկուսով էլ ընկել էին մտածմունքի անհատակ ովկէանի մէջ, իրենց բախտը որոնում էին այնտեղ, իրենց բախտն էին փնտռում.

Երիտասարդը մօտեցաւ օրիորդին, կցկտուր ձայնով, արտասուքը աչքերին ու ասաց.

— Մնաս բարեաւ ; իմ հրեշտակ, կաց դու հանդարտ, անկասկած. ուշ է արդէն գնա՛յ, աղօթիր ինձ համար, որ ողջ վերադառնամ։ Իսկ ես իբրեւ բաժանման, նուիրականութեան մէկ ուխտ, պէտք է երգեմ մի՛ երգ, որ ինձ պէտքէ մխիթարէ արեան դաշտում, իսկ քեզ ձեր տանը

Խաւարիմ ես ինչպէս գիշեր,
Իմ չորս կողմն փոթորիկ,
Չե՛մ, սիրում քեզ չե՛մ սիրում քեզ,
Ես սիրում եմ հայրենիք.
Այնտե՛ղ, անտե՛ղ անթիւ մայրեր,
Հրդեհորոյս ծնողներ,
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր
Թափում են սուք արցունքներ.
Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր,
Ես շատ ու շատ փոխուել եմ,
Առ թաշկինակդ աչքերդ սրբիր,
Ես քեզ սիրել կարող չեմ.
Մնա՛ս բարեաւ, իմ հրեշտա՛կ,
Սէրդ լինի ինձ խրախոյս,
Այլ արտասուքս ես պիտ թափեմ,
Ու դառն վշտերս սփոփեմ։

— Ո՛հ ի՛մ սիրելիս, այսուհետեւ քեզ տեսնելու չե՛մ, ինձ համար չէ այսուհետեւ աշխարհի ոչ մէկ զւարճութիւնը, ես անբախտ եմ, անբախտ եմ այսուհետեւ. կրակւիր երկիր, քուլ դարձիր երկինք, որ ես զոհ լինիմ դժոխքի բերնին. Սարեր, ջա՛ն սարեր, քարեր, ջա՛ն քարեր, մեռնիլ եմ ուզում, այրւիլ եմ ուզում.

— Մի յուզուիր իմ թանկագին, ուրախութեամբ ճանապարհ դիր ինձ, որ կարողանամ ուրախութեամբ հետ գալ.

— Շատ լաւ, ի՞նչպէս ուրախութեամբ ճանապարհ դնեմ քեզ, իմ սիրտս քարի՞ց է ձուլուած. Ես կորցնում եմ մէկին, մի այնպիսի երիտասարդի որ ինձ համար սուրբ է, պաշտելի է. Վերջապէս օրիօրդը խելագարի պէս, սիրտը լեցուած սիրոյ հրդեհով, մօտեցաւ երիտասարդին, Մնաս բարեաւ ասաց ու սկսեց ողբալ, կարծես գերեզմաններն էին գնացել, ու ողբումէր իրենց մէկ կորցրած ազգականի վերայ. Բաժանւեցան միմեանցից ինչպէ՛ս հոգին մարմնից. Այս տեսարանը, այս ցաւալի տեսարանը կզգան այնպիսի մարդիկ որոնք ունեցել են իրենց սրտում սէր ասած բանը և որոնք ճնշւել են այդ սիրոյ մէջ և ճանապարհ են դրել իրենց սիրելուն, մի այնպիսի ճանապարհով որ մի գուցէ անդառնալի կ՚լինէր.

Բայց ո՞վքեր էին այս հաղուադիւտ զոյքերը, կը հարցնեն անշուշտ ընթերցողները. Այդ զոյքերից մէկը Մարգար աղայի որդի Իգիթն էր (կեղծ անուն) առոյգ, միջահասակ, որ աւարտելով Գէորգեան ճեմարանը, աւարտել էր նաեւ Բեդերբուրգի մէկ Ռամալսարան և հետեւել էր Մանկավարժական ճիւղին. Իսկ միւսը Տէր Ա.ի աղջիկն էր, օրիօրդ Վարդուհին, որ նոյնպէս Գիմնազաւարտ էր ու հետեւում էր Փիլիսոփայութեան ճիւղին.

Երկուսն էլ տխուր տրամադրութեամբ վերադարձան իրենց տները. Օրիօրդ Վարդուհու այդ դրութիւնից մայրը հասկանումէ որ մի ի՛նչ որ բան է պատահել, ինչքան հարցնումէ բայց այդ երեկոյեան օրիօրդը ոչինչ չէ պատասխանում ու տխուր, տրտում, մօրը բարի գիշեր մաղթելով գնում է իւր առանձնասենեակը, փակում դուռը ու սկսում լալ. ու այդ դրութեան մէջ էլ ընկնումէ Մորփէոսի գիրկը.

Միւս օրը պատրաստում էր մի խումբ երիտա-

թարներ, որոնց երեսներին դէռ մազ էլ չէր բուսել։ Իգիթը յայտնում է իւր ծնողներին որ գործով պէտք է գնայ մի աւրիշ քաղաք, մի քանի օր կ'բացակայի իւր հարազատ տնից, իւր ծերունի ծնողներից։

Մի քանի օրից արդէն անցնում էին Կովկասեան լեռներով մի խումբ, դա՛ երիտասարդներ Իգիթի խումբն էր։

Իսկ լուսինը նայում էր երկնքից իւր կեղծ, հեգնական ժպիտով՝ յիշելով խմբապետի անցեալը։

Ահա մէկ բլրակ, երիտասարդները աշխատում էին հասնել այդ բլրակի վերայ. լոյսը բացուելու վերայ էր։ Դրանք ցորեկը պէտք է անցկացնէին այդ բլրակի վերայ, նրա խորշերում, որ մարդ չ'տեսնէր, իսկ գիշերը պէտքէ գնային իրենց ծրագրած տեղը։ Հեռուից երեւում էին գիւղեր, հայերի ու քիւրդերի խեղճ ու կրակ խրճիթներ, որոնց մէջից պլպլում էր ճրագի աղօտ լոյսը։

— Տղերք ասումէ Իգիթը, ձեզանից ո՞րը կարող է գնալ հաց ճարելու, շատ քաղցած ենք, գոնէ կշտանանք, ո՞վ գիտէ, մթութեան մէջ թագաւորողը չարիքնէ, Աստուած գիտէ թէ ի՞նչ կարող է պատահել։ Լաւ է հացի պատրուակով գիւղի ճանապարհները աչքէ կանցնէք, գիւղի գաղտնիքն՛րի հետ կ'ծանօթանաք, որպէս զի նեղութիւն չքաշենք։ Երիտասարդներից երկուսը գնում էին հաց ճարելու, իսկ խմբապետը վերցնումէ իւր հրացանը, գնում մի քիչ հեռու ընկերներից, պառկում է կանաչի վերայ. Օրը շատ պարզ էր.

Ա՛. աչքերը յառում է դէպի լուսինը, որ կարծես թէ յիշեցնումէ այն տխուր վայրկեանները այն ցաւալի րոպէները։ Խմբապետը յիշումէ, յիշումէ այն նուիրական երեկոն. յիշումէ երգի այն տողերը որ ասում էր սէրդ լինի ինձ խրախոյս։ Գյո՛, ես պէտք է խրախուսվիմ նրա՛ սէրը յիշելով։

Ցանկարծ լսումէ գիւղի կողմից հրացանի տրաքոց

Իգիթը կաթւածահարի պէս վազումէ դէպի իւր ընկերները։

— Տղերք, մեր ընկերները պաշարուած են, շո՛ւտ դէպի գիւղ. առանց ժամավաճառ լինելու.

Բոլորը մէկէն գրո՜հ տուին դէպի գիւղ։

Մութ գիշեր էր... շները սկսեցին ոռնալ, կարծես այդ կենդանիները ուզում էին հասկացնել իրենց ընկեր քիւրդերին՝ այս անակնկալ հիւրերի գալուստը։ Միւս կողմից էլ շների հաչոցի ձայները միացած հրացանների ձայնին. կատարեալ մէկ համերգ էր դարձած, իսկ բեգը. այդ համերգով խրախուսուած հրամայում էր կոտորել խեղճ ու կրակ գիւղացիներին, բայց ի՞նչու, ի՞նչ նպատակաւ.... Իսկ ինքը բազմել էր գիւղամէջի մէկ ծառի տակ քարի վերայ։ Ա. գիւղի բնակիչներին կոտորել էր ցանկանում արիւնարբու բէկը. ո՞վ հրաման ունէր հակառակելու, ո՞վ յանդգնութիւն ունէր, չկատարելու.

Մէկ ձայն էր լսւում, մէկ ահռելի ձայն, որ քարերին նոյն իսկ սարսեցնում էր։ Գոռում էր գոչում մէկ ծերունի — Աստուած սիրող օգնե՛ցէք, տունս քանդում են, օճախս պղծում են, իմ դարերով սուրբ մնացած օջախը։ Աղջկանս տանում են։ Սրբուհի, հոգի՛ս, մի գնայ, թող ինձ սպանեն քո տեղը, թող իմ տունս քանդեն, քեզ չ'տանեն։ Անգութներ թալանեցէք ինձ, ինչ որ ունիմ տարէք, ձեզ հալալ լինի, միայն իմ նամուսս մեք կպնի, իմ աղջկանս մեք տանի։ Աղջիկ եմ պահել աչքիս լոյսի պէս որ ահաբէկ բէգին փա՞յ լինի։ Աստուած սիրող օգնո՜ւթիւն։ Աստուած գոնէ դու խղճա։ Գոռումէ խեղճ ծերունին, բայց ո՞վ պէտքէ օգնութեան հասնի, որի՞ տունն է հանգիստ. որի՞ օջախը չըքանդեցին. որի՞ վաթանը հիմնահատակ չարին. Եթէ

կար մի քանի տներ մնացած. չաւերուած. նրանք էլ սպասում էին բոպէ առ բոպէ քայքայման, աւերման։

Յանկարծ տեսնես Երկինքը տրաքուեց, փուլ եկաւ, կամ մէկ ամպ ճղուեց, երկիրը ժաժկ եղաւ, տասնեակ հրացաններ մէկէն տրաքեցան։ Եա Սուրբ Սարգիս գոռալով ընկան աւազակների մէջ, յանկարծակի բերին։ Մեր հայդուկները, չնայելով քիչ էին բայց այնպէս համազարկ տուին որ քիւրդերը կարծեցին թէ մի քանի հարիւր հոգի պաշարել են իրենց։ Կռիւը շատ տաք էր...։ Էլ միմեանց չէին ճանաչում, այլ երկու կողմից էլ ոգեւորուած կռւում էին։ Քիւրդերից մի քանիսը գնում են շան պէս հեւալով ընկնում բէգի մօտ ու սարսափահար ասում, «բէ՛կ, պաշարուած ենք»։

«Էրա՛կ» որոտումէ բորէնի բէկը։ Սկսում են նորից ոգեւոր իլ, ձա՛յն, աղաղա՛կ, կանանց, և երեխաների ճիչերի ձայները, խառնուած էին միմեանց և թնդացնում էին ամբողջ սարերը ու ձորերը։ Քիւրդերը տեսնում են իրենց կողմից անընդհատ ընկնում են, սթափուելով տեսնում են որ իրենց վնասը շատ է, թողնում ու փախնում պատերազմի դաշտից։ Աւարը թողնում են թափթփուած գիւղի մէջ։ Քիւրդերից սպանուածների թիւը աչքի ընկնող բազմութիւն էր կազմում, այն ինչ հայդուկներից մէկը, թեթեւ վիրաւորուել էր թեւից։

Երիտասարդները այդ գիւղից լերցնում են իրենց համար հաց ու պանիր գնում են նոյն բլրակի վրայ նստում և հանգիստ սրտով ճաշում, որովհետեւ առաջի արշաւանքը շատ յաջող էր անցել։

Այդ գիշեր չհանգստացաւ Ա. գիւղը, ժողովուրդը սարսափի մէջ էր։ Երկիւղը մահուան սարսափի պէս տարածուել էր այդ խեղճ ու կրակ գիւղի վրայ։

Իգիթը նայեց երկնակամարին, տեսաւ որ աստ

2056-20

ղերը չուել են իրենց աչիկները մութը հորիզոնի միջից և նայում են այդ խեղճ ու կրակ գիւղերի վրայ որոնք անկումէին կոտորածի թալանի չար ձեռքերից։ Իսկ աստղերի աչիկները ինչպէս դատաճանի աչիկներ ցանկանում էին հասկացնել գիւղացիներին թէ իրաւացի է, դուք վախկոտներ էք, իսկ վախկոտ մարդիկ առհասարակ զուլումի են ենթակայ դառնում։ Իսկ բնութիւնը, անգութ բնութիւնը չէր ցանկանում իր խաւար վերմակը վերցնել աշխարհի վերայից, այդ խեղճ ու կրակ աշխարհի վերայից, որովհետեւ ամաչում էր երկինքը, ամաչում էր երկրից, իր անգթութեան համար

Նոյն երկնքի տակ է որ ապրում են պախտաւոր մարդիկ, նոյն երկնքի տակ է որ ապրում է անզգայ և փառամոլ Եւրոպան, և նոյն երկնքի տակ է որ ապրում է բուրժուայ Ամերիկան։ Այդ բոլորը տեսնում է երկինքը, այդ անգութ երկինքը, որի վերայ է բարդուած միլիոնաւոր թշուառ մարդկանց յոյս Երբ այդքան ցաւ, ու արիւն կայ աշխարհում, և դու նրանց անխնամ աչքով ես նայում, ոչ գա՛հ պէ՛տք է, և ոչ Աստուած երկ՛քում,

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна

Բ.

Լոյսը բացւեցաւ ։ Դեռ Ա․ գիւղի մէջ տիրում էր անհանգստութիւն․ նորից լաց, կոծ, շիւան։

Լսւում էր որ քիւրդերը նորից պատրաստւում են յարձակւում գործելու, թալանելու։ Խեղճ ժողովուրդը սարսափի մէջ էր, սարսափում էին նաև քարերը, Թփերը, դեռ արիւնի հոտը չէր կ'տրւել, դեռ արիւնի հոտը չէր չորացել Ա․ գիւղի փողոցներում, և ահա պէտք է նրան հաջորդէր մի աւելի մեծ աղէտ, մեծ կոտորած։

Հաւի գլուխը դժւար էր կտրել, քան թէ մէկ հայ գլուխ։ Գիւղը այդ սարսափով ընկճւած, մեր հայդուկները սկսել էին իրենց հրացանները մաքրել և կարծես թէ սպասողական դրութեան մէջ էին։ Խմբապետը ուղղեց աչքերը դէպի բլուրի ստորոտը և ի՞նչ տեսաւ․ գալիս է դէպի իրենց մի դէմք, վազում, հեւում, կանգնում, հանգստանում, նորից հետ նայում, ու աւելի մեծ ուժով վազում, մագլցում է քարերի վերայով։ Մօտենումէ դէմքը, մէկ օրիորդ, մէկ հրաշալի գեղեցկուհի, մէկ Սասունցի հերոսուհի՛։ Մազերը փռւած ուսերի վերայ, մէկ երկար զգեստ հագած․ ահա՛ նրա բոլոր հարստութիւնը, որից կարելի էր սակնալ որ օրիորդը, անկողնի միջից էր փախած։ Ծանդրատում էր օրիորդը․ բռնում քարերից և բարձրանում էր իւր փրկարարների մօտ։ Օրիորդը բարձրանում էր և իր հետ բարձրացնում էր իւր անարատութիւնը, իւր անմեղութիւնը, ցանկացել էր իւր պատիւը բարձրացնել բլուրի բարձրութեան։

Այս հանելուկը կարելի էր հասկանալ այսպես․ գիշերը ահագին աղետից յետոյ, յարձակւած են եղել

միջի այլոց այդ օրիորդենց տան վերայ, բռնաբարելու հերոսուհու պատիւը։ Իսկ օրիորդը փախնում էր դէպի բլուրը, դէպի իւր փրկարարները։

Չգիտեմ թէ ո՛ր տեղից էր իմացել, որ արծիւը իւր բոյնը շինել էր այդ քարափների մէջ, և իր ձագերին տեղաւորել այն տեղ։ Հասաւ օրիորդը շնչասպառ մի քանի վայրկեան, ամաչում և չէր խօսում։ Յանկարծ ուշքի եկաւ և ասաց․ «Եղբայրնե՛ր պաշարւած էք, նայեցէք բլուրի միւս կողմում, գալիս են քիւրդերը էսկերների հետ միացած»։

Խմբապետը նայեց որ ճիշտ եթէ մի քանի վայրկեան անտարբեր գտնուին կորած են յաւիտեան։ Քիւրդերը տեսնում են որ խումբը աներկիւղ կանգնած է սարի վերայ, սկսում են հրացանազարկ․ բայց մեր երիտասարդների կողմից ոչ մի ձայն։ Քիւրդերը բաւական մօտենում են և ցանկանում են որ շրջան կազմեն, յանկարծակի բերեն, հայդուկներին Յանկարծ լսւում է Իգիթի բարձր ձայնը — Տղերք կրա՛կ․ ու սկսւմէ կատարեալ կռիւ, պատե՛րազմ Չնայելով մեր հայդուկները երեկոյեան կռւից դեռ չ'հանգստացած յաջորդւմէ մի ուրիշը որը կարելի է ասել որ աւել՝ սոսկալի էր։ Իգիթը նայում տեսնում է որ Ս․ գիւղից, գալիս են երիտասարդներ, ծերեր, պատանիներ, որք ձեռքում հին չախմախլը՝ հրացան, որին փայտ, քար, երկաթ, խանճկալ, մի խօ քով ինչ որ ընկել է ձեռքերնին առել ու վազել են կռւի դաշտը, որպէսզի օգնեն թէ իրենց, և թէ՛ հայդուկներին

Բայց ի՞նչ զարմանք։ Իգիթը տեսնում է որ իրեն կպած, կռւում է մէկը, կատաղաբար գլորում է անզգարգ վայրենի քիւրդերին, անխնայ Դա՛ օրիորդն էր Սասունցի օրիորդը․ քարի՛ց ծնւած, և ժայռից սնւնդաւած․ դա Մարօն էր, օրիորդ Մարօն։

Մարօն տեսնում է որ իւր ոտքերի տակ թաւալւում է Թուրք զաւթիայի դիակը որ ընկել էր բաշխմբապետի հրացանից, ամենայն ճարպկութեամբ վերցնում է նրա հրացանը ու սկսում պատերազմել թշնամուն դէմ առ դէմ։ Այն փափկասուն սեռը, որը միայն գիտէ գուրգուրանք, փաղաքշանք, այսօր հրացանը ձեռքին պատերազմում է թշնամու հետ. օգնում է իւր եղբայրներին, այն կանացի սեռը, որոնց մարդիք կարծում էին թուլամորթ, վախկոտ, այսօր նրանց սեռից մէկը ահ ու սարսափի մէջ է ձգել անպատիւ Թուրքերին, և քիւրդերին։

Այն սեռը որ գիտէ միայն սիրուիլ, կամ սիրել, այսօր մոռացած սիրոյ երջանկութիւնը, սիրոյ փառքը, սիրոյ բարձր յատկութիւնը, ու սրտի թոյնը թափում է իւր թշնամու վերայ, իւր պատիւը պաշտպանելու, իւր ցեղակիցների յարգը բարձրացնելու մեր աչքին։

Խմբապետը տեսնում է օրիորդի քաջութիւնը, խրախուսում, քաջալերում, մանաւանդ օրիորդի խրախուսական խօսքերը, որ ասում էր, գոռում էր սրտեան դաշտում. «Ախպրտի՛ք քաջա՛ցէք, ես՝ Սուրբ Կարապետ, տիրամէր դո՛ւ օգնես։ Այս խօսքերը խնդրանքի, աղաչանքի խօսքեր չէին, այլ՝ զայրոյթի, հրամայական խօսքեր։ Քիւրդերը սթափելով տեսնում են որ իրենք պաշարուած են, սկսում են հետ հետ փախչել։

Քիւրդերի վնասը շատ զգալի էր, մօտ վաթսուն հոգի. իսկ հայդուկներից երկու հոգի միայն, և երկուն էլ թեթև վիրաւորուած։ Բաւական զգալի կորուստ ունեցան, Ս. գիւղի երիտասարդների կողմից, որովհետև փայտով ու քարով զէնքի դիմացը կանգնելու շատ մեծ ուժ պէտք էր։

Արեան գետեր էին կազմուել, որոնք յորձանք տալով գլորւում էին բլրակի վերայից դէպի ձորը ու ողողում նրանց՝ վիրաւորուածների վէրքերը։ Ս. գիւղի կանայք սև էին հագել, փետում էին իրենց մազերը։ Իսկ բնութիւնը, կարծես զգացել էր այդ թշուառների դրութիւնը, և իւր անգութ կուրծքը ճղելով, թափում էր անձրևի հեղեղ, կարծես ինքն էլ էր լալիս այդ թշուառների վերայ. կանաց լացը, արտասուքը, և անձրևը խառնուած միմեանց, նզովք էին կարդում, անէծք էին կարդում չար թշնամուն, և իրենց Սատուծոյ գլխին։

Կռիւը հանդարտեց։ Իգիթը վերցրեց իւր ընկերներին, ու եկաւ հօ գտանալու. բայց չ'կային՝ Թանկագին, և անմահ Յովհաննէս, և Մելիք ընկերները, բայց նրանց տեղը կանգնած էր լեռնային ոգին, քաջ— հերոսուհին, Օրիորդը մօտեցաւ վիրաւորուած երին, որոնք ընկել էին թշնամու անյարգ գնդակով, մօտեցաւ, ընդմիջաց իւր խոռված շրթունքներով

«Սի՛ս, հա՛յ աշխարհ, մի չես ե՞րբ, մի՛ չես ե՞րբ արեան վայր դառ՛ա..

«Ո՞վ է մնել, որ Հայը դառնայ գերի անյարգ չէյթանի ձեռքում, մի թէ՞ Աստուա՛ծ, ո՛չ, չեմ հաւատար, միթէ Աստուած այդքան անգո՞ւթ է, որ իւրև ճակատագիր դրօշմել է Հայի ճա տի՛ սարուկ խօսքը»

«Ո՛հ, ո՞ւր ես վրէժխնդրութեան Աստուա՛ծ, եթէ կաս, դուրս արի ասպարէզ, բա՛ց աչքերդ, տե՛ս որ մենք ստրուկ չե՛նք, և չենք ցանկա ում ազատութիւնը մուրալ, այլ կուզենք վերջանալ, կամ կռւով փրկութիւն ստանալ»։ Խօսում էր օրիորդը, ոգևորւում, իսկ երիտասարդները շւարած նայում էին լեռնուհու դէմքին, թէ ինչպէս խօսքերը կարկուտի արագութեամբ թափւում էին նրա բերանից, ինչպէս մէկ հռետորի

Օրիորդը բարկութիւնից սկսեց լալ, և լացի հետ միասին լսւում էր այս կցկտուր խօսքերը. «Նայիր երկինք, նայի՛ր այս հերոսների վրայ, որոնք քո անգըթութեան զոհը դարձան, կռւեցին, քաջի պէս ընկան, եթէ կայ խնայելու արդարութիւն, դուրս արի, օգնիր մեզ Աստուած ոխերիմ Հայի Աստուած մինչ ե՞րբ քնես, բաց աչքերդ մեզ նայիր, մեր երօ՛ը եկեղեցին այշներից ազատի՛ր» Այս անէծքը վերջացրեց, ծունկ չոքեց երիտասարդների անշունչ դիակների մօտ. Իւր երիտասարդները շրջապատել էին վիրաւոր ընկերներին, ու ողբում էին իրենց կորստեան մասին. Երիտասարդներից մէ՛ը՝ որ դեռ ողջ էր, բացաւ իւր ծանրացած աչքերը, բռնեց Իգիթի ձեռքը ու նայեց դէպի օրիորդը, իւր վիրաւոր աղերսալի ձայնով, ցանկանում էր գէթ վերջին անգամ խօսել, վերջին հրաժեշտ տալ իւր ընկերներին, վերջապէս իւր վիրաւոր ձայնով ասաց «Օրի՛որդ, պաշտելի քոյրս, ես դեռ չէի կարծում որ այդ թոյլ ցեղից — սեռից, կարող են դուրս գալ մարտիկներ, կին մարտիկներ. Սիրելի, թանկագին քոյր., ես հոգեվարքի մէջ եմ, և ուրախութեամբ պէտք է փչեմ հոգիս, որովհետև տեսնում եմ որ ինձանից թոյլ էակը կռւում է թշնամիների հետ քաջութեամբ. Ընկե՛րներ, սիրե՛լի ընկերներ, կռւեցէ՛ք, հետևեցէք մեր օրինակին, առէ՛ք մեր վրէժը, այն ժամանակ միայն մեր ոսկորները կ'հանգստանան»

Այս խօսակցութեան մէջ, կտրւեց պաշտելի ընկերոջս ձայնը, լսւում էր միայն խռխռոց — որ կարելի էր հասկանալ, — Մնաք բարե՛ւ, իմ սիրե՛լիք, վրէ՛ժ թըշնամուն, անէծք դաւաճանին, կեցցէ Յեղափոխութի՛ւն, փառք իւր Դրօշակին.

Ընկերներս սկսեցին գերեզման փորել, գերե՛զման, հայրենի գերեզման. Հեռու իրենց ծնողներից, հեռու ազգականներից, հեռու բարեկամներից. Յանձն էին առել ազգի դատը պաշտպանել, այդ դէրքով մեռնել. մեռան, զոհւեցան ընկերները իրենց հետ տանելով իրենց նպատակները, իրենց երիտասարդ սրտի մուրազները Պատրաստեցին գերեզմանները երկուսին էլ միմեանց փաթաթւած գերեզման իջեցրին.

Օրիորդը մօտեցաւ, իբրև կրօնական աղօթք, մրմնջաց մի քանի խօսքեր «Կրակւէ՛ք, սարե՛ր, քո՛ւլ դարձէք ձորեր, երկինք ու երկիր ժեռ ու պինդ քարեր. մենք անգութ քուրդից դաղարգին եղանք մահւան սարսափից այս տեղերն եկանք «Թէ այդքան ցաւ, դարդ պիտի մնացի աշխարհում, ո՛չ դա՛հ պէտք է, և ոչ Աստուած երկնքում»: Վերջացրեց օրիորդը աղօթքը, աւելի շուտ նզովքը. մօտեցան մի քանի կաթիլ արտասուք թափեցին անմահ մարտիկների հողաթմբերի վրայ ու սկսեցին գնալ, — չնայելով շատ դժւար էր բաժնւել այդ անշունչ հողաթմբերից բայց պէտք է գընային, վրէժ լուծելու. չէ՞ որ նա ասաց, այն անմահ հերոսը «Ընկերներ առէ՛ք մեր վրէժը, այն ժամանակ միայն մեր ոսկորները հանգիստ կ'լինին:»

Ձեզ մտայութեան սև ամօթը ճակտիս, չլւացւած վրէժի զայրոյթը կուրծքիս, սար ու ձոր չափած այստեղ եմ ընկած. և պիտի համբուրեմ շիրիմները այ՛ն Սուրբ Նահատակների, թողութիւն պիտի խնդրեմ նրանցից որ ազատութեան կռիւների մէջ — սա՛ ը չ'մեռայ, և ապրում եմ դեռ......: Եւ գիշերները երբ անմահ նահատակները խօսում են միմեանց հետ, յայտնում են իրար իրենց վշտերը ու ցաւերը, նզովք են կարդում ամբողջ մարդկութեան գլխին, անգութ Եւրոպայի գլխին: Իսկ մեք կենդանի այդ ահռելի պատերազմներից, պիտի գնանք ծունգ չոքենք, համբուրենք, աղաչենք որ ներե՛ն մեզ, ներե՛ն բոլոր հայու-

թեանը։ Հայ ազգը չ՚գիտեր յեղափոխութեան ուժը, ներելի է մի այդպիսի ազգի, որ դարերից ի վեր խարխափւած էր խաւարի և ստրկութեան մէջ։ Գերմանական առածը ասում է « զատ գաղափարը, ազատ հոգին, ազատ երկրի մէջ է ծնունդ առնում »։ Ինչպէս առայդ միտքը առողջ մարմնի մէջ։

Գ.

Ջարդը վերջացաւ։ Խաւարը իջաւ, իջաւ երկնքից և ծածկեց աշխարհը։

Այն գիշեր մի հոգեմաշ գիշեր էր, սոսկալի... խաւարը շատ թանձր։ Ս. գիւղը ոչ թէ քնեց այլ մեռաւ։ Փողոցներում մարդ չկար, ոչ մի ձայն, կենդանութիւն ցոյց տալը այդ գիշեր, ոճիրներից մեծագոյնն էր։ Իշխողը մահն էր, բռնի, արիւնոտ մահը որ սարսափելի թեւերով սաւառնում էր վեր վեր, ազդում էր այն խեղճ ու կրակ գիւղերի վերայ, որոնք այդ օրը չ՚տեսած բաներ տեսան։ Քանի քանի օճախ մարեց, աչք չ՚մնաց որ արցունք չ՚թափէր, այժմ էլ մի սարսափելի լռութիւն կար. ոճիրով լցուած խաւարում։

Ս. գիւղի փողոցները, բլուրի վերայ գերեզմանատանը լցուած էին դիակներ... դիա՛կներ ահաւոր ու սարսափելի։ Վիրաւորները իրենց աչքերը չռել էին դէպի երկինքը, դէպի անգութ երկինքը և հարցնում էին թէ այսքան աղէտները ինչո՞ւ եղան, կամ թէ ո՞վ էր մեղաւոր։ Մի սոսկում կար այնտեղ, որ թափանցում էր ամէնից քարացած մարդու երակների վերայ։ Թշնամիները պահւել էին տներում այնպէս, ինչպէս որսի շները իրենց տներում

Ահա այդպիսի մի սոսկում էր տիրում խաւարում

ուր առաջ էր խաղում մեր հայդուկային խումբը, անվա՛խ, աներկիւղ, անցեալը մոռացած։

Գիւղին նոր էին մօտեցել երբ լսուեց մի ձայն, աղաղակ, և այդ աղաղակի հետ բարձրանում էր բոց, կրակի, հրդեհի բոց, որ այրում էր հայերի անշուք խրճիթները։ Հայդուկային խումբը խելագարի պէս առաջ էր խաղում, ար, քար, ձոր, չէին նայում գնում էին գնում, Հեռուից երեւում էին ստուերներ, խսկի նման փաւած. ի՞նչ է արդեօք ա՛հ փախչում էին....

Թշուա՛ռ ժողովուրդ մրմնջաց խմբապետը։ Դէպքը վտանգաւոր էր ու սոսկալի։

Յանկարծ լսւում է մի բարձր ձայն, գոռում էին հայդուկների հետեւից որ կանգնեն։ Քիւրդ կ նուրա-կա՛ի ձայն՝ էր այդ։ Կիմէ՞ն, գոռում է զինւորականը «— Մենք ձեր աչք հանողներն ենք»։ Պատասխանում է խմբապետը զայրացած։ «Կէալիմ, թէ սլիմ» գոռում է զինւորապետը Այդ խօսքին իբրեւ պատասխան խմբապետը գոռում է —Ք՚ղե՛րք, կայմ և պատրաստ, կրա՛կ։» Կրակ տալով, կռուելով մղում են քիւրդերին և թուրք էսքեարներին մինչեւ գիւղ։ Գի՛ւղ, միայն անունն էր մնացած, վառւում էր տնե՛ր. հարա՛յ—հարա՛յ. ձայների մէջ կորչում էր հրացանների պայթոցի ձայները։ Բացի այդ ձայները, կար մի ուրիշ ձայն ես որ սարսափեցնում էր արդէն սարսափահար ժողովրդին. այդ բայղուշի ձայնն էր, որ կանգնել էր գիւղամէջի մեծ ծառի գլխին՝ ողբում էր իւր չարագուշակ ողբը, որ կարելի էր հասկանալ նրա ողբից, զո՞ւլում, զուլում է սպասում խեղճ ու կրակ հայ գիւղացիներին։

Այդ երեկոյ բաւական կռուելուց յետոյ քիւրդերը տեսնում են որ հետեւանքը վատ է, փախնում են թողնելով իրենց աւարը։ Ա՜խ սոսկալի խրողութիւն....

Իգիթը տեսնում է որ ինքը մենակ է իր երկու ըն-կերներով, չկային միւս ընկերները։

«Նրանք էլ ընկել են» ասում է Իգիթը, ու վայ տալիս իր գլխին։

Ճարահատեալ Իգիթը վերցնում է իր երկու ընկեր-ներին ու գնում անտառ։ Ա՜հ ինչ զարմանք։ Իգիթը տեսնում է որ ինքը կամաց կամաց թուլանում, ընկ-ճւում է։ Ընկերները գալիս են հաւաքւում խմբապետի չուրջը և սկսում են մխիթարել։ Իգի՛թ, աչքերդ բա՛ց։ Սիրելի ընկեր, դու չէիր ընկճւում քո կեանքի մէջ, գլխիդ մատաղ, ասում է մի ուրիշը, գոնէ մեզ խնայիր, բաց արա՛ աչքերդ։ Իգիթը բանում է աչքերը, ցանկանում է բարձրանալ, բայց էլի թուլացած ընկնում է գետին։ Ընկերներ ուրեմն ե՞ս վիրաւորւած եմ...։

Ընկերները նորից սիրտ են տալիս, խրախուսում։ Բայց Իգիթի հոգին դառն էր, սիրտը վրէժով լցուած, նա դեռ մեռնել չէր ցանկանում, չնայելով վէրքը ա-ռանց դարմանի հետզհետէ վատանում էր, բայց ո՞ր տեղ պառկեր հանգստանար. ո՞վ պէտք է դարմանէր նրա վէրքերը, մանաւանդ քաղցած ծարաւ։

— Ա՜խ երանի թէ մեռնէի, երանի թէ այդ գըն-դակը կուրծքիս կպնէր, արդէն վերջացած կ՚լինէի. բայց հիմա սարերի դօշին, ձորերի միջին գազանների փայ պիտի դառնամ։ Ա՜խ, մայր իմ հարազատ, մայր. ո՞ւր ես ո՛ւր, սիրտս խարովի տնուտդ յիշելով։

Ի՞նչ անէր Իգիթը, ո՞ւր գնար, արեան գետեր էին կազմուել այդ գիւղում։ Մարդկային արեան հոտը, արեան ձայների հետ խառնուած ապականէլ էին օդը, միայն գալիս էր հեռո՜ւ գիւղից՝ շների հաչոցի ձայնը. կռւի ձայնը, որոնք մարդկային դիակների վրայ կռւում էին, իրարու բերնից քաշքշելով. իրարու գըզ-գզում էին։ Վերջապէս Իգիթը ուշքի եկաւ.— Ընկեր-

նե՛ր, օրհորդն էլ ընկաւ, Կարօն էլ ընկաւ։ Ա՜խ այդ ի՞նչ բան էր, գոնէ կարողանայինք գտնել դիակները այն մարտիրոսների տեսնէի գոնէ վերջին անգամ. Աստուա՛ծ դու էլ գութ չունիս. դու էլ ես օգնում զօրեղին, ուրեմն ամէն ժամանակ էլ անզօրն է մե-ղաւոր։» Այդ խօսքերին միայն գիշերային չար ոգի-ներն էին պատասխանում. դո՛ւ էլ ընկար սիրելի Իգի՛թ դու էլ։— Ընկերներ քաղցած եմ. ինձ համար կարո՞ղ էք հաց ճարել. այնպէս էր կանչում ընկերնե-րին որ կարծես թէ մի քանի հարիւր հոգով պաշար-ուած լինէր։

Ընկերները մի ակնթարթում թռնում են տեղնե-րից ու գնում մօտակայ գիւղը, մի քանի ժամ դռները ծեծում, գիւղացիներից ոչ մէկը չի բաց անում, ո-րովհետեւ չ'տեսնուած աղէտ ու զուլում տեսաւ այդ խեղճ ու կրակ Խ. գիւղը։ Վերջապէս մի քանի տնե-րից հաց չեն կարողանում ճարել. որովհետեւ հաց չէին տալիս հայդուկներին, իրենց թշնամի էին կարծում. ճարահատեալ, հայ երիտասարդները գնում են մի քուրդի տուն, ու յայտնում որ իրենց տները քանդե-ցին. թալանեցին, երեխաները քաղցած մնացին. ի սէր Աստուծոյ մէկ ճա՞րի մէկ կտոր հաց։

Բարի քիւրդը տալիս է մի քանի թոնրի հաց և մի քանի կտոր պանիր. երիտասարդները խորին շնոր-հակալութեամբ հեռանում են բարի քիւրդի տանից։ Քիւրդը որ մի քանի ժամ առաջ. հայի արիւնն էր ծծում, երկու ժամ վերջը, ցանկանում է օգնել, թշւառին, քաղցածին. Երիտասարդները հեռանում են Խ. գիւղից, գալիս Իգիթի մօտ։ Իգիթը պառկած էր աչքերը ծածկած. Նրանք կարծում են թէ քնած է, բայց քնած չէ՛ր, Իգիթը մտածում էր, լո՛ւռ, մունջ. մութ գիշեր էր, բացաւ աչքերը, նայեց երկնքին իր

անզօր աչքերով։ և տեսնում է թէ երկնքի փոքրիկ կախարդիչ աչիկները ի՞նչպէս են նայում իր վերայ և մի՛մեանց հետ խօսում, փսփսում։ Մէկ էլ տեսնում աստղիկները գալիս են իրարու մօտ, հաւաքւում, տեղից փախնում գնում աւելի հեռու մի աստղի մօտ ու յայտնում, օր Հայաստանը կրակ է ընկել. այրւում է նայի՛ր, նայիր և ա՛յն հերոսին, որը ուժասպառ է եղած, արիւնաքամ լինելուց։ Իգիթը փսփսում է ինքն իրեն, խօսքը ուղղելով դէպի աստղերը. «անգո՞ւթներ դուք այն ժամանակն է՛լ էիք նայում ինձ վերայ, նայում էիք մեր սուրբ սիրոյն և հիմա էլ էք նայում լո՜ւռ մո՛ւնջ։ Անհոգ, յիշել տալով անցեալը, այն նուիրական անցեալը, այն պատմական անցեալը։»

Յանկարծ լսւում է մէկ հրացանի ձայն, բայց Իգիթը նայում էր ու նայում։ Տանջւում էր հերոսը ընկած այդ բլրակի վերայ։ Չար մտքերը պաշարել էին նրան, բայց ի՞նչ անել, քանի որ վիրաւորուած էր, վէ՛րք, որի պատճառաւ, հազարաւոր մարդիկ գերեզման են մտել։ Մէկ էլ լսեց հրացանի ձայն։ Վեր կացաւ Իգիթը վերցրեց իր հրացանը, ցանկանում էր լինել գնար այդ աւազակների առաջը կտրել, բայց ոտքերը չէին ցանկանում հնազանդել հերոսին, նորից գլորւում էր ցած։ «Ընկե՜րներ» գոռում է մի քանի անգամ հերոսը, բայց ընկերները հրացանները կպցրած կուրծքներին, ամուր բռնած ձեռքով, անուշ քունի մէջ էին ընկել, որոնք անընդհատ կռիւներից բոլորովին ոգնել էին, կտրիճները։

Չ'խօսեց հերոսը. նորից ականջները սրեց դէպի ա՛յն կողմը, որ կողմից որ գալիս էր հրացանի ձայնը։

Իգիթը յի՜շեց, յիշեց այն տաք կռիւները, որ ինքը գլուխը կորցրած ընկել էր թշնամիների հետեւից, յիշեց նաև որ մէկ տաք բան կպաւ իրեն, վիրաւորեց ոտքի ամենավերից, որ ծակելով անցաւ երկու ոտքե-

րի միջից, ամորձիքների մօտով. յիշեց այն պաշտելի հերոսուհին որ ընկաւ Խ. գիւղի կռիւներից։ Նա անցեալը յիշելով, վեր էր թռչում իր տեղից, առնում հրացանը, բայց էլի ընկնում ցած, վերջին յուսահատութեամբ կամաց, կամաց հեռացան այն բոլորը. այն բոլոր պատկերները իր աչքից. մնաց միայն մի պատկեր, մի չքնաղ կոյսի պատկեր, որի գծագրութիւնը ամենահամեստութեամբ պատկերացած էր նրա առաջ, նա յիշեց օրիորդի այն խօսքերը որ ասաց նա, այն մեռելային դրութեան ժամում, որ պէտք է բաժանուէին միմեանցից «Եթէ գնաս, էլ չ՛գա՞ս, եթէ սպանուե՞ս, եթէ բանտարկուե՞ս, ի՞նձ որին ես յանձնում անդութ...»։ Նա ցանկանում էր էլի մի քանի վայրկեան պահել իր յիշողութեան մէջ, վայելել անցեալի փառքը իր յիշողութեան աշխարհում։ Դա մէկ երկնային պարգեւ էր որ նա ցանկանում էր վայելել տարաբախտ հայրենիքի սեղանում, փրկութեան սեղանում։

Յանկարծ, խելագարի պէս վեր թռաւ տեղից ու բարձր ձայնով արտասանեց.—Մի՛ անիծիր ինձ իմ հրեշտակ մի անիծիր, այլ օրհնիր։ Ես քեզ մի այնպիսի սրտով եմ սիրում որ չէր կարող սիրել ոչ մի անհատ այդպիսի մեծ սիրով։ Ների՛ր, ներիր ինձ, և յոյսդ մի կտրեր ինձանից, եթէ բախտը ժպտաց երեսիս, եթէ առողջանամ, եթէ վերադառնամ, մենք կ՚ուրախանանք այս խարդախ աշխարհում. աղօթի՛ր, իմ հրեշտակ, աղօթի՛ր, առ այժմ հեռացիր իմ աչքից, իմ երեւակայութիւնից. մնաս բարեաւ։

Այն երիտասարդը որ միայն սպանել գիտէր, այն երիտասարդը որ միայն թշնամուն ահ ու սարսափի մէջ ձգել գիտէր, արտասուքը աչքերից հեղեղի պէս թափւում էր ինչպէս մի փոքրիկ երեխայ։ Այնքան արիւնաքամ էր եղել, որ բոլորովին ուժասպառ եղաւ նա, և իր մեղմացած ձայնի մէջ լսելի էր լինո

այս խօսքերը.—մի անիծե՛ր ինձ, ի՛մ հրեշտակ, այլ օրհնիր։

Լոյսը բացւելու վերայ էր, գալիս էր ձիու ոտքերի ձայն, «Հէ՜յ, հէ՜յ,» գոռում է քիւրդ աւազակը. պատասխան չկայ, միայն իր վայրենի ձայնի արձագանքն է լսւում։ «Հէ՜յ, հէյ» կրկնում է աւազակը, էլի պատասխան չկայ։ Աւազակապետը կարծում է թէ գազաններ են հաւաքւել և «Գեաւուր»ների դիակներն են անուշանում։ Քիւրտը մէկ անգամ ձգում է իւր հրացանը, և շարունակում իւր ճանապարհը։ Բայց անյարգ թշնամու գնդակը, զուր չէ վրիպում...։ Իգիթը կանչում է իւր ընկերներին.—Ընկերնե՛ր, արթնցէք, արթնում է ընկերներից մէկը, բայց միւսի անունը որ Մախս էր (կեղծ անուն) պառկած էր անշունչ... Այստեղ նորից կրկնում եմ իմ սիրած խօսքերը. եթէ անզօր է այս Աստուածը աշխարհում, ոչ Գահ պէտք է, և ոչ Աստուած երկնքում։ Մի քանի վայրկեանից յետոյ Իգիթը գտնւում էր մէկ բարեպաշտ մարդու տան, որոնք դարմանում էին նրա վէրքերը։

Խրճիթում պլպլում էր ճրագի աղօտ լոյսը, բարեպաշտ մարդը, կռացել էր Իգիթի դժգոյն դէմքի վերայ և նայում էր ագահութեամբ «Ա՜խ շատ երիտասարդ է» ասում է ինքն իրան այդ բարեպաշտ մարդը։ Ջո՞ւր լսւում է հիւանդի ձայնը»։ Բարեպաշտ ծերունին ջուրը գաւաթով կպցնում է հիւանդի չորացած շրթունքներին։

«Ես... որտեղ ե՞մ...» «բարեկամի տան. սիրելիս, բարեկամի»։ Բարեկամ... չկար... այս... գիւղում... ու... ղարկեցի... հացի... հաց... չ... տւին անիրաւներ... ան... խիղճներ... իրենց... համար... իրենց... համար... էլի... չեն հասկանում...

անիրաւներ... «Մի կտոր հաց չեն տո՛ւել, մրմնջում էր ծերունին։ Իսկապէս անիրաւներ են եղեր»։

«Ընկերնե՛րս... ես... վիրաւորւած... թռչուն... եմ... երա... մակից... բաժան... ւած... ինձ... վիրաւո... րեցին... հեռու... երկրից... եմ... հեռու... էլ չեմ կարող... գնալ ընկան... ընկերներս... յաւիտենական... ցաւը սրտերին... անէծքը... շըրթունքներին։

Դ.

Բայց ո՞վ էր այդ բարեպաշտ մարդը որ այդ հերոսին տարաւ իւր տունը, իւր օջախը, և ցանկացաւ իւր պատւական յարկի մէջ բժշկել այդ ազատութեան մարտիկին։ Դա Հայրապետն էր Խ. գաւառի ծնունդ, և իւր կեանքը անց էր կացրել բարեգործութեամբ։ Գիւղացիք նրան ասում էին բարեպաշտ Հայրո։ Ահա այդ մարդը որ եկել էր միւս օրը իր ազգականի դիակը այդ բլուրի վրայ փնտռելու գտնելու։ Չկարողացաւ, չկարողացաւ գտնել իւր ազգականին, տեսաւ որ մէկ երիտասարդ ընկած է կանանչների մէջ, հասկացաւ որ այդ վիրաւորը սովորական վիրաւորներին չէ նմանում, փամփուշտները խաչաձև ձգած, որ կազմում էր երիտասարդի կուրծքի զարդը։ Մօտեցաւ. «Վա՜հ իմ աչքի լոյս իմ արև հերոս, չլինի դու ես Իգիթ ասած քաջը որ մեր դաշտում, սարերում, գիւղերում ահ ու սարսափ ես ձգել։ Ես քեզ պէտք է տանեմ իմ տունը, իմ յարկի տակ, իմ անշուք խրճիթում. կամ քեզ կ'առողջացնեմ կամ քո պատճառաւ իմ ծերացած մարմինս, ծերացած հոգիս պէտք է վտանգի ենթարկեմ. Վերցնում է հերոսին, գնում է

մէկ տեղ պահում, մինչև երեկոյ մութը ընկնելուն պէս, բերում է մէկ կողով, դնում մէջը ու տանում իրեն տանը. պատսպարում է իւր հարսի, խաթունին, որ լաւ նայեն ու առողջացնեն։ Ամբողջ երեք ամիս պահում են հերոսին, առողջացնում նրա այնքան վտանգաւոր վէրքերը՝ պառաւական դեղերով և պառաւական բժշկութեամբ։ Բաւական առողջացել էր Իգիթը։ Տանից դուրս էր գալիս քրդական տարազով, գնում դաշտերը, լեռները, հերոսական փորձեր կատարում որ տեսնի թէ արդեօք վէրքերը բոլորովին անցա՞ն, թէ դեռ նեղութիւն կը պատճառեն նրան։ Տեսաւ որ էլ վտանգ չկայ իւր վէրքերից, գնաց Դալւորիկ, հաւաքեց բաւական ընկերներ։ Մէկ գիշեր հիւր մնաց այն տեղի Տէր Գաբրիէլի տանը, որ գտնւում էր Փուխ թաղում, ուր և ծանօթացաւ դաշնակցական ընկեր, Սասունցի Մ. Ոչդունուն։

Աշնանային սկիզբն էր, Իգիթը հաւաքում է նոր զինւորներ ու պատրաստւում է նորից յարձակւում գործելու։ Լսում է որ քրդերը պէտք է յարձակւում գործեն Խ. գաւառի վերայ. պէտք է աւերեն Մշոյ դաշտը Նորից լուրե՛ր, չարագուշակ լուրե՛ր։

Տղե՛րք, ասում է Իգիթը, վաղը պէտք է գնանք Մուշ այն պաշտելի վայրը, և օգնութեան պէտք է հասնենք մեր եղբայրներին համաձա՞յն էք թէ ո՛չ։ Բոլորը համաձայնութիւն են յայտնում։ Ուրեմն առաւօտեան անպատճառ պէտք է արշաւենք...։

Աշնանային գիշեր էր. բաւական ցուրտ։ Տեղ տեղ երեւում էր նոր եկած ձիւնը, որոնք լուսնի շողերի տակ գոհարի քարերի պէս պսպղում, ու պլպլում էին։ Հայդուկային խումբը առաջ էր շարժւում ուրա՞խ առանց երկիւղի։ Ահա մէկ մեծ ձոր, և այդ ձորի մէջ նստած է հովիւը ու իւր բլուլով երգում մ

մելամաղձոտ երգ։ Իսկ ոչխարները այդ ձայնի ազդեցութեան տակ, ուրախանում, գլուխները կախ ձգած, մոռացել էին իրենց որոճը ու եկել հաւաքւել էին չոբանի գլխին։ Տղե՛րք, ասում է Իգիթը մենք սրանից էլ լաւ տեղ չենք գտնի, եկէք հանգստանանք, մի ժամ գոնէ, ու այնպէս շարունակենք մեր ճանապարհը։ Դադրում է հայդուկային խումբը. նստում են խոնաւ կանաչի վերայ, ու աչքերը, ականջները ուղղում դէպի այդ մելամաղձոտ ձայնը։ Հանկարծ հովիւը ձգում է բերնից իւր «բլուլը» (սրինգը) հէյ-հէյ-հայ-հայ, գոռալով, հաւաքում շներին, ու գնում, վազում դէպի ձորը։ Այդ տեսարանից պարզ երեւում էր որ գայլ էր ընկել ոչխարների մէջ։

— Տղե՛րք, ասում է Իգիթը. այս նշանը լաւ նշան չէր, վերկացէք գնանք, անպատճառ մէկ վտանգ կայ այն խեղճ ու կրակ գաւառի վերայ։ Եա Սուրբ Կարապետ գոռացին, ու սկսեցին շարունակել իրենց ճանապարհը։ Գա՞շտ, անծայր դաշտ։ Ո՞ր կողմդ նայիս մեռելութիւն է տիրում դաշտերում, շատ տեղ մարդիկ վախեցել են որ դուրս գան ու տէր դառնան իրենց ցանքին։ Ցորենները, չորացել են գլուխները կախել էին, միայն լորը։ և դաշտային թռչունները տիրացել էին այդ անտէր դաշտին։

Լուսինը ի՛նչպէս քանը հինգ տարեկան երիտասարդ լուսաւորել էր իւր սիրած աշխարհը, և լուսնի լոյսով կարելի էր նշմարել մէկ կռւի։ կեանքի և մահու կռիւ։ Ոզնին իւր բնից ելած գնացել էր օձի բունի մօտ մարազ էր մտել, յանկարծ օձը սողալով գալիս է որ մտնի իւր բոյնը, ոզնին բռնում է նրա պոչից, օձը շատ է աշխատում որ ազատւի, բայց չէ կարողանում։ Օձը պտոյտ է անում, հաւաքւում իրար վերայ, իրեն վերցնում իւր անբողջ մարմնով՝ ուժով

ձգում ոզնու վերայ, բայց փշերը չեն թողնում որ խայթի ոզնուն որ ինքն էլ ազատուի։ Այնքան իրեն խփում է ոզնու փշերի վրայ որ անշնչացած ընկնում է գետին։

Այս ամբողջ տեսարանը տեսնում է խմբապետը ու գլուխը շարժում։ Այս տեսարանն էլ դէշ չէր. ասում է խմբապետը, ուրեմն չտապենք որ քանի լոյսը չէ բացուել։ Ահա՛ և Խ. գաւառը։ Իգիթը արդէն ծանօթ էր այդ գաւառի հետ որովհետև միևնոյն գաւառում էր որ ինքը մէկ սոսկալի անցեալ ունեցաւ։

Լսում է որ գաղանի որջից նոր «ֆէրման» է դուրս եկել, հրամայելով որ կոտորեն Հայերին։ Կարծես թէ քիչ էր այնքան արիւնը, ցանկանում են որ Հայի գոյութիւնը կորեն Հայաստանից։ Այդ ժամանակներումն որ հիւսիսային մեծ մարդակերի պալատից հրաման էր ուղղուած ամէն կողմ, որ ասում էր «Հայաստանը մեզ հարկաւոր է առանց հայերի»։ Իսկ ամիտը խրախուսելով իւր Նիկոլ եղբօրից ձեռք ձեռքի տալով կոտորում էին խեղճ հայաստանը։

Խ. գաւառի մէջ, ուղարկուած էր մի քանի վաշտ զօրք, որ կարողանան բռնել ապստամբներին։ Կէս գիշեր էր. ասկեարները, քիւրդերը միացած զօրքերի հետ սկսեցին կոտորել, կոտորել դռներ և ներս մտնել։ մանուկներին, ծերերին, պառաւ կանանց կամ պարզապէս մորթում էին տեղն ու տեղը, կամ գետին էին քանդում, հօր էին փորում ու ողջ ձգում այդ տարաբախտներին հորերի մէջ։ Անցնում էր մի քանի օր, դեռ հորերից ձայները գալիս էր. որոնք տքնում էին, որոնք գոռում էին, մի խօսքով տեսնողի վերայ շատ վատ ազդում էր այդ վայրենի տեսարանը։ Իսկ օրիորդներին կամ հարսներին, կամ լլկում էին իրենց ծնողների, ամուսինների առաջ, կամ քաշում տանում

էին չոլերը, դաշտերը, ու իրենց բիրտ գաղանային կիրքերին հագեցում էին տալիս։

Մեր ֆէդայական խումբը, որը բաղկացած էր երեսուն հոգուց, տեսնում են այդ եղեռնական գործերը, չեն կարողանում երկար սպասել հանգստանալ. Տղե՛րք, գոռում է Իգիթը, էլ ի՞նչ էր սպասում. սրանից էլ աւելի զուլում կա՞յ արդեօք։ Շտապե՛նք, օ՛ն, յառաջ»։ Այս հրամայական խօսքերն էր... Բոլորը բոլորը մէկտեղ գրոհ տուին դէպի գիւղ. սկսեց ընդհարում. այս ընդհարումը աւելի սոսկալի էր, քան թէ անցեալ ընդհարումները. ի՞նչ անէր այս խեղճ հայդուկային մ. փոքրիկ խումբը, մի քանի վաշտ զօրքերու ու քիւրտերու դէմ։ Ընկերներիցը միայն ողջ մնաց մեծ հերոսը, քաջ Իգիթը, նա էլ որ տեսաւ մնաց ինքը մենակ, ընկերները բոլորը ընկան, ինքը փախաւ դաշտը, և մի ուրիշ ճանապարհով եկաւ բարեպաշտ Հայրօյի տունը։

Հայրոյենք, դուռը փակել, և կծկուել էին տան միւս անկիւնում, և սպասում էին այդ նոր զուլումին. Յանկարծ լսում է դռան ձայնը. Ո՞վ էք հարցնում է ծերունին» ես եմ հայրօ. ես եմ» «Դու ո՞վ ես, և ինչ ես ուզում մեզանից, մենք արդէն քնել ենք։» «Ես եմ հայրօ, Իգիթը»։ Բարեպաշտ մարդը հէնց որ լսում է Իգիթի ձայնը, ուրախացած դուռը բանում ներս է առնում իւր սիրած հիւրին։

— Ուր էիր այսքան ժամանակ, Իգի՛թ ջան մեզի մոռացա՞ր, էս ինչ զուլում է որ Աստուած մեր գլխին է բերում։

— Ես Հայրօյ եղբայր, գնացել էի Դալուրիկ, երբոր լսեցի Խ. գաւառը վտանգի մէջ է, հաւաքեցի իմ խումբս մօտ երեսուն հոգի, յարձակուեցայ թշնամիների վերայ, ընկերներս ընկան, ես միայն մնացի և

դաշտի ճանապարհով փախայ եկայ ձեր օջախը, գոնէ եթէ սպանւիմ թող ձեր նւիրական չէնքի մէջ սպանւիմ։ Ես գիտեմ որ ձեր տուն էլ կ՚ենթարկւի թալանի. գոնէ իմ կարեաց չափ ձեր տունը կ՚պահպանեմ։ Մի քանի վայրկեան տիրել էր լռութիւնը։ Իգիթը ընդհատելով լռութիւնը ասաց. Հայրոյ եղբայր փամփուշտ ունի՞ք թէ ո՛չ։ Մինչև այդ ժամանակ որ լուռ էր նրա հարս խաթունը մէջ ընկաւ և ասաց. «Քո փամփուշտներն է Իգիթ որ մենք պահել ենք մինչև հիմայ»։

— Քանի՞ հատ կը լինի։ Սաքսան հատ կարելի է թէ կը լինի։

— Շատ լաւ ասում է Իգիթը. խաթուն քոյրիկ, դու կառնես կը պատրաստես այս երկու հրացանը, երբ որ գան ձեզ թալանելու դու կը լցնես հրացանը ես կը պարպեմ վերաները տեսնենք թէ ինչ կը լինի վերջը։ Սրանք այսպէս պատրաստութեան մէջ էին, որ լսում էր ձայներ, աղաղակներ, հրացանների պայթոցներ, շների և քրդերի ձայներ, մի խօսքով դժողք էր դարձել այդ գիւղը, երկնքից կրակ էր թափում, գնդակները կարկուտի պէս թափւում էին այդ խեղճ ու կրակ գիւղացիների գլխին։

Հայրոյի թոռները, Արմենակը, և Զաբէլիկը, գնացել ու կծկւել էին պաղ թոնրան չրթին ու նայում էին մօր երեսին որ կծկւած է որ դռան հետևին ու լաց էր լինում։ Մարէ ինչո՞ւ կուլաս հարցնում է Արմենակը ի՞նչ կայ որ։

Մարէ մեզի է՞լ պիտի մորթեն հարցնում է Զաբէլիկը։ «Չէ՛ չէ՛ զաւակներս մենք կը թողնե՞նք որ ձեզ մորթեն, մենք չենք թողնի զաւակս մի վախենայ»։ Խաթունը ինչքան որ ցանկանում է չլալ. բայց չէ լինում։ Յանկարծ արտասուքի մէկ կաթիլ ընկնում է Արմենակի երեսին, Արմենակը նայում է մօ-

րը ու հարցնում, մարէ դու որ կուլաս ես էլ կը վախնամ, չէ որ դու խոստացար չլալ ասում է Զաբէլիկը։ Իսկ Իգիթը հրացանը առած, սպասում է դռան. դուռը Յանկարծ ծեծեցին դուռը. ոչ մի պատասխան չկայ, «Դուռը բացէ՛ք» գոռում է ձայթեան։ Ո՞վ էք գոռում է Իգիթը ներսի կողմից։ «Դուռը բա՛ց շո՛ւն, դեռ համարձակւո՞ւմ ես հարցնելու թէ մենք ո՞վ ենք»։ Դրան իբրև պատասխան, Իգիթը գոռում է, «խաթուն դու հրացանը լցրու» ու ինքը սկսում է ներսից կրակել. Խեղճ ծերունի Հայրոն, առնելով իր երկու թոռներին գնացել կծկւել էր գոմի անկիւնում, ու երեխաներին պահել խոտերի մէջ։ Փաշան տեսնում է որ չի կարողանում գլուխ հանել, հրամայում է այրել գոմը։ Գոմը այրւում է, իսկ այս աղմուկի մէջ լսելի էր լինում, Իգիթի բարձր խօսքերը. «Խաթուն փամփուշտ տուր»։

Երբ որ ծածքը պէտք է քանդւէր, յանկարծ մէկ կայծակի արագութեամբ, քանդում է հարևանի տան պատը, խաթունին ու Հայրոյին հանում է այնտեղից երեխաների հետ միասին, ու ինքը, եա սուրբ Սարգիս գոչելով դուրս է գալիս քանդւած գոմի միջից երեսը մուր, որ կատարեալ սատանայի կերպարանք էր դարձել, ու փախնում, հրացանը անընդհատ պարպելով։ Թուրք խուժանը ընկնում է Իգիթի հետևից և ազատւում է Հայրոյի տունը թալանից։ Լոյսը բացւելու մօտ էր. Իգիթը փախնում է և ճանապարհին բարձրանում մի մեծ ծառի վրայ։ Քիւրդ զինուորապետը տեսնում է որ չեն կարողանում նրան բռնել, կարգադրում է որ տասը հոգի սպասի ծառի տակ, կամ թէ աշխատեն բռնեն և յանձնեն իրենց։

Այդ ժամանակ որ ծառի վրայ բարձրացաւ Իգիթը, երեք մարդ և եօթը ձի յայտնւեց ծառի վերա-

յից։ Իգիթը ելաւ ծառից, կարծելով թէ ոչ ոք չկայ, և վտանգ չէ սպառնում իրեն, ուրախ ուրախ գնում էր, յանկարծ պաշարեցին այն տասը հոգին, որ սպասում էին նրան ճանապարհին։ Իգիթը քաջի պէս, եա սուրբ Կարապետ գոռալով հրացանը պարպելով գնաց դէպի մօտակայ ջրաղացը։ Երբ որ պահակախումբը յարձակւեց որ բռնի, Իգիթը իրեն ձգեց ջրի ամբարի մէջ, և անիւների հետ բարձրա՛ալով կանգնեց ուղիղ այն տեղ որ ջուրը գալիս ու ողողում էր նրա երեսը։ Թիւրքերը ներս խուժեցին բայց իզուր... չկարողացան այն տեղից էլ բռնել. ստիպւեցան հետ դառնալ, և առարկեցին թէ Շէյթանը է այդ երիտասարդը։

Այդքան ընդհարումներից ողջ մնաց Իգիթը գնաց քիւրդի գիւղ, և առժամանակեայ հովիւ դարձաւ այդ գիւղում, որ առանց կասկածի կարողանայ նորից խումբեր պատրաստել։ Իսկ պարապ օրը գնում էր իբրև ման գալու, բայց գնում էր ընկերներ կազմակերպելու, ճանապարհներ սովրելու, ծանօթանալու գիւղերի ճանապարհների հետ, լեռների, դաշտերի հետ։

Այս գիւղը ամբողջ երկու օր հարստահարութեան ենթակայ դարձաւ։

Կողոպտեցին ամբողջ գիւղացիներին, պղծեցին եկեղեցիները, ամէնաահռելի կերպով, չարչարանքով սպաննեցին քահանաներին։ Մի խօսքով այն չէն գաւառը աւերակի դարձրին, ուր մարդիկ նստում էին իրենց կործանւած, քար ու քանդ եղած օջախի վերայ ու ողբում։ Բացակայում էր խիղճը, գութը, մարդիկ մարդկանց էին ուտում։

Ե.

ՍՈՎԱՔԵԱՅԻ ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆ

Կէս գիշեր էր։ Վ. գիւղի ննջելիքում էլ ոչ մի մարդ չէր մնացել, բացի գիշերապահներից և ոստիկան պահակախումբից։ Ամէն տան հանգստութիւն էր տիրում, բացի Տէր Ա...ցի տունը։ Տէրտէրի տա՛ր մէջ հանգստութիւն չկար, միշտ անախորժութիւն էր պատահում, իրենց աղջկայ—Օրիորդ Վարդուհու հետ։ Օրիորդ Վարդուհին սեւ էր հագել ու սպասում էր իր հերոսին, իր սիրած կտրիճին, որ գնացել էր հեռո՜ւ, շատ հեռո՜ւ, դէպի Դալւորիկ, դէպի Սասուն, դէպի Մուշ։ Այն ժամանակ այս երեք նահանգները արեան երկիր էր դարձել, այդ ճանապարհները մի այնպիսի ճանապարհներ էին որ գնացողներից շատ քիչերն էին հետ գալիս։

Ամէն տեղ թագաւորողը մահն էր, սխուր դժընդակ մահը։ Ամէն քարերի տակից, թփերի ձայնից կարծես լսում էր գիշերային չար ոգիների ձայն, ո՞վ սիրտ ունէր գիշեր ժամանակ այդ կողմերով անցնելու, ո՞վ կը յանդգնէր իր կալուածքների, իր ինչքերի տէրը դառնալու. ո՞վ կը համարձակւէր իր ընտանեաց, իր օջախի, իր քարուքանդ եղած վաթանի տէրն դառնալ, կամ նրա պատուի, նամուսի վերայ մտածել։

Ահա՛ մի այդպիսի սոսկ ժամանակներում էր որ գնացել էր այդ անդառնալի ճանապարհով օրիորդ Վարդուհու սիրածը, նրա ապագայ ամուսինը՝ թողնելով օրիորդին սպասողական դրութեան մէջ, աչքը ճանապարհում։ Մանաւանդ այդ հերոսի ծերացած ծնողները... Աստուած գիտէ թէ ի՞նչ էր նրանց դրութիւ-

նը, նրանք էլ իրենց փափաքը առնում էին նրա սիրած օրիորդից. «Ա՛խ, քոռանամ ես ասում էր Հերոսի մայրը, ես տեսայ, ես՝, այս կուրացած աչքերովս, թէ ինչպէս իմ կտրիճ զաւակս և օրիորդ Վարդուհին խօսում էին միմեա՜նց հետ, համբուրւում էին, ա՜խ երա՜նի, հազա՛ր երանի, այն վայրկեաններին, և երբ որ ի՞նձ տեսան, վախկոտ նապաստակների պէս սկսեցին փախնել, բաժանուել միմեանցից։ Ա՛խ Աստուած, է՛լ պէ՞տք է տեսնեմ, էլ պէ՞տք է զգամ որ ես էլ մէկ կտրիճի մայր եմ, թէ կուրանալով, լաց ու աղաղակներով, իմ մինուճար որդուս փափաքով պէտք է հոգի աւանդեմ. Ո՛չ, ես յոյս ունեմ, ես երազ եմ տեսել, ես հարցրի գրբացին, նա ինձ ասաց՝ «մի մտածիր մայրիկ, քո որդին կգայ շատ շուտով, եթէ քո որդին չգայ, ես այսուհետև թուղթ չեմ բանայ, և իմ անունը կ՚ջնջեմ այս պատուաբեր անունից»։ Ահա՛ այսպէս, միշտ այս դրութեամբ էր, որ ապրում էին Հերոսի ծնող՝ները, և հաւատում, գրբացների, ժամի, մոմի, տէրտէրների խօսքերին.

Շատ նախանձելի չէր նաև օրիորդ Վարդուհու դրութիւնը։ Երեկոյ էր. ամէն մարդ իրենց տանը, անհոգ խնջոյքներով էին զբաղուած, իսկ օրիորդ Վարդուհին տանջւում էր անկողնի մէջ. Նրա քունը չէր տանում, նրա միտքը սլանում էր հեռո՜ւ, շատ հեռու. դէպի Հայաստանի խորքերը, նա մի վայրկեան իրեն երևակայում էր արեան դաշտում, զէնքը ձեռքին կռւում էր թշնամու հետ, օգնութեան էր գնում իւր սիրածին, իւր հոգու հատորին։

Լինում էր ժամանակ որ նա իրեն գտնում էր իւր սիրելու մօտ, խօսում էր, ու ուրախանում նրա հետ. մէկ էլ խելագարի պէս տալիս էր մի անուն, որ նրա համար սուրբ էր, նուիրական էր. «Ա՛խ պաշտելի արա-

րած ո՞ւր ես, ո՞ւր. միթէ չես խղճում վերաս, միթէ միթէ չե՞ս յիշում ինձ, որ քո պատճառաւ, քո բուռն սիրոյ պատճառաւ հանգստութիւն չու՜նիմ։ Ա՛խ անգո՛ւթ, քանի մարդու թշուառութեան պատճառ դարձար։ Ա՜հ, ի՞նչ ես դու սէր, ինչո՞ւ մտար սիրտս, տանջում ես ինձ, մաշո՛ւմ. ինձ սէրը ծանօթ չէր բնաւին, հանգիստ ու խաղաղ էր իմ հոգին, իմ մատաղ սիրտս հրով վառեցիր, ինձ, խեղճիս համար տանջանք նիւթեցիր։

Նրա մտքովը անցնում էր շատ բաներ «ինձ թունաւորե՞մ արդեօք, ո՛չ, աւելի լաւ է գնամ, գնամ նրա հետևից, հարազատ և անբիծ սէրը այս է պահանջում։

Գնա՛մ, եթէ ողջ գտայ, կը վերադառնանք միասին իսկ եթէ նա էլ ընկած լինի, այն ժամանակ ես էլ նրա ճանապարհով պիտի գնամ, իմ կանացի քնքոյշ ձեռքերով պէտք է բռնեմ հրացանը, պէտք է կռուեմ, պէտք է վրէժը լուծեմ այն անգութից. որը համարձակւեցաւ իւր հրացանի մէկ անարգ գնդակով գետին տապալել այն հերոսին, իմ մարալին, իմ ջահել ջիւան, սարերի մարալին.

Օրիորդը ցանկանու՜մ էր մոռանալ մէկ րոպէ, ցանկանում էր հեռացնել նրա պատկերը իւր աչքից, իւր յիշողութիւնից, որ ամէն օր իւր սրտում ցաւի, յուզման պատճառ էր դարձել, բայց չէր կարողանում.

Հերոսը մահուան հրեշտակի պէս կանգնել էր նրա առաջ և ժպտում էր նրա երեսին։ Օրիորդը կարծես լսում էր տան անկիւնից կցկտուր և անկապ խօսքեր, որ ասում էր. ես մենակ եմ արեան դաշտում, եթէ ինձ սիրում ես, եթէ քո սէրը կեղծիքի բոյն չէ, արի հասի՛ր ինձ, արի՛ օգնիր ինձ։ Ո՞վ է արդեօք, իրա-

կանութի՞ւն է թէ ոչ· ո՛չ, ես ինձ եմ տանջում, տանջւում անկասկած։

Օրիորդը աչքերը փակում էր որ չ՚տեսնէր, նա կարողանում էր հասկանալ որ իւր սիրոյ կուռը այնտեղ չէր, նա հասկանում էր որ դա իւր երեւակայութեան ստեղծագործութիւնն է, նրա արդիւնքն է։ Նա հասկանում էր որ ինքը սիրում էր նրան, հարազատ և սուրբ սիրով, այո՛, հայ կինը պէտք է վրէժխնդիր լինի, իւր պատւոյ իւր սեռակիցի պատւոյ համար, իւր ամուսնու պատւի համար։ Նա պէտք է լծակից լինի իւր ամուսնու հետ. Նա պէտք է տանէ ա՛յն ծանր լուծը, այն խաչը դէպի Գողգոթայ, եթէ նոյն իսկ ճանապարհը լինի փշո՛տ տատասկոտ։ Եթէ ամուսինը զոհւում է իւր ընտանիքի պատւոյ համար, իւր հայրենիքի պատւոյ համար, նաև կինը պէտք է իրեն կեանքը ենթարկի հազար տեսակ տանջանքի, չարչարանքի իւր ամուսնոյ համար, նրա ցեղակցի համար, թշւառ Հայաստանի սիրոյ համար։ Մի քանի վայրկեան տիրեց լռութիւն օրիորդի սենեակում։ Յետոյ կարծես կաթւածահար եղաւ, արտասանեց իւր յօրինած ոտանաւորը, ի՞նչպէս խելագար։

Արի՛ արի՛ փրկիր ինձ
Իմ ա ս դառը վիճակից,
Մոտեցուր ուրախութիւնս,
Ի զուր տեղը մի տանջիր ինձ։

Քանի իմ աչքերը,
Տեսնում են քո պատկերը,
Անբախտ սիրտս քեզ համար,
Հազար կտոր է լինում։

Ո՞ւր ես քեզ եմ պտըրտում,
Անունդ յիշե՛լիս,

Կեանքս ու հոգիս է
Մաշւում։

Քեզ մէկ օր չ՚տեսած,
Կարծում էի ինձ մեռած,
Բայց այժմս հեռացած,
Ո՛հ, դու ո՞ւր թռար։

Իսկ մահը հեռացած
Ինձ չէ ընդունում,
Աչքերս կուրացած՝
Քեզ եմ սպասում։

Ո՛չ այսօր մի չարագուշակ օր է, ես չեմ կարողանում հանգստանալ։ Ի՞նչպէս երեւում է նա վտանգի մէջ է՝ Օրիորդը նայեց լուսամուտից դուրս, տեսաւ որ լուսինը ինչպէս մէկ զւարճախօս երիտասարդ, նայում է երկնքից բախտաւոր և անբախտ մարդկութեան վերայ հպարտութեամբ։ Իսկ պարտէզը նրա աղօտ լոյսից հրապուրւած մի այլ եդեմական կերպարանք է ստացել։

Օրիորդը հագաւ իւր գիշերային զգեստը. և ամենահանդարտութեամբ բացաւ ննջարանի դուռը ու դուրս եկաւ պարտէզ։ Նստեց այն նստարանի վերայ, որը գտնւում էր խնձորի ծառի տակ. ա՛յն տեղն էր որ շատ բաներ էր յիշեցնում օրիորդին, որի տակ անցրել էին շատ երջանիկ վայրկեաններ։ Օրիորդը նստեց նստարանի վերայ, և իւր հմայիչ ձայնով երգեց այն մելամաղձոտ երգը, որը իբրև բաժանման նւիրական աղօթք երգեց իւր սիրականը, այն քաջ հերոսը։

«Խաւարիմ ես ինչպէս գիշե՛ր...»։

Այդ կախարդիչ երգը երգելուց յետոյ յիշեց այն վերջնական ցաւալի խօսքը որ ասաց նա՛, իւր սի-

բականը. «Մի մոռանար ինձ, իմ հրեշտակ, չանիծես ինձ այլ օրհնիր, եթէ ո՛ղջ մնայի, եթէ բախտը ժպտաց երբևիս, կը վերադառնամ և կիրագործեմ այն նպատակը որի համար սպասում ես դու, ուրեմն մնաս բարեաւ»:

Կանացի փափուկ և զգայուն սիրտը, չկարողացաւ դիմանալ այդ զգայուն, այդ հոգեմաշ խօսքերին, սկսեց բարձր ձայնով լալ. — Աստուա՛ծ, ա՛ռ իմ հոգին, ես առանց նրա ապրել չեմ ցանկանում, կամ թէ տուր ինձ ո՛ւժ, զօրութի՛ւն, արիաջան սի՛րտ, որ կարողանամ մնալ, ըսպանել նրան, ազատել նրան իմ արեան գնով եթէ հնար լինի: Օրիորդը մի այնպիսի հայեացք ձգեց լուսնի վերայ, որ կարծես ցանկանում էր վրէժ լուծել լուսի՛ն առած անշունչ քարակոյտից:

— Լուսի՛ն, անգո՞ւթ լուսին, խի՛ղճ ունեցիր, ասա՛ ինձ, ի՞նչ արիք այն հերոսին, ո՞ւր ընկաւ, արդեօք տառապո՞ւմ է անօգնական, արդեօք հեծո՞ւմ տըքնում է ցաւի մէջ արինաշաղաղ արդեօք ո՞ր քարէ տակն է ընկած անտէ՛ր անօգնա՛կան, արդեօք գայլերի, գազանների փա՞յ դարձաւ: Խօսի՛ր, խօսիր անաստուած, յայտնի՛ր ինձ, ո՞ւր ընկաւ այն հերոսը, ա՞յն սարերի մարալը:

Լուռ է լուսինը, լուռ են աստղերը ու նայում իրենց չար ու կախարդիչ աչիկներով: լուռ է ամէն ինչ: Կարծես օրիորդի այս խօսքերով, աղաչանքներով աւելի ես հրճւում էին, ուրախանում, կարծես թէ դիտմամբ իրենց ամբողջ լոյսը սփռում էին դէպի պարտէզը ու լուսաւորում: Օրիորդը աւելի յուզւեց, բարկացաւ, խելագարի պէս իւր չորս կողմը նայեց, տեսաւ որ լուռ են ամեն ինչ, քաղաքում ոչ մի ձայն չկայ, մեռելութիւն է տիրում փողոցներում, քաղաքացիք, գիւղացիք նիրհում են անուշ քնով՝ լուսնի

փա լուն ճառագայթների ազդեցութեան տակ: միայն լսում էր գիշերապահների ձայնը: որոնք իրարու իմացնում էին, արթնցնում էին իրենց շւիով: Միայն քամին էր, այդ չարաճճի քամին, այդ բնութեան խող գաւակը, որ թագաւորում էր քաղաքի և գիւղերի վերայ, ու վրդովում ծառերի, ու թփերի հանգիստը, թագաւորում ամեն տեղ, և շշւացնում իրեն բնական սուլիչով: Անհագին տիեզերքի մէջ երեւում էր միայն Արարատ Մասիս սարը, այդ նահապետական արձանը որ գլուխը կոխում էր ամպերի մէջ, ու նորից հանում իւր գլուխը մութ ամպերի միջից, ցոյց տալիս մարդկութեան, և պարծենում իւր գլխի սպիտակ լաչակով ինչպէս մի նոր հարս:

Իսկ լուսինը չէր զլանում, իւր ճառագայթները ձգում էր այդ սպիտակ լաչակին, և պսպղում փայլեցնում էր, ու կարծես ուզում էր չգիտցողներին հասկացնել, թէ ես եմ Հայաստանի պարծանքը, ես եմ Նահապետական անշունչ արձանը, և ես եմ այդ գըրկուած Հայաստանի, այդ դժբախտ Հայաստանի հարըստահարութեանց լուռ վկան, որ հինգ հարիւր տարին անցաւ: Ե՛ս գիտեմ ամէնը, ի՛նձ հարցրէք:

Օրիորդը, յուսահատ, լալագին աչօք նայում է Արարատ սարին ու հարցնում. «Արարատ լե՛ռ, պարծանքի անուն, դու ես նայում այն տառապանքի աշխարհի վերայ, այն քարուքանդ Հայաստանի վերայ, քո սիրտ կա՞յծն է որ մագնիսացնում է ջահել ջիւան երիտասարդներին, դէպի քեզ. ասա՛ ինձ, անգո՛ւթ, ասա ի՛նձ, չտեսա՞ր արդեօք այն հերոսին, պատմէր ինձ, ո՞ւր ընկաւ այն հերոսը: քաջն Իգիթը: Արդեօք բարձի տեղ քա՞ր էր դրել գլխի տակ, խղճա՛ ինձ, աղերսում եմ ո՞ւր ընկաւ այն հերոսը: Լո՛ւռ է սեգ լեռը լո՛ւռ, ոչ մի պատասխան չկայ. կարծես բա-

ամկա՝ ութիւն էր ստանում օրօրոցի թախանձանքից.
ու փայլեցնում էր իւր սպիտակ գլուխը խորոխտ կեր-
պով։

Օրօրոցը գայրացած կերպով, բարձր ձայնով թա-
փում է մէկ անէծքի կոյտ, առանց այդ էլ անիծուած
Արարատի գլխին. ու ասում. «Անիծւէ՛ք, թող անիծ-
ւի քեզ պէս երկինքը, քեզ պէս երկիրը, դուք չու-
նէ՛ք անխիղճ էք բոլորդ էլ։ Ամբողջ տիեզերքը դա-
ւաճաններով լիքն է։ հողերը, ջրերը, սարերը քարե-
րը, ձորերը. սարերն էլ դաւաճաններ են Հայերի հա-
մար, երկինք գետինքն էլ դաւաճաններ են, բոլո՛-
րը, բոլո՛րը, համայն մարդկութիւնը էլ դաւա-
ճան է։

Ցանկարծ լսում է մէկ ճի՛չ, մէկ աղիողո՛րմ ճիչ.
ինչ է արդեօք, նայում և տեսնում է որ ճիչը այն
ծառի վերայից է գալիս։ որտեղ որ ինքն էր նստած։
բարձրացաւ ծառի վերայ, ա՜հ, տարաբախտ թռչո՛ւն,
մրմնջաց ինքն իրան, և ձեռքը ձգեց ազատեց թըռ-
չունին։ Բազէն էր այդ դիշատիչ թռչունը, գալիս
հիւր է լինում այդ ծառի վերայ, լսում է որ իրենից
մի քիչ ցած բուն է դրել ծիծեռնակը, յարձակւում է
է վերան ու վրէժ լուծող մարդու պէս սխմում է
խեղճ ծիծեռնակին՝ իրեն ճանկերով։ Գլուխը շարժում
է օրօրոցը ու ինքն իրեն ասում. բնութի՛ւն, բնու-
թի՛ւն, ի՞նչքա՛ն անգութ ստեղծագործութիւն ես ա-
րել, մէկին ստեղծել ես ուժով. տուել ես ճանկեր գի-
շատելու համար, իսկ միւսին ոչինչ էլ չես տուել որ
կարողանայ պաշտպանել իրեն՝ իւր թշնամիներից։ Ու-
րեմն անհաւասարութիւնը, ուժերի անհամեմատութիւ-
նը դու ես ստեղծել. օ՛ անգութ բնութիւն, ուրեմն դո՞ւ
ես կարգադրել որ Հայի գլխին, անուժ, տարաբախտ
Հայութեան գլխին, իսլամական սուրը իշխի, մէկին

ստեղծել ես թոյլ, իսկ միւսին զօրե՛ղ. ո՛չ. հայը թոյլ
չէ՛, դու սխալ ես բնութիւն, դու սխալ ես գրել դրոշ-
մել ստրուկ, հարստահարւող բառը հայերիս ճակա-
տին։ Տես թէ ինչ հերոսներ և հերոսուհիներ է
դուրս գալիս հայերի միջից, մէկը մէկից քաջ, մէկը
միւսից վառվռուն։

Օրօրոցը ընկնում է մտածմունքի մէջ, և մի քա-
նի վայրկեան գալիս է միայն բարակ քամու ձայնը,
որ համբուրելով, շփւելով ծառերի տերեւներին վըղ-
վըղոցի ձայներ էր հանում։ —Ա՜հ, այս տեսարանը
լաւ տեսարան չէր ասում է օրօրոցը ինքն իրան այս
ի՞նչ նշան էր ո՛վ Աստուած, երեւի նա էլ այսպէս տա-
րաբախտ վիճակի մէջ է, և յուսահատ ձայներ է ար-
ձակում, օգնութեան է կանչում, արդեօք կա՞յ։
կ'գտնո՞ւի մէկ բարեսիրտ մարդ այն կողմերում, որ
կարողանայ ազատել տարաբախտ հերոսին, այն գա-
զանների ձեռքից։

Ցանկարծ մի նոր միտք է յղանում օրօրոցի մէջ։

— Գնամ, ասում է օրօրոցը։ գնամ Հնչակեան
կուսակցութեան մօտ, յայտնեմ իմ ցանկութիւնս. որ
ես էլ եմ ցանկանում գնալ Տաճկաստան։ Կ'հաւաքեմ
Մի քանի օրօրոցների, կ'միանանք նրանց հետ, —երի-
տասարդների հետ, ու կ'գնանք. կամ մենք էլ կ'մեռ-
նենք կամ թէ մեր կարեաց չափ կ'օգնենք մեզանից
թշւառներին. Այսպէս ինքն իրան խօսելով մտաւ
ննջարան։ Լոյսը բացւելու վերայ էր։

Առաւօտեան տիկին Ս. արթննալով սպասում էր
օրօրոցին, բայց օրօրոցը երկար տանջւելով գիշերուայ
մտախոհութիւնից ննջում էր։ Վերջապէս օրօրոցը ար-
թըննալով տեսնում է որ բարձը իւր արտասուքի հե-
ղեղից ջուր է կտրել։ Կոտրած սրտով գնում է մօր
մօտ, բարի լոյս մաղթելու։ Մայրը որ տեսնում է

աղջկայ այդպէս տարօրինակ դէմքը, բաճկանում է աղջկայ վերայ ասելով։

— Վարդո՛ւհի, ի՞նչ է քո արածը, ի՞նչու ես այդքան մաշւում, վերցրու հայելին և նայի՛ր քեզ, տե՛ս թէ կ՚ճանաչե՞ս քեզ։ Ասա՛ ինձ Վարդուհի, ասա՛ ինձ հոգիս, էլի ի՞նչ է քո մտքումդ, ի՞նչ ցաւ ունես սրտումդ, յայտնիր ինձ սիրելիս, մի գուցէ քո սև դարդերին մի որ և է դարման կ՚անեմ։

— Մայրիկ, քեզ յայտնի է մի որոշ չափով իմ մտածմունքը, իմ տառապման պատճառը։

— Վարդո՛ւհի, ես քեզ հազար անգամ ասել եմ որ մոռացիր նրան, ո՞վ գիտէ նա ո՞ր սարի, ո՞ր ձորի մէջ է ընկած վիրաւոր, աւելի լաւը այն է որ մոռանաս նրան, քանի որ նրանից ոչ մի տեղեկութիւն չկայ։ Ո՛վ գիտէ ո՛ր անգութը վերջ տուաւ նրա ծաղիկ հասակին, նրա ջահէլ ջիւան կեանքին։ Ա՜խ, անբախտ մայր, խեղճ կի՜ն. ասում է Վարդուհու մայրը ինքն իրան։

— Ո՛չ մայրիկ, նրա մայրը անբախտ չէ, այլ հայ կանանց մէջ ամենաբախտաւորներից մէկն է, թո՛ղ հրճւի, ուրախանայ այն մայրը, որ կարող է պարծենալ իւր որդւս անցեալով, իւր որդու քաջութեամբ։ Երանի մեր հայ կանայք հազարաւոր այդպիսի որդիներ ծնէին, երանի թէ մեր հայ օրիորդների մէջ էլ գտնուէին անձնուէր անհատներ, և հաւատացէք որ մեր ազգը այսքան տարիներ, այսքան երկարաձիգ տարիներ չէր մնար գերութեան, թշւառութեան մէջ, հաւատայ մայրիկ որ մենք ազատուած կը լինէինք։

— Վարդուհի, ինչպէս երևում է դու էլ ես միտքդ փոխել, բերանիցդ հերոսուհու հոտ է գալիս։

— Այո՛, թանկագին մայր, վճռել եմ. եթէ իբրև ծնող, մա՛յր, ինձ կախաղան հանէր, ամենաուրախու-

թեամբ կը հնազանդիմ, իսկ եթէ բռնի կերպով կը ցանկանաք որ ես մոռնամ այդ հերոսին, և չգնամ նրան օգնութեան, չեմ հնազանդի ձեզ և անձնասպան կը լինիմ։

Օրիորդի մայրը չկարողացաւ դիմանալ աղջկայ այդպէս սուր և վերջնական պատասխանին, արտասուքը աչքերը լցւած գնաց միւս սենեակ։

Վարդուհին ամենասառնասրտութեամբ հագաւ իւր վերնազգեստը ու գնաց Իգիթենց տուն։

Իգիթի մայրը, Տիկին Ն. երբոր տեսաւ օրիորդ Վարդուհու գալը, խելագարի պէս փաթաթւեցաւ նրա վզովը, թրջեց օրիորդի երեսը իւր մայրական անկեղծ արտասուքով. Մի քանի վայրկեան փարւած՝ մնացին իրարու վզով, կարծես իրենց կորցրածի փափաքը իրարից էին առնում։ Շատ սոսկալի վայրկեաններ էր, մէկը լալիս էր իւր որդու վերայ, իւր կորցրած զաւակի վերայ, իսկ միւսը, միւսը լալիս էր, ողբում էր իւր սիրականի կորստեան վերայ, ապագայ ամուսնու վերայ։ Սէ՜ր էին ողբում, սէ՜ր, թշուառ սէ՜ր, մէկը մէկից սոսկալի, մէկը միւսից ազդու։

Վերջապէս բաժանւեցան միմեանցից. ամեն մէկը գնաց ու նստեց իւր պատկանեալ տեղը, ու իրարու երեսի էին նայում, ու կարծես թէ մտքով ու աչքերով հասկանում էին միմեանց ցաւեր, միմեանց նպատակ։ Կարծես թէ միմեանց էին հարցնում թէ ի՞նչ դրութեան մէջ է գտնւում իրենց սրտի հատորը, իրենց սիրած կտրիճը։ Երբը լռութիւն էր տիրում տան մէջ, միմիայն լսում էր երկու կողմից էլ հեկեկոցի ձայներ, ու հառաչանքներ։

Յանկարծ ներս է մտնում մի երախայ, ձեռքին մի կապոց, որ առանձին խնամքով փաթթել էին մի ինչ որ բան թաշկինակների մէջ։

— Ի՞նչ է այդ, հարցնում է օրիորդը...։

— Կապոց է, կապո՛ց, պատասխանում է երեխան։

— Ախր ի՞նչ կապոց է, դու գիտե՞ս թէ ինչ կայ այդ կապոցի մէջ։

— Ո՛չ, քոյրիկ, ես չգիտեմ։

— Ասա՛ ինձ խելօք երեխայ ո՞վ տուաւ քեզ այս կապոցը։

— Պարոն Սմբատը տուաւ ու ասաց որ մարդու չ՚տաս, կը տանես, Պ. Իգիթի մօրը կ՚տաս։

— Շատ լաւ ասում է օրիորդը, ապրես, գնայ և ասա որ շ՞նորհակալ են։

Երեխային ճանապարհ են դնում ու շտապ շտապ քանդում փոքրիկ կապոցը, մէջը դրած էր մի քանի թիւ «Հնչակ» թերթ։

Օրիորդը առաւ թերթը, յանկարծ նայեց մէկ փոքրիկ յօդուածի, և կարծես թէ ինքը չէ հաւատում իւր աչքերին։ Աչքերը բանում է նոր ուժով ու նայում տեսնում է որ միևնոյն բանն է գրած։ Մի քանի վայրկեան ապշած նայում է տիկին Ն.ի երեսին։

— Ի՞նչ եղաւ Վարդուհի, ինչո՞ւ չես կարդում, արդեօք մերի մասին բան կա՞յ գրած թէ ոչ։ Վարդուհին չէ պատասխանում ու կարդում է այդ փոքրիկ գրուածքը կարծես թէ ցանկանում էր անգիր անել։ Ահա՛, այն գրուածքը. «Խ. գաւառի ահագին ընդհարումներից, զոհուել են Իգիթի բոլոր ընկերները, իսկ ինքը Իգիթը վիրաւորուած է միևնոյն գաւառում ու ընկած բարեպաշտ Հայրո.ի տանը որոնք մեծ ջանք են գործ դնում, նրան առողջացնելու. լսւում է որ վէրքը մահացու չէ։»

— Վարդո՛ւհի ջան, չասե՞ս թէ ինչ կայ մէջը գրուած։

— Ոչի՛նչ, մայրիկ մերի մասին ոչինչ գրուած չէ, դու անհոգ եղիր։

Վարդուհին սիրտ է տալիս Իգիթի մօրը. բայց, ինքը քա՛նի գնում թոյլանում է, գլուխը պտտւում։ Հիմա արդէն յայտնի է ամեն բան, ասում է Վարդուհին ինքն իրան. մենք քանի կարող ենք, պէտք է գաղտնի պահենք նրա մօրից.

— Վարդո՛ւհի, ի՞նչ եղաւ քեզ, ինչո՞ւ գունատուեցար, երեւի մէկ բան կար գրուած, ու ինձ խաբում չես ասում։

Ի՞նչ անէր Վարդուհին, ասէ՞ր թէ ոչ, բայց մայրը չի խաբւում երբ տեսնում է իւր միակ որդին, իւր հարազատ որդուն վտանգ է սպառնում։

— Չե՛ս խօսում, Վարդուհի՛, ինչպէս երեւում է իմ տունս քանդուել է, իմ տան դուռը սև քարով է չարուե՛լ։ Ա՜հ գազա՛ններ, բարբարոսներ, դուրս եկէ՛ք, դո՛ւրս եկէք ձեր բներից, եկէ՛ք, եկէք պատառոտեցէք իմ այս կուրծքս, իմ վառած, խոցոտուած սիրտս, այս ի՞նչ եմ լսում, Մարտիրոս ջան, Մարտիրոս, ո՞ւր ես, ո՛ւր, ո՞ր անգութը սպանեց քեզ. մի՞թէ չխղճա՞ցին ինձ, մի՞թէ չխղճա՞ցին այս գրկած Վարդուհուն, որ սև է հագել ու սպասում է իւր հօր տանը։ Աստուա՛ծ, դիւանիդ մեռնիմ Աստուած, ես ի՞նչ էի արել, ի՞նչ մեղք էի գործել, որ դու ինձ պատժեցիր, իմ մինուճար որդուն առար ինձանից։ Չէ՛, չէ՛, Վարդուհի, էլ չեմ խաբւիր, դու ցանկանում ես ինձ խաբել, հարազատ մայրը չի խաբւում, երբ լսում է իւր որդու, իւր մին ու ճար որդու մահը օտար երկրում, բարբարոսների երկրում, անտէ՛ր՝ անտիրակա՛ն գազանների, գայլերի փայ դարձած։

Ա՜հ Աստո՛ւած իմ, ո՞վ որ եղել է մայր մէկ կրտբէչի, ով որ ունեցել է որդի, մինուճար որդի, և կորց—

ըել է նրան մի այնպիսի վտանգաւոր վայրում, նա միայն կ՚հասկնայ նրա դրութիւնը, այդպիսի մօր դրութիւնը,

Սուգի, մեռելի տուն էր դարձել այդ տունը. ողբում էին երկու սրտեր, մէկը միւսից ցաւալի, մէկը միւսից կսկծալի։

Երեկոյ եղաւ։

Վարդուհին կոտրուած սրտով, յուսահատ դրութեան մէջ գնաց իրենց տունը, խնդրելով տիկին Ե.ին որ հանգիստ մնայ, չ՚լայ, տեսնենք թէ ինչո՞վ կ՚վերջանայ, և հետեւանքը ի՞նչ կ՚լինի։

Տիկին Ե. սպասում է երկա՜ր, անցնում են երկար ու ձիգ ժամեր, Իգիթի հայրը չ՚կար ու չ՚կար։

— Ի՞նչ եղաւ չեկաւ Մարգար աղան, ինքն իրան ասում է Տիկին Ե. արդեօք լսե՞լ է, իմացե՞լ է թէ ոչ։

Ծերացած կինը երկար նստեց, կէս գիշեր եղաւ, ո՛չ ոք չ՚կայ, ո՛չ մի ձայն։ Տան կենդանութիւն տուողը միայն ճրագի աղօտ լոյսն էր որ պլպլում էր լուսաւորելով տան կահկարասիքը։ Տիկին Ե.ի պաշտպանը, մխիթարողը այդ մեռելային պահուն նրա աղախինն էր։ Նա էր մխիթարում անբախտ տիրուհուն, ասելով. «նէ պլաչ, բարինիա, միլա՛յա բարինիա, եա չուստուուիւ չտոյ օն ժիւ ի զդարով» (մի լար սիրելի տիրուհիս, մի լար, ես զգում եմ որ նա ողջ և առողջ է)։ Կէս գիշերը անցնելու վերայ էր, լսեց դռան ձայնը։

— Ո՞վ էք, գոռում է տիկին Ե.։

— Ես եմ դուռը բաց...։

— Դու ո՞վ ես, անուն չունե՞ս։

— Ես եմ մայրիկ, ե՛ս։

— Վա՛յ աչքերս քոռանայ, որդի՛, Մարտիրոսն է, Իգիթս է։

Շտապ, շտապ դուռը բաց է անում տիկին Ե. և

առնում իւր մայրական գրկի մէջ, համբուրում և արտասուքով լւանում նրա երեսը։ Մէկ էլ գրկից հետ է ձգում, վիրաւոր արծուի նման, ու բարկանում։

— Վա՛յ խաբուած եմ եղել, որդիս չէ՛։

— Ես եմ, մայրիկ, էլի քո որդին եմ, ինչո՞ւ ես ինձ անիծում։

— Դո՛ւրս, դո՛ւրս, անխի՛ղճ անաստո՜ւած, ի՞նչ ես ուզում իմ տանից, իմ տեղից. Հիմայ ինչու ես եկել, էլ ո՞վ մնաց որ խաբես տանես գլխից հանես. դո՛ւրս, դուրս գնայ իմ աւերուած օջախից։ Եթէ դու դուրս չես գնայ ես կ՚գնամ, ես կ՚գոռամ, որ իմ որդու սպանողը, գլխէն հանողը սա՛ էր, սրան էլ սպաննե՛ցէք, թող իմ նման սրա մայրն էլ սև կապի, նամ օրէորթ Վարդուհու նման թող քո կինն էլ սև հագնի։

— Մայրիկ, ինձ հաւատայ որ ես գլխահան չարեցի նրան, նա ինքը ազնիւ զգացումների տէր երիտասարդ էր, ինքը ցանկացաւ գնալ, օգնել նրանց, մեր թշւառ եղբայր՚երին։

Յանկարծ տիկին Ե.ի աչքը ընկաւ նրա արիւնոտ դաշոյնի վերայ, որը բռնած էր Գ. Գարեգինը։

— Դո՛ւ. անաստո՜ւած Գարեգին, հիմայ էլ ցանկանում ես ինձ սպաննե՞լ այդ ի՞նչ է դաշոյնը. դու ինձ չես խղճում անգութ, իմ տունս արցունքի տուն չէ, հեռա՛ցիր իմ տանից։

— Մայրի՛կ, ժամանակը ուշ է, ես սպաննեցի մեր քաղաքի ժանդարմայի հազարապետի օգնակա՛նին, հիմայ էլ ապաստանել եմ իմ ընկերի տանը. յոյս ունենալով թէ նրա մայրը ինձ կ՚պահէ, կ՚ազատէ, խընդրո՛ւմ եմ, մայրիկ, խղճայ ինձ, տեսան ռուս ոստիկանները որ ես այս կողմը փախայ, ազատիր ինձ և ձեռք մի հանձներ, խնա՛յիր, խնայիր ինձ այն աղ ու հացին որ ես և քո կտրիճը միասին ենք կերել։

Տիկին Ե. շւարած, մի քանի վայրկեան լուռ էր, ու յանկարծ գոռաց։

— Ո՛չ, ես չեմ կարող քեզ պաշտպան հանդիսանալ, հեռացի՛ր, ինչպէս իմ որդու արիւնը մաշի՛ր, խաբեցի՛ր, ուղարկեցի՛ր, այնպէս էլ իմ արիւնս ես մոռնում, չեմ ցանկանում, գնա՛յ, իմ տունս ոճրագործի տուն չէ։

Գ. Գարեգինը, ինչպէս մէկ խռոված մարգարէ մէկ անգամ էլ աղերսանքով աչքերը ձգեց դէպի Տիկինը ու սկսեց շտապ, շտապ, դուռը բանալ։

— Ո՞ւր ես գնում, յանկարծ սթափւեց Տիկին Ե. բռնեց Գ. Գարեգինի ձեռքից։

— Գնում եմ մայրիկ, թող քո կամքը կատարւի, թող ինձ բռնի կախաղան բարձրացնի ռուս բռնապետը, և դու էլ ուրախացի՛ր. թող իմ մայրս էլ, քոյրս էլ, կինս էլ ձեզ պէս սև կապեն։

— Գ. Գարեգին, մի՛ գնա՛յ. բռնեց ներս քաշեց և էլի դուռը փակեց։

Մի ակնթարթում, ռուս աղախնի հագուստները հանում, հագցնում է Գ. Գարեգինին ու պառկացնում անկողին։

Գ. Գարեգինը դեռ երիտասարդ էր, առանց բեխերի և մօրուքի՝ որ շատ յարմար էր, ու բաւական գեղեցիկ աղախին դարձաւ, իսկ աղախնին հագցրեց իր զգեստներից մէկը և ինչպէս մէկ հիւր օրիորդ նստեցրեց բազկաթոռի վերայ։ Իսկ արիւնոտ դաշոյնը ձգեց ջրհորի մէջ, ու եկաւ նստեց միւս բազկաթոռի վերայ։ Այս բոլորը նա կատարեց մէկ ակնթարթում, մի քանի վայրկեանում։

Յանկարծ լսւեց դռան զանգակի ձայնը.—ո՞վ ես հարցնում է Տիկին Ե.—մենք ենք. պատասխանում է ոստիկանը.—Դուք ո՞վ էք և ի՞նչ հրամանով այս կէս

գիշերին համարձակւեցաք թակել իմ տան դուռը։

Տիկի՛ն, բաց դուռը, մենք ոստիկաններ ենք և մի կարևոր հարցի համար ենք եկել, ու շուտով պէտք է գնանք բացէք խնդրեմ աներկիւղ։

— Ո՞վ ունէք հետերնիդ, կա՞յ արդեօք մի ուրիշ մարդ հետերնիդ, առանց դրացիններիս, ես չեմ կարող ո՛չ մի ոստիկան իմ տունս թողնել, քանի որ ես մենակ եմ, մանաւանդ մէկ օրիորդ հիւր էլ ունեմ տանը։

— Բա՛ց, մենք քեզ ասում ենք մի՛ վախենայ, իսկ դուք պատմութիւն էք կարդում գլխներիս, բա՛ց եթէ ո՛չ, ուրիշ միջոցի կը դիմենք։

Այն տեղից աղախին օրիորդը բարկացած գոռում է։

— Ինչ տգէտ ոստիկաններ էք, ինչ վայրենի մարդ էք, տի՛կին, արի, արի այս կողմը։ Թող գան ներս, եթէ մի որ և է սխալ քայլ անեն, այս վայրկեանիս կը գրեմ իմ հօրս և պաշտօնանկ կանեմ այն վայրենի ոստիկաններին, որը կը համարձակի մի որ և է սխալ խօսք խօսել այս բարոյական յարկում։

Դուռը բացեցին, ներս հրաւիրեցին ոստիկաններին։ Ոստիկանները սկսեցին խուզարկել տունը. ամբողջ սենեակները, յետոյ եկան աղախինի սենեակը, տեսան որ մէկ օրիորդ է պառկած հագուստով։

— Ո՞վ է այս օրիորդը։

— Մեր աղախինն է։

— Ո՞ր տեղացի է ձեր աղախինը։

— Ռուսաստանի խորքերից եկած, մէկ դժբախտ օրիորդ է, կլիման չյարմարեց, այս քանի օր է որ հիւանդ դրութեամբ տանջւում է խեղճը, եթէ այդպէս գնայ, ստիպուած պէտք է լինենք ետ ուղարկել։ Նայեցէ՛ք մօտ երեսուն հինգ աստիճան տաքութիւն ունի։

Ոստիկանները տեսնում են որ ոչինչ չի կարելի հասկանալ ժամավաճառութիւնից․ ներողութիւն են խնդրում ու հեռանում։ Աղախինը և տիրուհին մի այնպիսի դիրք էին բռնել, որ ոչինչ չէր կարելի հասկանալ, կամ կասկածել։

Իսկ օրիորդ Վարդուհին, գնում է իրենց տուն ու յայտնում մօրը այդ չարագուշակ դէպքի մասին, ու խնդրում որ թոյլ տայ իրեն, խումբ կազմելու և գնալու նրան օգնութեան։

Շատ թեր ու դէմ վիճաբանութիւնից յետոյ, մայրն էլ խօսք է տալիս։

— Ա՛յ որդի. դու գիտես, յետոյ դու կը զղջաս։

Իսկ օրիորդ Վարդուհին իբրև շնորհակալութեան յարգանք, մօտենում, ծունկ է չոքում և համբուրում է մօր ձեռքը, և իբրև մխիթարական ասում է․

— Մա՛յր, դու փոխանակ դժգոհելու, պէտք է ուրախանաս. որովհետև ես ոչ թէ գնում եմ զւարճանալու, ոչ թէ կլուբ կամ բալ, այլ արեան դաշտ, փոխանակ խաղալու պէտք է կռուեմ, ձեռագործի տեղ հրացան պէտք է բռնեմ իմ ձեռքը։ Մա՛յր չրջահաեացք եղիր, տես թէ ի՛նչպէս կրակ է թափւում երկնից, մա՛յր, զգայուն մարդը չի կարող դիմանալ այսքան ցաւերին, արի՛ւն է հոսում Եփրատի և Տիգրիսի միջից, և փոխանակ ջրի, արիւն է թափւում Սև Ծովի մէջ։ Մա՛յր․ Հայաստանում սով կայ, սուր քաշել կայ, սրի խորով լինել կայ բայց դուք հանգիստ նըստած էք բազկաթոռի վերայ, առանց զգալու թէ ի՞նչ է կատարւում այն աշխարհում, մեր հարազատների հետ։

Կովկասի, Ռուսաստանի, Պարսկաստանի և Եւրոպայի Հայ կանայք, իրենք իրենց յօժար կամքով իրենց որդիներից մէկին, լինի թէ աղջիկ, թէ մանչ, պէտք է

նուիրեն Հայաստանին, նրա վերանորոգման, նրա վէրքերը բուժելու։ Հայաստանը կարօտ է, կարօտ, իրեն հարազատ զաւակներին, որոնք փախել ապաստանել են օտար հողերի վերայ, օտար երկրներում։ Հայաստանի հողը, այդ նուիրական հողը, վրէ՛ժ է գոչում, վրէ՛ժ, պէտք է գնալ, հասնել նրա ձայնին, եթէ նրա հարազատ զաւակները լինել ենք ցանկանում։ Մա՛յր, դու չ՛կարծես թէ մենակ ես եմ գնում նրան օգնութեան, ո՛չ, ես նրա սիրով, սիրում եմ նրա սիրածին, ես ինչպէս հարազատ սիրտ կրող Հայ օրիորդ իմ պարտականութիւնս պէտք է կատարեմ, իմ արեան գնով։ Պէտք է գնամ, իմ թաշկինակով չորացնեմ այն անբախտ մայրերի, դժբախտ քոյրերի, որդեկորոյս ծնողների աչքերը, և ասեմ որ մեր վերայ թող վատ գաղափար չ՛կազմեն և թող հաւատան մեր Տաճկահայ եղբայրները որ իրենց փրկութեան համար, իրենց օջախի Սրբութիւնը պահելու համար, Կովկասահայը. հայուհին գիտէ կռուել, արի՛ւն թափել, ազատել իրենց այդ խեղճուկ վիճակից, հետ դարձնել. այդ անդառնալի ճանապարհից։

Մայրի՛կ, եւրոպական ոչ մի ազգ չէ ազատւել, առանց կանանց շարժումի, յիշի՛ր, սիրելի մայր «Մեր Հայրենիք» երգը և կը հաւատաս ինձ, որ եթէ քոյրը իրեն եղբօրը, մայրը իրեն որդուն իրեն կամքով չուղարկի արեան դաշտ, այն ազգը չի ազատւի. Ա՛հ, բաւական է ինչքան մեր ծնողները, ամուսինները, եղբայրները, խարխափել են ստրկութեան մէջ, պէտք է կանանց ազատութիւնը անհրաժեշտ լինի. կինը պէտք է ազատ լինի անկախ՝ իւր ազատ գաղափարներով։

Մայրը ինչպէս մէկ խոնարհ աշակերտ լսում էր իւր աղջկայ ճառախօսութեանը. և երբ որ վերջա-

ցրեց աղջիկը իւր գաղափարները պարզելուց, գնաց կրկնակի համբուրեց մօր ձեռքը և ասաց. «Երանի ինձ. հազար երանի որ ունեմ քեզ նման գաղափարական մայր»։ Իսկ մայրը, չնայելով չատ տխուր էր, նրան առանց աղջկայ մնալ անկարելի էր; բայց ինչ անէր, նա գիտէր որ իւր աղջիկը հաստատամիտ էր, չէր կարող ոչ մի ելք գտնի այդ գաղափարից հանելու համար, ստիպուեցաւ հնազանդել. Արտասուքը աչքերին համբուրեց իւր աղջկան, մաղթելով նրան առողջութիւն և յաջողութիւն նրա նպատակներին.

Հարցը արդէն, լուծուած ու վճռուած էր։

Երեկոյ էր արդէն։ Օրիորդ Վարդուհու մայրը յուզուած դրութեամբ դուրս եկաւ դահլիճից դիմեց իւր բնակարանը (ննջարանը) իսկ օրիորդ Վարդուհին առաւ իւր փոքրիկ քոյրը Սաթենիկին ու գնաց պարտէզ։ Լուսնկայ գիշեր էր. Ծառերը, փոքրիկ նորատունկ ծառերի ստուերը ընկել էր ծաղկաշատ գետնին, և ներկայացնում էր մէկ զորաբանակ, ինչպէս մէկ զօրաբանակ կազմ և պատրաստ սպասում էին Վարդուհուն. Իսկ սոխակը չ'գիտեմ ո՞ր տեղից էր եկել կանգնել այդ ծառի վերայ, այդ խնձորենու վերայ և կարծես թէ իմացել էր, զգացել էր օրիորդ Վարդուհու մելամաղձոտ դրութիւնը, ու եկել էր որպէսզի մխիթարէր, փոքրիկ Սաթենիկը իւր քնքոյշ թաթիկներով վերցնում է քաղում է ծաղիկներից, մէկ փունջ է սարքում, և գալի. նստում է իւր քրոջ մօտ։

— Սաթենիկ ջան, ի՞նչու քաղեցիր այդ ծաղիկները

— Քուրիկ ջան, քեզ համար քաղեցի, նրա համար քաղեցի։

— Սաթենիկ ինձ համար քաղեցիր հասկացայ, բայց դու ասացիր նրա՛ համար էլ քաղեցի, ո՞վ է, ո՞րին ակնարկեցիր այդ խօսքը։

— Նրա՛ է՛լի, չ'գիտե՛ս, նրա՛, որը այստեղ չէ, և ապրում է մեզանից հեռու։ Ա՜խ քոյրիկ ջան, ինչքան լաւ կ'լինէ՛ր, որ գար, ես կ'փաթաթուէի նրա վզովը կ'համբուրէի։

Օրիորդ Վարդուհին այլայլուեց, և ինքն իրեն ասաց.

— «Ա՜խ Աստուած. սա էլ գիտէ սիրել, սրան էլ զգացում ունի, հապա ես ի՜նչ անեմ։»

— Սաթե՛նիկ ջան, ախր ես պէտք է գնա՛մ։

— Ո՞ւր քուրիկ ջան, ո՞ւր պէտք է գնաս,

— Պէտք է գնամ նրա մօ՛տ, ախր կարօտացել եմ։

— Ես էլ եմ կարօտացել քոյրիկ ջան, ես էլ, ինձ էլ կը տա՞նես։

— Քե՛զ ո՞ւր տանեմ քո՛յրիկս, Սաթենիկս։

— Ինձ էլ տար նրա մօտ, եթէ իմանայիր թէ ինչքա՜ն եմ կարօտել...։

— Սաթե՛նիկ ջան, քեզ չեմ տանի հետս, որովհետև դու դեռ փոքրիկ ես, իսկ ես կ'գնամ անպատճառ և դու միայն կ'յիշես, կ' յիշես ինձ, որ ունեցել ես ինձ նման մէկ թշուառ քոյր։ Բե՛ր, բեր Սաթենիկ ջան որ համբուրեմ քե՜զ, գոնէ այս օր իմ փափաքս առնեմ քեզանից։ Վարդուհին յուզուած դրութեան մէջ գլուխը դրեց ձեռքերի մէջ և սկսեց բարձր ձայնով լա՜լ։

— Քոյրիկ ջան ի՞նչու ես լաց լինում, եթէ որ դու լաս իմ լացն էլ կ'գայ։

— Չէ՜, Սաթենիկ ջան. դու մի՛ լաց լինի, թող որ ես լամ, ես դարդ ունեմ, վէրք ունեմ իմ խորտակուած սրտում, իմ դարդս անդարմանելի է, անհուն ծովերով, մեծ մեծ սարերով, խորխոր ձորերով. Սաթե՛նիկ, իմ վէրքերս անդարմանելի վէրքեր են, և մի գուցէ այս վէրքերով կ'մտնեմ գերեզման։

Վարդուհին այնպէս էր խօսում, այնպէս իւր դարդերը, սիրտը բաց էր անում այս փոքրիկ երեխայի առաջ, որ կարծես թէ իւր մօտ նստողը ոչ թէ երեխայ է այլ մի այնպիսի մէկը, որ կարող էր իւր վէրքերը բուժել, դարման անէր։

— Սաթենի՛կ ջան, վաղը ես պիտի գնամ, իսկ դու չես մոռանայ ինձ, կ՚յիշես որ ունեցել ես իմ քոյր, որ ինչպէս ծաղիկ դեռ չ՚բացուած գոցւեցաւ։

— Քոյրի՛կ ջան, գնա՛ս ե՞րբ պիտի գա՛ս, ՞րա հետ միասին պիտի գաս, այնպէ՞ս չէ։

— Ա՜խ երանի՜, հազար երանի որ Նրա հետ գայի, նա ողջ լինէր, էլ ի՜նչ ցաւ, ի՜նչ դարդ կար։ Այո, Սաթենիկ ջան, եթէ Աստուած խղճայ վերաս, գթայ Նրան, անպատճառ Նրա հետ կ՚վերադառնամ, եթէ է՛չ, Աստուած գիտէ...։

Օրիորդ Վարդուհին յուզուած նայեց երկնքին այնպիսի մի հայեացքով, որ կարծես թէ մխիթարութիւն էր ցանկանում Նրանից, ողորմութիւն էր հայցում Նրանից։ Բայց երկինքը, անողորմ էր, մու՜թ, որ փոխանակ մարդու հիացում պարգեւելու, աւելի սոսկացնում էր։ Մի քանի վայրկեան լռութիւն էր տիրում այնտեղ։ Օրիորդը անգիտակցօրէն սկսեց բարձր ձայնով արտասանել, «Դուք բոլորդ էլ անխիղճ էք, անգութ էք, անողորմ Դուք տեսնում էք թէ ի՞նչպէս կեանքի գոյութեան համար կռիւ է մղւում աշխարհում. դուք տեսնում էք թէ ի՞նչպէս արիւն է հոսում Հայաստանի խորքերում։ Դուք տեսնում էք թէ ինչպէս թալանում են, կողոպտում են Հայերի ինչքերը, պղծում քանդում, անարգում են Հայերի Նւիրականութիւնները, Նրանց օջախները։ Դուք տեսնում էք թէ ի՞նչպէս Հայ հերոսները յանուն արդարութեան յանուն ազատութեան, յանուն կրօնի, վերջապէս յանուն

ազգային պատւի, սրի խողով են լինում, սարեր՝ դոշին, ձորերի մէջին, հեռու ազգականներից, բարեկամներից, սիրելիներից։ Քանի հազար ծաղիկ հասակներ թափեցան բանտերը, քաղցած ու ծարաւ. Մի խօսքով աշխարհը դժողք է դարձել, և մարդկանց հանգստութիւն չէ տալիս։ Մարդիկ մարդ են ուտում։ Ո՞վ է ասել, որ Հայը վեց հարիւր տարի գերի պէտք է լինի Իսլամական անարգ լուծին, որտեղից վաղուց վերացած է արդարութիւնը։ Ասէ՛ք, անգո՛ւթ երկինք, ո՞վ է ասել որ Հայը անասունի պէս պէտք է լծւի սայլերին, և պէտք է աշխատէ, արիւն քրտինք պէտք է թափի, իսկ Տաճիկ բռնապետը, բուրժուան, չօմենիզմը, անյարգ Ղուրանի աշակերտները, կղերականները պէտք է լափեն այդպիսի քրտինքը։ Ա՜խ որն ասե՛մ, որն ասեմ անգո՛ւթ երկինք որ իմ սիրտս հանդարտի։ Միթէ դու կուրացե՞լ ես, չէ՞ս տեսնում. ա՛յս, տեսնում ես, բայց չես խղճում, ուրեմն ով դո՛ւ արդարութեան Աստուած, անզգայ ես, ի՞նչ կ՚լինի քո ստեղծած մարդկութիւնը։ Մեզ այսուհետև այդպիսի երկինք պէտք չէ՛, մեզ պէտք է հաւասարութեան երկինք, արդարութեան երկինք, մենք աշխարհի խորթ զաւակը չենք, այլ հարազատ զաւակներից մէկը։ Օրիորդ Վարդուհին կարկուտի պէս թափում էր խօսքերը երկնքի վերայ, նախատում էր, նախատում էր Նրա՛ն, իւր անգթութեան համար, իւր անողորմութեան համար։

Սթափւեց օրիորդը, նայեց Սաթենիկին, որ գլուխը դրել էր Վարդուհու ծունկերի վերայ ու քնել։ Ա՜խ երանի քե՛զ, անհոգ երախայ, երանի քեզ, դու չ՚գիտես թէ ի՞նչ է կեանքի փոթորիկը։

Վերկացաւ օրիորդ Վարդուհին առաւ Սաթենիկին իւր գիրկը և գնաց սենեակ։

Օրիորդը գնաց ննջարան, մի քանի ժամ էլ տանջւում էր անկողնի մէջ։ Տեսակ տեսակ մտածումներ, երեւակայութիւններ, գալիս ու պաշարում էին նրան, և չէին թողնում որ հանգստանայ, առանց այդ էլ տանջւած, սիրտը։

Գիշերը, շատ անհանգիստ գիշեր էր. համարեա օրիորդ Վարդուհին չ'կարողացաւ երկու ժամ հանգիստ ննջել, արդէն լուսացել էր։

Արթնացաւ օրիորդ Վարդուհին, գնաց իւր մօր մօտ։

— Վարդուհի, ի՞նչպէս երեւում է այս գիշեր էլ հանգիստ չունեցար, այդ ի՞նչ ես եղել։

— Այո՛ մայրիկ, հանգիստ չէի, մանաւանդ որ մէկ վատ երազ էլ տեսայ, որ սոսկացի։

— Ա՜յ որդի. չնայելով երազին չեն հաւատայ, բայց և այնպէս պատմիր տեսնենք։

— Մայրի՛կ, երազում ես ինձ գտնում էի մէկ կանաչ տափարակ դաշտում, և տեսայ որ նա՛, բարձր սարի վերայ կանգնել է, կարծես վիրաւոր. և աղիողորմ ճիչեր է արձակում ու ինձ կանչում։ Ես էլ ուրախութեամբ բարձրացայ այդ սարի վերայ բաւական ուրախացանք, զւարճացանք, յետոյ իջանք ցած։ Այն տափարակ մարգագետինը, որ տեղ ես կանգնած էի էլի եկանք այնտեղ։ Յանկարծ եկան Ռուս ոստիկաններ ինձ պէտք է յափշտակէին. բայց նա կռւում էր ու չէր յանձնում ինձ. յետոյ երբ որ ես շատ ընդդիմացայ նրան բռնեցին, ձեռքն ու ոտքը հաստ շղթայով կապեցին, իսկ ինձ սպանեցին։ Դեռ չէի մեռել, հոգեւարքի մէջ էի, երբ ընկաւ ականջս նրա շղթաների ձայնը, արթնացայ սոսկալով։ Եւ ես հաւատացած եմ մայրիկ որ նրան չպիտի կարողանամ արժանանալ։

— Վարդո՛ւհի, այդ երազից ես միայն այսքանը

կարողացայ հասկանալ, որ ձեր թշնամին այնտեղ չէ, դու նրան այնտեղ կ'արժանաս, թող Աստուած փափաքիդ հասցնի։ Բայց ձեր թշնամիքը ինչպէս երեւում է այստեղ են,, այս աշխարհում, ոչ թէ տաճիկների միջից այլ ռուսների միջից։ Ա՜խ, Աստուած անիծէ այսպիսի կառավարութիւնը, որ մեզ հանգստութիւն չէ տալիս։

Այդ երազով էին զբաղւած որ ներս մտաւ մի փոքրիկ երեխայ ու ընդհատեց մօր ու աղջկայ խօսակցութիւնը։

— Օրիորդ, Պ. Սմբատը ձեզ կանչեց, ասում է. «Եթէ գործ չունի թող ինձ մօտ գայ, մի քիչ կարեւոր գործ ունիմ, խօսելու բան ունիմ ասելու։

— Շատ լաւ, գնայ ասա՝ որ նա էլ պատրաստւում էր ձեզ մօտ գալու։

Երեխան գնաց, իսկ օրիորդը հագաւ իւր ճանապարհազգեստը ու գնաց Պ, Սմբատի խանութը։

Սմբատը տեսաւ օրիորդին, ամենաքաղաքավարի կերպով տեղ ցոյց տուեց նստելու, ու սկսան խօսել, օրուայ հարցերի վերա, ռուս յեղափոխութեան վերայ, և սկսեցին խօսել մի ուրիշ նիւթի վերայ, որ օրիորդի սրտին աւելի մօտ էր, ու նրա ցանկացածն էր։

— Օրիո՛րդ, ես լսեցի որ դուք ևս ցանկանում էք մեր խմբի հետ Տաճկաստան գնալ ճի՞շտ է։

— Այո՛, ճիշդ է Պ. Սմբատ, ես վճռել եմ, և մօրիցս էլ թոյլտուութիւն եմ ստացել, այնպէս որ ո՛չ մի արգելք չ'կայ իմ մասին։

— Բրաւօ օրիո՛րդ, երանի թէ քեզ պէս աղջիկ՝ Հայ կանայք շատ ունենային

— Շատ լա՛ւ. ե՞րբ պէտք է գնանք Պ. Սմբատ։

— Մե՞նք արդէն պատրաստ ենք, և վաղը երեկոյեան անպատճառ պէտք է դուրս գանք եթէ Աստ-

ուած յաջողի։ Իսկ խումբը պէտք է լինի իմ ղեկավարութեամբ։

— Ուրեմն ես իմ պատրաստութիւնս տեսնեմ ու վերջացնեմ այսօր։

— Անշուշտ, և չ՚մոռանաս, մի քանի օրիորդ ևս ունինք մեզ հետ....

— Է՛հ, նշանակութիւն չունի ինձ համար Պ. Սմբատ, ես վճռել եմ գնալ, կուզէ լինի, կուզէ չլինի ինձ համար կարևորութիւն չունի։

Վերջացրեց օրիորդը խօսակցութիւնը, ու վերադարձաւ տուն։ Յայտնեց Վարդուհին իւր մօրը, այն բոլոր խօսակցութիւնը, ինչ որ եղաւ Պ. Սմբատի խանութում։ Այս էր ամենից մեծ առաւելութիւնը, օրիորդի, որ ի՞նչ անցնէր, ի՞նչ լինէր, մօրը կ՚յայտնէր, կամ նրա համաձայնութիւնը կ՚ցանկանար։

Երկու օր՚ց յետոյ առաջ էր խաղում մի խումբ կովկասեան լեռներով։ Դա Սմբատի խումբն էր....

Ահա և Արարատ լեռը, մէկ վիթխարի քարակոյտ, համր, անզգութ։ Իւր գլուխը բարձրացրել էր ամպերի մէջ, ու խօսում էր, զւարճանում էր նրանց հետ, ուշադրութիւն չէր դարձնում աւերած Հայաստանի վերայ։ Ամաչում էր իւր գլուխը հանել ամպերի տակից, ինչպէս մէկ ամօթխած նոր հարս, որովհետև երկար ու ձիգ տարիներ, աշխարհի սկզբից մինչև հիմայ, անտարբեր էր գտնւել դէպի իւր սիրած Հայաստանը, իւր պաշտելի ցեղը։

Գիշեր էր, Լուսինը շրջապատուած Աստղերով, զւարճանում էր երկնքում, և իւր աղօտ լոյսը ձգում էր Մասիսի գլխին հաւաքուած դեռ նոր եկած ձիւնի վերայ, ու արծաթի պէս փոքրիկ ապակիների մանրուքի պէս սպողեցնում էին նրա գագաթը, որ պարծենում էր, հպարտանում էր, իբրև թէ ի՞նչն է տեղ

տուել Նոյի Տապանին իւր գլխին, և ինքը սարերի թագաւորն է ու արժանաւորը։ Իսկ միւս կողմում թեւ թեւի տուած կանգնել են Կովկասեան լեռները, ինչպէս մէկ վիթխարի շղթայ որ սարսափ է ազդում անցողների վերայ։ Խումբը կանգ առաւ Արարատի ստորոտում հանգստա ալու։ Օրիորդը վերցրեց իւր հրացանը ու գնաց բարձրացաւ Արարատ լեռան վերայ, կարծես թէ մի թանկագին բան կորցրած լինէր այնտեղ, ու փնտռում է որ գտնէ։

Զգիտեմ թէ ինչու օրիորդի աչքերը լցւեցին ու յուզւած, մելամաղձոտ դրութեամբ, սկսեց լաց լինել ու բարձր ձայնով հարցնել.

— Դո՛ւ, նահապետական արձա՛ն, սա՛, պատասխանի՛ր ինձ, չ՚տեսա՞ր արդեօք, այն ահեղ մարտից յետոյ ո՞ւր ընկաւ այն հերոսը, ասացէ՛ք չար ոգիներ, ե՛ս եմ հարցնողը, հարցնողը մէկ օրիորդ է իւր վառ զգացումներով։

Դաշտն էլ չի խօսում, լեռն էլ չի խօսում, ու լուռ են ամեն ինչ։ Միայն արձագանգի ձայնն է գալիս հե՛ռու հե՛ռու ձորերէն. գնա՛յ օրիորդ մի՛ յուսահատւի, քո քաջութեան մէջ կ՚գտնես մխիթարութիւն դու պէտք է յաղթանակը տանես։

Յանկարծ լսում է զանգերի ձայներ, զրը՛նգ, զրի՛նգ... Պախկաստանից են գալիս դա քարւան էր, մօտ յիսուն ուղտ, իրարու կապուած, գալիս էին ու գնում դէպի Կավկաս, նոր ապրանք էին տանում ծախելու, Զանգերի ձայնը քանի գնաց պակասեցաւ. ու անլսելի եղաւ։ Օրիորդը վերջին անգամ իւր հայեացքը ձգեց դէպի Կովկասեան լեռները դէպի Արարատի գլուխը, կարծես խռովեց նրանցից, չէր ցանկանում նայ՚լ ոչ մի տե՛ղ, նա յոյս ունէր որ մի գուցէ կ՚իմանայ նրա մասին մի ինչ որ նորութիւն, օրիորդը այն-

պէս էր յուզուած, ինչպէս Մովսէս Մարգարէն Սինայ լեռան վրայ, կարծես օրիորդն էլ Մովսէսի պէս սպասում էր մի բան որ պատգամի։ Ցանկարծ լսեց խմբապետի ձայնը, որ կանչում էր օրիորդին։

Օրիորդը, վերջին հրաժեշտ տուեց Կովկասեան լեռներին, անծայր դաշտերին, և Կովկասեան սահմանին։

— Մնաք բարե՛ւ, Կովկասեան լեռներ, դաշտեր, ձորեր. երկինք և գետինք։ Մնաս բարե՛ւ Արարատեան Մայր Աթոռ, Լուսաւորչականների ուխտական էջմիածին։ Մնաք բարե՛ւ արեւ և լուսին, ես ո՞վ գիտէ մէկ էլ ուրախութեամբ պէտք է ապրի՞մ ձեր մէջ, պէտք է անցնե՞մ ձեր միջով։ Ես այսօր ուխտ եմ անում այնպէս, ինչպէս մէկ անտէր և թախտակորոյս մարգարէ, եթէ իմ նպատակները կատարուի, ես վերադարձիս մէկ արձան պէտք է կանգնացնեմ այս տեղ, և գոհարանական սեղան պէտք է պատրաստեմ հովիւների համար, բնութեան հարազատ զաւակների համար, ինչպէս Նոյը Ջրհեղեղից յետոյ սեղան պատրաստեց, գոհութիւն յայտնեց, աշխարհիս ստեղծողին ամենաբարի Աստուծուն։ Ծունկ չոքեց օրիորդը ջերմեռանդ սրտով աղօթեց, համբուրեց Արարատի չորացած կուրծքը, ու առաւ հրացանը գնաց խմբի մօտ, ուր բոլորը կազմ ու պատրաստ էին ու սպասում էին օրիորդին։

Օրիորդը միացաւ խմբին ու սկսեցին արշաւել։ Այնպիսի ճանապարհով էին գնում մեր հայդուկները որ սահմանապահ զօրքերը շատ հեռու էին ընկնում նրանցից։

— Մատոյ դեռ շատ կա՞յ որ հասնինք այնտեղ...

— Խա՛, դեռ լաօ ի՞նչ եկանք օր։

Գնում են, սա՛ր, ձոր, քար չեն նայում, գնում են առանց մտածելու, առանց նայելու։ Ցորեկը գնում են,

գիշերը գնում, ու անընդհատ հարցնում իրենց ուղեցոյց քիւրդին։

— Մատօ հասա՞նք...

— Քիչ մ'ալ բուէմ, քիչ մալ կ'հասնինք։

— Մատօ՛, քեզ մատաղ, այնպիսի ճանապարհով գնանք, որ ուղիղ գնանք մեր ծրագրած տեղը, հասկցա՞ր.

— Խա՛ բուեմ, ես ձր քիրվօն եմ, ես ձր նիօքար եմ, ձեզի տանեմ, համա՛յ Խ. գաւառի մէջ կ'թալիմ ու կ'երթամ։

Հայդուկային խումբը այսպէս խօսելով, կատակ անելով, գնում էր։ Լոյսը բացուեց, արեւի ճառագայթները տաքացրին երկիրը։ Բնութիւնը նոր կենդանութիւն ստացաւ, ամէն դուռ, ամէն լուսամուտ բացուեցաւ, սրտեր ուրախացաւ, բայց մեր խումբի սիրտը տխուր էր ու տխո՛ւր։ Կարծես արեւը խրախուսում էր էրիտասարդներին նոր ուժ էր ներշնչում ասելով—գնա՛ցէք, հայ Երիտասարդներ, կռուեցէ՛ք կամ կռւով փրկութիւն ստացէք, կամ զոհեցէք ձեր նուիրական ծաղիկ կեանքը, Հայաստանի փրկութեան։ Ձեր իդեալը տո այժմ պէտք է լինի Հայաստանը, Թշւառ Հայաստանը։

Արեւը երկու մզրախ բարձրացաւ, բայց աշխատաւորներ չկան. ցորենները, գլուխները ծռած դէպի գիւղ սպասում են իրենց տէրերին, որ գան, հաւաքեն իրենց։ Բայց մա՛րդ, աշխատող չկար ու չկար։

Ամէնը փախչած տաժանելի աղէտներից փակել էին իրենց տների դռները, ու սպասում էին զուլումի։ Երկիւղը, մահւան սարսափի պէս փռւել էր, փռւել էր աշխարհի վերայ այդ խեղճ ու կրակ մասիսի վերայ։ Ա՜հ ի՛նչ սարսափելի էր տեսարանը, տեղ կար որ բռնի հաւատափոխ էին անում. տեղ կար կոտորում էին անխը-

նայ, թալանում, լլկում ճղում էին կանանց արգանդը և անխղճօրէն մորթում։

Ամէն կողմում լաց, կոծ, չիւան, ամէն կողմում ճիչ ու աղաղակ, Օգնութեան կարօտ էր ոչ թէ մէկ գաւառ կամ մէկ գիւղ, այլ ամբողջ Հայաստանը։ Արիւնը առուակներ էր կազմել, ու ողողում էր վիրաւորուածների վէրքերը, որոնք թափթըփւած էին ամէն կողմերում, աչքերը բաց ու սպասում իրենց բարեկամներին, ազգականներին, հարազատներին։ Մահւան քամին էր, որ թագաւորում էր ամէն տեղ։ Մեր հայդուկային խումբը, առաջ էր խաղում անվախ աներկիւղ։

— Մոսօ՛, ի՞նչ լեռներ են սրանք, հարցնում է խմբապետը։

— Սիփանայ լեռներն են, Սասնոյ լեռները Լաօ։ Երբ որ Սասունի անունը ընկաւ ականջները, սարսռեցինք, մեր ամբողջ մարմնի վրայ սոսկում անցաւ, մահւան սոսկում։ Ու մենք յիշեցինք այն նւիրական անունը- յիշեցինք այն քաջ մարտիկները, յիշեցինք նաև Սերոբ փաշային, որ ի՛նչպէս մէկ առիւծ, տիրապետել էր այս լեռները։ Ցիշեցինք մենք որ անցնում ենք նահատակների միջից, որոնց հողաթմբերը նոյն իսկ յայտնի չէին։ Ա՜հ Սասուն, քեամբախտ Սասուն, մրմնջացին մեր շրթունքները։

Մէկ էլ յիշում էինք որ Սասնոյ լեռները մարդու կեանք են ներշնչում, խրախուսում են մարդու, կարծես թէ նոր հոգի, նոր եռանդ է տալիս, նայողին, հետաքրքրողին։ Մէկ էլ լսեցինք մէկ ճի՜չ, մէկ աղիողորմ ձայն։ Այդ ձայնը մէկ հիւանդ մարդու ձայնի էր նման։ Ով է արդեօք, Հայ է թէ Թուրք, ասաց խմբապետը, ու կանգ առաւ։

Խմբապետը հրացանի կոթով հրում է վիրաւորուա-

ծին ու հարցնում «Բիմաէ՞ն»։ Իսկ վիրաւորուածը գոռում է.—ա՜խ մայրիկ ջա՜ն, ո՞ւրես ո՞ւր, մէկ վայրկեանով դէմքդ ցոյց տայիր ինձ։ Խմբապետը ապշած նայում է վիրաւորուածին· ու ասում ինքն իրան, թշւառ երիտասարդ հայ է հա՜յ

Հիւանդը չի զգում ահագին ձայնը ու աղմուկը և կրկնում է նորից այս մելամաղձոտ խօսքերը, հոգի՛ս, ո՞ւր ես, ես մենակ այս ամայի դաշտում, վիրաւորւած. անտէ՛ր ա՜ն օգնական, գոնէ գայիր, պատկերքիդ ղուրբան, գուցէ քո շնչով ինձ կենդանութիւն կ՚տայիր։

Սարերի միջին, ձորերի խորշում, վա՜յ գլխին տալով քո խեղճ Պետրոսը, ձեզանից զրկւած ձեր կարօտովը մաշւած, հոգեւարքի մէջ այստեղ եմ ընկած։ Ա՜խ հասէ՛ք, հասէք օգնեցէք ինձ, ես դեռ չեմ ցանկանում մեռնել, ես դեռ վրէժ ունեմ վրէ՜ժ, ա՜խ Իգի՛թ, սիրելի ընկերս, գոնէ դո՛ւ գայիր, քե՛զ տեսնէի, իմցաւերս յայտնէի...,

— Պետրո՛ս, դու վիրաւորւա՞ծ ես

— Ա ո՛, ո՛վ էք դուք եղբայրներ.

— Մենք էլ քեզանից ենք, ձեր վրէժը լուծողներ՛ց։

— Գոնէ փառք Աստուծոյ որ վերջի շնչիս մէջ, հոգեվարքի մէջ ձեզ հետ խօսելով պէտք է հոգիս աւանդեմ

— Պետրո՛,

— Ի՞նչ է եղբայրնե՛ր»։

— Պետրոս, որ տեղից ես վիրաւորւած։

— Ա՜խ շատ կասկածելի է իմ վէրքս, կուրծքիցս է կուրծքիցս. ես չեմ կարող ապրել, իմ ուժս ձեզ եմ յանձնում, առէք իմ փամփուշտներս, զէնքս, և տարէք հետերնիդ, ու մի թողէք որ շների փայ դառնայ։

— Սիրելի Պետրոս ո՞ր խմբից էիր․

— Իգդի՛րի, քաջն Իգդիրի խմբից․

— Հապա ո՞ւր է նրա խումբը հիմայ։

— Երտեղ եղածը չ՚գի՛տեմ, մենք այստեղ կռուի բռնուեցանք, մի քանի հոգի ընկանք․ իսկ մեր միւս ընկերները փախան, ապաստանեցին լեռները։

— Պետրոս ջան, ո՞ր տեղացի ես։

— Ընկերներ, Երեւանցի եմ, բուն Երեւանցի, նոր ամուսնացած, և մէկ աղջիկ ունէի։ Ա՜խ, չմեռնէի գո՛նէ գէթ վերջին անգամ տեսնէի․․․։

Զօրապետը երեւի շատ բան կ՚հարցնէր, բայց Պետրոսի լեզուն բռնուեց, սկսեցին պաղել ձեռք ու ոտքերը։ Միայն լսեց մի քանի կցկտուր խօսքեր ու հազիւ թէ կարելի էր հասկանալ։

— Ընկ․․․երներ․․․ հեա․․․ւեց․․․էք․․․ իմ օրին․․․ակին չ՚յու․․․սահատ․․․ւէք․,․ փառք․․․յեղ․․․ափոխու․․․թեան․․․ իր․․․ դրօշակին։ Մընննաաքք բաարրեեաւ։

Այդ խօսքերով կտրեց իմ դառնագին ընկերիս շունչը։ Զօրապետը հրամայեց որ դաշոյնի ծայրերով գերեզման փորեն։ Խումբը գերեզման փորելով էր զբաղուած, յանկարծ լսեց հրացանի որոտումներ, անընդհատ տեղում էր փամփուշտները ինչպէս կատաղի կարկուտ։ Այդ ձայնից զգացուած յանկարծ լսեց Պետրոսի ձայնը, կարծես հրացանը, նրա պայթունի ձայնը նորից կենդանութիւն տուեց Պետրոսին, մեր սիրելի Մարտիրոսին, ու նա յանկարծ տեղից վեր թռնելով ասաց «Ա՜խ, երանի թէ ողջ լինէի, ա՜խ անխիղճ Աստուած, ու վերջացաւ ամէն բան։

Հրացանների ձայնը քանի գնում մօտենում էր․․․։

Զօրապետը, համարձակ կերպով ազդարարեց խումբին որ կազմ ու պատրաստ լինեն։

Լուսինը դեռ ուշ պէտք է դուրս գար․ մութը գիշեր էր։

Միայն երեւում էր գիւղեր, խեղճ ու կրակ գիւղեր, որոնց ճրագի աղօտ լոյսը, երեւում էր հեռուից պլպլում ու պսպղում էր, ցոյց էր տալիս մասամբ իր աւերակները։ Գերեզմաններում ապրելը այնքան երկիւղալի չէր, ինչքան այդ տեղերում, որ մահն էր թագաւորում։ Շների հաչոցի ձայնը նոյն իսկ չէր գալիս, պապանձուել ու ականջները սրել էին այն կողմը, որ կողմից գալիս էր հրացանների ձայնը։ Միայն գիշերային բայղուշներն էին որ երգում էին, աւելի շուտ ողբում էին մարդկանց կեանքի հոգու, չարագուշակ ողբը, որ մարդու սարսեցնում էր։ Մի սոսկում կար այն տեղերում մի սոսկում, որ քարերը նոյն իսկ անհանգիստ էին։

Լուսի՛ը վախեցած այդ դէպքերից պահւում էր դուրս չէր գալիս մութ ամպերի միջից, կարծելով թէ չ՚լինի յանկարծ հրացանը, թշնամու անյարգ գնդակը դէպի իրեն կ՚նետուի։

Բնութեան այդ երեւոյթով կարելի էր հասկնալ միայն, որ ասում էր․—զգոյշ եղէ՛ք հայ ժողովուրդ դեռ աղէտները չեն վերջացել, այլ սպասում է ձեզ մի նոր աղէտ, որ առաջինից աւելի վատթար կ՚լինի, աւելի սոսկալի։

Դեռ նոր էին հողին յանձնել իրենց անմահ Պետրոսի դիակը, երբ լսեցաւ նորից հրացանի ձայներ, ու քանի գնում աւելի մօտենում էր, ու լսւում էր նոյն իսկ ձայներ որ կամաց կամաց մօտենալով կարելի էր լինում հասկանալ։

Ձայները սկզբում լսւում էին տաճկերէն, և քիւրդերէն, յետոյ լսեց մի ձայն, որ պարզ լսեց, ու հասկցւեցաւ որ հայի ձայն է, ու գոռում է «Տղերք

կրա՛կ անընդհատ կրա՛կ»։ Սմբատը սկսեց սիրտ տալ իւր խմբին և ասել չվախենաք. ինչպէս երեւում է մերոնցից են։ Այդ ժամանակ մենք պահւինք մինչև որ քիւրդերի ձայները բոլորովին կ՚մօտենայ ու հետեւ՝ երբ մեզ կ՚լինի, մերոնք միւս կողմից, մենք այս կողմից կը պաշարենք այդ անհաւատներին, ու նրան հոգին այն ժամանակ մեր ձեռքում կը լինի։

Կռիւը քանի գնում մօտենում էր Սմբատի խմբին։ Մէկ էլ յանկարծ լսեց մէկի բարձր ձայն որ ասում էր. — Ես սուրբ Սարգիս մեզ օգնես, դու հասնես մեզ»։

— Տղե՛րք գոռում է Սմբատը մերոնք հետ են մղում։ Կրա՛կ։ Ու սկսեց նորից կրա՛կ, կոտորո՛ւմ։ Քիւրդերը հասած խնձորների պէս ցած էին գլորւում։ Իգիթը ապշում է երբ լսում է միւս կողմից էլի հայի ձայն, հայդուկների ձայն է գալիս։ Ուրախանում ու գոռում է «Ընկերնե՛ր, քաջացէ՛ք, մեզ օգնութեան են եկել, մենք փրկուած ենք» Ու սկսեցին աւելի եւս խրախուսել։ Մի քանի ժամ կռւելուց յետոյ երկու հայդուկայի՛ն խումբերը գալիս են դիմաց առ դիմաց։ Քիւրդերը որը խելքը գլխին էր փախաւ, և իւր հոգին ազատեց, Հայ երիտասարդները տեսնում են որ միայն իրենք են կանգնած դէմ առ դէմ։

Երիտասարդները այնքան ոգեւորւած էին, եթէ նոյն իսկ մի քանի հարիւր հոգի էլ լինէին թշնամիներից անպատճառ պէտք է յաղթէին

Երիտասարդները կորովից ու ոգեւորութիւնից ստիպւած, չկարողացան իրենց ոգեւորութիւնը զսպել, սկսեցին նորից հրացանաձգութիւն. բայց զգացումները չկորսնցնելով. փամփուշտները դէպի վեր էին նետում. ոչ թէ իրարու։

Մի քանի վայրկեան այսպէս կռւում էին միմեանց հետ, որ յանկարծ Իգիթը գոռաց.

— Տղե՛րք, դադա՛ր, մերոնք են։

Անմիջապէս դադարում է հրացանաձգութիւնը, ու իրարու երես էին նայում մի քանի վայրկեան, շւարած։ Ու յետոյ, Իգիթը հրացանը ձգեց գետին ու մօտեցաւ աղաղակելով. —

— Ո՞վ էք իմ ազատարար հրեշտակնե՛ր որ այս ժամանակին հասաք մեզ։

— Այդտեղ Սմբատը չկարողացաւ իրեն զսպել փաթաթւեցաւ Իգիթի վզովը ու կսեցին միմեանց համբուրել։

— Սմբատ ջան, դո՛ւ ես, իմ ազատարար հրեշտակ, հաւատա՞մ արդեօք իմ աչքերին։

— Հաւատա՛յ իմ հերոս ընկեր, ե՛ս եմ, ե՛ս, քեզ ազատելու համար Աստուած ինձ այստեղ ուղարկեց։

Միւս ընկերներն էլ փոխադարձաբար սկսեցին միմեանց համբուրել, ու առանձնացան Սիփանայ լեռան վերայ։

— Հիմայ մեզ պէտք է մէկ ապահով տեղ գտնել ու նստել, խօսել, հանգստանալ։

Երկու խումբերը միացած այնպէս էին ուրախանում համբուրւում, որ կարծես թէ երկնքից Աստուած էր իջել։ Մինչև այն ժամանակ որ մութը պատեց ամէն տեղ, կարծես լուսինն էլ զգաց այդ ուրախութիւնը։ Դուրս եկաւ մութ ամպերի տակից սկսեց լուսաւորել, ուրախացնել կարօտեալ սրտերին։

Մի քանի վայրկեանէն փախան երկնակամարէն բոլոր ամպերը, ու աստղերը, իրենց գոհարափայլ աչքերով սկսեցին լուսաւորել խաւարում խարխափւած երկիրը։ Գիշերային թռչունները սկսեցին դայլայլել, երգել, ու մխիթարել երիտասարդներին։ Գիշերային բայղուշի ձայնը կտրւեցաւ իսպառ։ Այդ ձայներին հետ միասին՝ երգում էր և զովացուցիչ զեփիւռը, ու զո-

վացնում քրտինքախառն երիտասարդներին որոնք ահագին սոսկալի կռիւներից քրտնել, յոգնել էին։

Իգիթը ու Սմբատը առանձնացան երիտասարդներից ու սկսեցին խօսակցել։

— Սմբատ ջան, ասա՛ ինձ խնդրեմ, ի՞նչ տեղեկութիւն ունիք իմ ծերացած ու խեղճ ծնողներից, որոնք աչքերը ճամբում սպասում են իրենց մինուճար որդուն։

— Շատ լաւ են Իգի՛թ, երբէք մտածելու բան չկ՛այ, նրանք յետոյ իմացան ձեր տաճկաստան փոխադրուելը, որովհետև դու չէիր յայտնել, որ Տաճկաստան ես գնում, այլ վաճառականական գործով ես գնում։ Եւ նրանք էլ հաւատացած էին։ Բայց յետոյ երբոր լսեցին եկել ես այս արեան երկիրը, արիւնը արիւնով լւալու. շատ վշտացան։ Մանաւանդ որ Հընչակի մէջ կարդացին, իբրև թէ վիրաւորուած էք։ Մենք քեզ այստեղ չէինք սպասում, որովհետև մենք կարդացինք վերոյիշեալ թերթում, որ դուք Խ. գաւառի մէջ էք։ Բայց մեծ բարեբախտութիւն ունեցանք այստեղ հանդիպելու, և այսպիսի մի անտանելի վիճակում, օգնելու մեզ.

— Շատ լաւ սիրելի ընկերս, ինչպէս է իմ սրտի հատորը, իմ միակ իտեալը, արդեօք ինձ յիշո՞ւմ է թէ մոռացաւ։ Արդեօք ձեզ մօտ չէ՞ր գալիս, և ինչ էր խօսում։ Ա՛սա, ա՛սա ինձ, առանց պահելու։

— Սմբատը առանց երկար մտածելու ասաց, գիտես Իգիթ նա շատ մտածում է քեզ համար և սև է հագել, մի քանի անգամ եկան խնդրեցին նրա ձեռքը, բայց նա՛, պարզապէս ասաց որ ես նրան եմ սպասում, եթէ նա՛ նոյն իսկ սպանուած լինի, ես ողջ մնալու չեմ, նրա հետեւից։ կամ կ'գնամ նրա՝ վրէժը կ'լուծեմ ու կ'հանգստանամ, կամ թէ նրա պատճառաւ, նրա սէրը առանց ժխտելու, գերեզման պիտի մտնեմ։ Ահա՛ սիրելի ընկեր նրա գաղափարը։ Երանի թէ նրա պէս աղջիկներ Հայ կանայք շատ ունենային։

Իգիթը լուռ էր, չէր խօսում, այլ հնազանդութեամբ լսում էր նրա ասածներին։ Եւ մի քանի վայրկեան երկուսն էլ լուռ միմեանց էին նայում։

Սմբատը մտածում էր. ի՞նչ անեմ Աստուա՛ծ, յայտնեմ նրա այստեղ լինելը, թէ ո՛չ. Եթէ յայտնեմ մի գուցէ ուրախութիւնից մի որ և է վտանգ պատահի։ Աւելի լաւ է որ չյայտնեմ, այլ առ այժմ գաղտնի մնայ, տեսնենք ինչ է լինում վերջը։

— Սթափուելով Իգիթը, կարծես քնած լինէր, ասաց բարձր ձայնով.—գիտե՞ս Սմբատ ջան, ես նրա սիրոյ զօրութիւնովն է, որ կռւում եմ քաջութեամբ, և այս քանի ընդհարումներից ես միայն ողջ մնացի, այս նրա սիրոյ զօրութիւնն է, ես նրան եմ պարտական, իսկ եթէ այս ընդհարումից էլ ողջ մնացի, ինձ հաւատացէք որ պետք է գնամ ու կատարեմ խոստումս։

Այսպիսի խօսակցութեան մէջ, յանկարծ աչքը ընկաւ երիտասարդներից մէկի երեսին, ու բարձր ձայնով հառաչեց, էլի նայեց հետաքրքրութեամբ,

Կարծես լուսինը դիտմամբ իւր շողերը ձգել էր Վարդուհու երեսին, որպէս զի գաղտնիքը երեւան հանէ։

— Սմբատ ջան ո՞վ է այդ երիտասարդը, որ ոչ մազ ունի երեսին, ոչ էլ մորուք։ Ա.դպէս երիտասարդը ի՞նչպէս թողեց աշխարհի փառքը ու միացաւ մեզ հետ։

— Չ'գիտեմ Իգի՛թ, այդ բանը իրեն պէտք է հարցնես։ Իրեն կամքովը եկաւ մեզ հետ։

Սմբատը ձեռքով կանչեց Վարդուհուն Իգիթի մօտ։

— Ով ես, գեղեցիկ երիտասարդ, որ այս երիտասարդութեան մէջ, յանձն ես առել, մեռնել այս արեան դաշտում, թողնելով աշխարհի բոլոր զւարճութիւնները. Անունդ ի՞նչ է, կ՚շնորհե՞ս ինձ.

— Վարդան է պարոն խմբապետ։

— Վարդան ջան, պատմիր թէ ի՞նչ տեսակ, և ի՞նչը ստիպեց քեզ որ գաս ու միանաս պարոն Սմբատի խմբի հետ։

— Մէկը հայրենեաց սէրը, մէկն էլ մի ուրիշ անհատական սէր...։

— Շատ լաւ ասացիր, ազգային սէր ունենալը ամէն մէկ անհատի պարտականութիւնն է, որ ես հասկացայ, իսկ անհատական սէրը ո՞րն է որ ինձ անհասկանալի է։ Եթէ մենք ունենայինք օրիորդաց խումբ, և դու ունենայիր մէկ սիրահար այդ խմբի մէջ, և թէ չ՚կարողանայիր առանց նրա ապրել, ու չ դիմանալ նրա սիրոյ բուռն հրդեհին, այն ժամանակ, ես կ՚համբուրէի քո ճակատը, որ եկել ես քո սիրոյ իդեալին փըրկելու և քո արեան գնով նրան արժանանալու։

— Այո, ճիշդ էք ասում, պարոն խմբապետ, ճիշդ գուշակեցիք իմ սիրոյ իդեալի գաղափարը, բայց ոչ թէ աղջկայ վերայ է իմ ունեցած սէրը, այլ տղայի, իմ ընկերին վերայ է, ես նրան սիրում էի ինչպէս իմ հարազատս, նա եկաւ ազգի համար մեռնելու, նրա ազատման, նրա բարենորոգման համար զոհւելու, ես էլ վճռեցի նրա հետ գալ, ու նւիրւել իմ ազգի սիրոյն.

Սմբատ ջան կարո՞ղ ես ինձ ասել թէ ո՞րն է նմանում այս երիտասարդը.

— Կարող եմ, Իգիթ, ես արդէն տեսնելուս պէս գուշակեցի ու իմացայ։

— Դէ՛ ասա եթէ կարող ես։

— Բեր ականջիդ ծածուկ ասեմ. «Վարդուհուն է նմանում։»

— Բրաւօ, Սմբատ ջան արժէ քու ճակատդ համբուրել։

Երկու խմբապետ իրարու հետ էին խօսում բայց Վարդուհին ընկել էր մտածմունքի մէջ. ի՞նչ անեմ արդեօք, յայտնե՞մ իմ ով լինելս ու գնամ փաթաթւեմ նրա պարանոցով, Ցայտնեմ որ դու ես իմ կորցրածը, ես քո սիրոյ չը դիմացայ ու եկայ այստեղ, այս հողերում իմ կորուստը գտնելու, ու գտայ, ուրախացայ. Ո՛չ, աւելի լաւ է առ այժմ գաղտնի պահեմ որովհետև կարելի է նա իրեն կորցնի ուրախութիւնից։ Մանաւանդ որ նախախնամութիւնը կանանց տւել է ատ մեծ ուժ, համբերելու համար. Ես ինձ սառնասիրտ պէտք է պահեմ մինչև այն ժամանակ, որ յետ դառնալու լինենք. Միայն այն ժամանակ ես կը յայտնեմ նրան։

Դուռը բացւեցաւ։ Մեր խումբերը աւելի եւս բարձրացան սարի գագաթը, և գտնելով մի քարանձաւ ներս մտան մի քիչ հանգստանալու, որովհետև անընդհատ կռիւներից, բոլորովին յոգնած էին։

Բոլորը հաւաքւեցան քարանձաւի մէկ անկիւնը, ու սկսեցին պառկել հանգստանալ։ Միայն երկու հոգի կային այդտեղ որ մաշւում էին, հանգստութիւն չունէին, ու գաղտագողի իրար երեսի էին նայում. Վարդանը նայում էր Իգիթի երեսին, տեսնում որ Իգիթը քանի գնում թուլանում, գունատւում, երբ իւր վրայ է նայում. «Պ. խմբապետ, ի՞նչ ունես սրտումդ, ի՞նչ գաղտնիք ունես պահած որ քանի ինձ նայում ես այլափոխւում ես, նեղանում, ինչպէս երեւում է ունի՛ս մի գաղտնիք որ այդ քաջ սիրտդ կտրատում է, կըրծատում.

— Է՛հ Վարդան, իմ վէրքերս մի բանայ, թող իմ սիրտս տանջւի, տանջւի, մաշւի ես ցաւագար մարդ եմ սիրելիս, եթէ Աստուած չը խղճայ վէրքս, այս ցաւովը գերեզման պէտք է մտնեմ։

Այդպէս յուզուած, առաւ մէկ մեծ քար և թինգտեց այդ քարի վրայ ու աչքերը նորից յառեց դէպի այդ երիտասարդը։ Մէկ էլ տեսնես աչքերից արտասուք վազեց, ու սկսեց ինքնիրեն ասել, այս սիրահարական ոտանաւորը,

Ո՛հ, ի՛մ քնքոյշ, ինձ մոռացար,
Իմ ճարս ո՞նց կը լինի.
Այսուհետև թող ինձ համար
Արևի լոյսը խաւարի.

Թողնելով ինձ անմխիթար,
Սէր իմ, ո՛հ դու ո՞ւր կը դիմես,
Ո՛հ որոշումդ է անտարբեր,
Ես կը մեռնեմ առանց քեզ։

Երազ է այս որ կը տեսնեմ,
Կամ թէ ցնորք խօլական
Ուշքս կերթայ և ո՛ւր եմ
Ո՛հ ցաւալի տեսարան։

Իգիթը յիշեց իւր անցեալը, որ թողել էր մէկին, որին պատուիրել էր սև հագնել, մինչև իւր գալը. Նա յիշեց որ ինքը վիրաւորուած էր Խ. գաւառում, տարւեց Հայրօյի տունը և նրա հարսը, խաթունը, աշխատում էր նրա վէրքերը բուժել, Նա նորից մրմնջաց ինքն իրան, «Մի անիծեր ինձ, իմ հրեշտակ, մի անիծեր այլ օրհնիր։ Սպասիր սպասիր իմ գալստեանը։

Այդ միջոցին Վարդանը դուրս եկաւ քարայրից նստեց սարի կուրծքին ու սկսեց ոխից նորից մտածել։

Ի՞նչ անեմ Աստուած իմ, գնամ յայտնեմ իմ ով եղածը և համբուրեմ նրան, նրա գլուխը դնեմ իմ այս այրուած կուրծքին լամ ու խնդա՞մ։ Աստուա՛ծ, դու ինձ համբերութիւն տաս, եթէ ո՛չ...

Այս մեռելական վայրկեանին, ուր քարանձաւը տիրում էր խորը լռութիւն. Սմբատը խնդրեց երիտասարդներին որ գոնէ ցած ձայնով երգեն մի ուրիշ յեղափոխական երգ, որպէս զի փոքր ինչ խրախուսւին։

Սարոն որ բուն Սասունցի էր, ամենաճարպիկութեամբ առաջ ընկաւ, և երգեց...։

Ով որ քաջ է ի՞նչ կսպասէ
Արդէն ժամանակ է թող գայ
Մահու պատրաստ պատերազմ է
Ով որ անվախ քաջ է թող գայ։

Երկաթէ մարդ քարէ հոգի
Վրէժխնդիր լինել Թուրքին,
Աշխուժով քարի տակ չոքենք,
Անսխալ խիղճը թող գայ։

Մեր Սասունն է սաբի սխման
Կռիւ ունենք միշտ ահսահման
Կռւով պիտի փրկենք Հայաստան
Ով որ ազնիւ մարդ է թող գայ։

Այս հինգ դար է մեզ կ՚սպանեն
Բռնի կրօնից կ՚հանեն
Հարս ու աղջիկներս կ՚տանեն
Նամուս ունեցողը թող գայ։

Հայդուկային խումբը երգում էր առանց երկար ու բարակ մտածելու, բոլորն էլ տաքացել էին, խրա-

խուսել։ Միայն կար երկու սիրտ որ տխուր էին. տրոփում էր նրանց սրտերը, ապրում էին հեռու իրարից, չ'նայելով նրանք այդ պահուն միմեանց մօտ էին գտնւում, բայց Իգիթի խելքը, ուշադրութիւնը, նրան յիշելու համար թռնում էր սարերի վերայով, ձորերի միջով, անչափ ու անսահման հեռաւորութիւններով։

Խումբը այնպիսի մէկ դրութեան մէջ էր գտնւում որ կարծես թէ հարսանիքում լինէին։ Ու չէին մտածում թէ մի քանի ժամից յետոյ նրանցից ո՞րը ողջ կը մնայ։

— Տղերք ասում է խմբապետը. կատակ անելու ժամանակ չէ՛, վերցրէք հրացանները մաքրացրէք, ով գիտէ թէ ի՞նչ կարող է պատահել. Սրան կասեն Սասուն. սա մի ժամանակ աժդահաների վայր էր դարձած, սրա վերայից չարը պակաս չէ եղել, աշխարհի սկզբից մինչև վերջը։ Այստեղ ամենայն դէպս մարդ իրեն չ'պէտք է կորցնի, ու կազմ, պատրաստ պէտք է լինի ամէն վայրկեան։ Գիտէ՛ք, պարո՛ններ, մթնոլորտը խառնւած է երեւում, նայիր այն աստղի՛ն, նայիր Սմբատ, կարծես թէ պէտք է յափշտակի միւսին, չ'նայելով լաւ գուշակութիւն չէ՛, բայց ես քանի որ փորձել եմ պէտք է որ հաւատամ։

Խ. գաւառում շատ մեծ անհանգստութիւնն կայ Սմբա՛տ, ինչպէս երեւում է, նրանք վտանգի մէջ են։ Քանի որ Անդրանիկը լսում է թէ այս կողմերումն է, մենք գնանք Խ, գաւառը նրանց պաշտպան հանդիսանանք, մանաւանդ որ ես ծանօթ եմ այն տեղի բոլոր ճանապարհներին։ Ա՜հ Սմբատ չես զարմանար որ ես հին չորանութիւն էլ արեցի մինչև կարողացայ նոր խումբեր կազմել։

— Ճի՛շդ է, Իգի՛թ, քիթս նորից արիւնի հոտ առաւ։ Քո գուշակութիւնը սխալ չէ՛, ուրեմն պատրաստուինք, որ քանի շուտ է մի ճար անենք։

—Տղերք, մի նոր բան միտս ընկաւ. Ես քանի որ այնտեղ էի, լսում էր որ իբրև թէ քիւրդ ցեղապետը փէրման է ստացել որ միանայ էսկեարների հետ, ու յարձակւում գործեն, բռնեն ապստամբներին։ Մենք որ գնա՛նք նախ և առաջ կուղարկենք երկու ընկեր, որ գիւղացիներին յայտնեն աղէտի մասին, մինչեւ որ մենք կ'հասնենք, համաձա՞յն էք։

— Համաձայն ենք, այո՛, ինչպէս որ կարգադրես մենք իրաւունք չունինք հակառակ հանդիսանալու։

Երկու հոգի գալիս են Խ գաւառի Բ. գիւղը։

Օրը շատ պարզ էր. աշնանային արեւը իւր անտաք ճառագայթները ձգել էր երկրի վերայ, ու հալեցնում էր նոր եկած չաղը։ Գետինը շատ խոնաւ էր, կանանչների վերայ նստել էլ չէր կարելի։ Քարերը կարծես թէ սառուցից ձուլւած լինէին. Արեւը իւր բնական խաբեբայութեամբ՝ մէկ դուրս էր գալիս, հանում իւր գլուխը, մերթ փակւում նորից, ամպերի մէջ։

Մեր պատգամաւորները եկան Բ. գիւղը, օրը արդէն կէս օր էր։ Գիւղացիները դուրս էին եկել, գիւղամիջի մեծ ծառի տակ, նստել, ու խօսակցում էին թէ ինչպէս բոլոր կողմերում կոտորած եղաւ, թալան եղաւ բայց իրենց կողմերում չեղաւ։

Ծերերից մէկը ասում է,

—Դու ողջ լինիս Ռէս Գալօ, քո պատիւն է որ մենք կ'վայելենք, քո սայէիցն է որ մենք կ'ապրինք, թող Աստուա՛ծ քո կեանքը երկարացնի քո որդիները բաշխի։

—Ճի՛շդ է, «էֆէնդիմ» իմ պատիւը սարերով ու ձորերով է մեր քիւրդ աղաների մօտ, եթէ ես չ'լինէի Ռէս, և իմ տեղը ուրիշը լինէր, հաւատացէք որ այս

գիւղում մարդ չէր մնացել, օջաղ չէր մնացել, որ չ'քանդուէր:

Ռէս Գալօն սկսում էր իրեն գովել, որ գիւղացիք աւելի եւս վախենային նրանից, կամ տուգանք առնելու ժամանակ չ'կարողանային իր վերայ խօսել. Նա միշտ պարծանքով էր խօսում գիւղացիների հետ, «որ ես չ'լինիմ, բոլորդ էլ կ'կոտորուիք, իմ սայից է որ ապրում են մեր գիւղացիները»։

Գիւղացիները տեսնում են որ գալիս են դէպի իրենց երկու հոգի կտրիճ երիտասարդ, եափունջան վերաները, մեծ չէրքէզի փափախները գլխներին, մէկ մէկ փայտ ձեռքերնին մարգարէի քայլերով մօտենում են իրենց։

—Բարի օր ձե՛զ, եղբայրնե՛ր։

— Բարով տեսանք ձեզ երիտասարդներ։

—Եղբայրներ ո՞րն է ձեր գիւղապետը, մենք մի քիչ գործ ունինք յայտնելու, խորհրդակցելու։

—Ես եմ գիւղապետը, հրամե՛ցէք, նստեցէք։

Ռէսը մի այնպիսի շեշտով ասաց այդ վերջին խօսքերը, որ կարծես թէ ցանկանում էր նրանց հնազանդեցնել իրեն առաջ։

—Եղբայրնե՛ր, լսում է որ այս տեղի քիւրդ բէգը. Հասան աղէն, պէտք է միանայ էսկեարների հետ ու պէտք է ձեզ կոտորի և թալանի ենթակայ անի։ Արդեօք դրա փոխարէն ի՞նչ պատրաստութիւն էք տեսել, կարո՞ղ էք ձեր պատիւը պաշտպանի թէ ո՛չ։

Գիւղացիները բոլորը շւարած նայեցին ծերացած Ռէսին երեսին, որ մէջքը տուել էր ծառի արմատին նստել յաղթական կերպով. ինչպէս մէկ նահապետ։

—Ո՛չ, Հասան աղէն մեզ ո՛չ կ'կոտորի ոչ էլ կ'թալանի, նա իմ պատուի համար, իմ աղ ու հացի խաթրի համար կ'խնայի մեր գիւղացիներին։

—Ռէ՛ս, վերջը դու կ'փոշմանե՛ս։

Երիտասարդներից մէկը գնաց մի ինչ որ բան փսփսաց, ու յետոյ ինչպէս խռոված մարգարէ ելան այն տեղից ու իրենց թոյլ ոտքերը քաշ տալով, փայտը առան ձեռքերը, ու գնացին առանց յետ նայելու։ Ծերունի Ռէսը, մի քանի վայրկեան լռութիւն պահպանելուց յետոյ սկսեց խենթի նման գոռալ։

—Դո՛ւրս, դո՛ւրս իմ գիւղից, անխիղճնե՛ր. աշխարհը քանդեցիք, հիմա էլ իմ գիւղն էք ուզում քանդել... իմ գիւղը ոճրագործի գիւղ չէ, իմ օջախս ձեր պէս աւազակների համար փակ է, իմ որդուն էլ գլխահան արեցիք, տարա՛ք, կորցրիք, հիմայ էլ մեր գիւղի գլխի՞ն էք ուզում խաղալ ձեր կապիկական խաղերը». ու էլի շատ բաներ, հայհոյանքի կոյտեր էր որ թափում էր խեղճ երիտասարդների ետեւից։ Երիտասարդները գնացին գիւղից հեռու, սպասեցին Իգիթի ծրագրած տեղում, մինչեւ նրանց գալը։ Մութը գիշեր էր։ Երիտասարդները եկան գիւղին մօտ, մէկ ապահով տեղում սպասեցին։

Մէկ էլ լսում է շների հաջոցի, ունոցի ձայնը, որ ահագին աղմուկ էին հանում փողոցներում, և կարծես թէ ցանկանում էին յայտնել իրենց տէրերին այդ չարագուշակ աղէտի պատուհասութիւնը։

Իսկ ծերունի Ռէսը չէր կարողանում մոռանալ այդ երիտասարդներին, նրանց դէմքերը, մանաւանդ այն երիտասարդը, որ նրա ականջին մի ինչ որ բան փըսփըսաց։ Նրա երեւակայութեան մէջ էր նաեւ նրանց քայլերը, թէ ի՞նչպէս իրենց թոյլ ոտքերը քաշ տալով խռոված մարգարէի պէս հեռացան այս տեղից։

Շատ կարելի էր որ քաջցած լինէին խեղճ երիտասարդները։— Ա՜խ, ես ինչո՞ւ վշտացրեցի նրանց, այն անմեղ երիտասարդներին,

—Հապա՛ այն երիտասարդը որ ինձ ասաց. «Ծերունի չփոշմանես, Ռէս, վերջը դու կ՚զղջաս»։ Այդպիսի ա տարբեր դրութեան մէջ էր Ռէսը, ու ծխախոտը ծխում էր ագահութեամբ, ու մուխը քուլայ-քուլայ հանում իր չորացած բերնից, իր ճերմակած մօրուքը թափ տալով։ Ցանկարծ ներս է մտնում գիւղի Գզիրը, ու ասում։

Ռէս, քո տունը չքանդուի կորած ենք։

—Ի՞նչ եղաւ Գզիր, այլայլուած հարցնում է Ռէսը։

—Բէգը և Հասան աղան միասին, ահագին զօրախմբով պաշարել են մեր գիւղը։ Ճար ունիս ճարդ տես։

Մի քանի վայրկեան ծերունի Ռէսը չփոթւում է։ Էլի ներկայանում են այն երիտասարդները, և հարծես թէ ականջին դեռ լսում էր այն խօսքերը «Ռէ՛ս, չփոշմանես»։ Ովքե՞ր էին այդ օտարականները. արդեօք Աստուծոյ ուղարկած հրեշտակնե՞ր էին, որ եկան մեզ պաշտպանելու, բայց ես հեռացրեցի մեր գիւղից, հայհոյեցի իմ չորացած բերանով։

—Ռէ՛ս, ի՞նչ մտածեցիր, ժամանակ կորցնելու համար մենք կը տուժենք, վեր ել, ինչ անելու ես արա՛։

Ռէսը վեր ելաւ, կոտրուած սրտով Գզիրի հետ գնաց և ի՞նչ է տեսնում, հարուրաւոր թուրք, քուրդ խուժանը միմիանց հետ միացած, պաշարել են գիւղացիներին, Մէկ էլ փոխուեցան մի ուրիշ թաղ, այնտե՛ղ, որտեղ ինքն էր նստած, միեւնոյն ծառի տակ նստել էր Հասան աւազակապետը, ոտքը ոտքի վերայ դրել ու հրամայում էր կոտորել, այն ժողովրդին որոնք յոյսերնին դրել էին Ռէսի վերայ, որո՛նց, Ռէսը ասում էր, գովում էր իրեն նրանց առաջ, որ իմ սաէյէցն է որ դուք ապրում էք։

Ռէսը մօտեցաւ, ծունկ չոքեց ու ասաց։—Աղա, քո ոտքը պաչեմ, իմ աղու հացին խնայիր. այն մէկ բեռ

աղու հացին խնայիր որ միատեղ կերել ենք։ Իմ ձեռը քո փեշն եմ ձգել աղա՛ս, ի սէր Աստուծոյ, ի սէր «Ալլահի»։

—Ե՛լ, կանգնի՛, Ռէ՛ս Գալօ, ե՛լ, ու զուր տեղը գլուխս մի ցաւայնի. ես քեզ պաշտպանել կարող եմ, բայց Ձեր գիւղը չեմ կարող. եթէ ցանկանում ես ազատել այս վտանգից, կարող ես քո ընտանիքով փոխադրուել իմ տուն. ես միայն այսքանը կարող եմ անել։ Իսկ ինչ որ վերաբերում է ձեր գիւղացիներին, ես պաշտպանել անկարող եմ, որովհետեւ մեզ հրամայուած է մեր արդարադատ մայրաքաղաքից «Ստամբոլից» ապստամբ ժողովրդին սուր քաշել, ու ապստամբ փէտայիներին բանտարկել, կախաղան հանել։

Խօսքը վերջացրեց ու նորից որոտաց անգութ Բէգը.—Էսկեարնե՛ր, քիւրտե՛ր, թողնում եմ ձեր կամքին ինչպէս կուզէք այնպէս վարուեցէք այս գեաւուրների հետ։

Ծերունին չէր սպասում այսպիսի մի կտրողական պատասխան, իր երկար տարւայ աղ ու հացկեր բարեկամից, որ իր որկորը լցնում էր միայն հայի տների փշրանքները։

Ծերունին կաթւածահար եղածի պէս վազում է ու մտածում, գոռում.

— Երիտասարդնե՛ր, ո՞ւր էք, ո՞վ էիք, եկէ՛ք, եկէ՛ք ազատէ՛ք մեզ, ես ձեզ չէի ճանաչում, ձեզ Աստուած էր ուղարկել ինձ փրկելու, մեր գիւղը ազատելու։ Ես ձեզ, չը ճանաչեցի, ներեցէք ինձ, ներեցէ՛ք սուրբ առաքեալներ, հա՛ եկա՛ք, եկէք ձեզ մատաղ, եկէք։ Ծերունին խենթի դեր էր կատարում, իրեն կորցրած, խօսում էր առանց դատողութեան, և նրա երեւակայութեան մէջ միշտ տպուած էր նրանց պատկերը, Ծերունին գլուխը առած վազում էր գիւղամիջով, ինչպէս անսանց ձին դաշտում։

Մէկ էլ կանգ առաւ, վերջին անգամ նայեց իւր գիւղի վերայ, իւր խեղճ ու կրակ գիւղի վերայ, և ի՞նչ է տեսնում, աղմուկներով, ճվճւոցով, հարա հրոցով փախնում են գիւղացիք, ո՞րը երեխան գիրկը առած, ո՞րը վզովը ձգած, մի խօսքով մի բազմաթիւ բազմութիւն, մի թշուառ բազմութիւն։

— Ո՞ւր էք գնում աղբրտանք, ի՞նչու թողեցիք ձեր տուն ու տեղը, հետ դարձէք թող մեզ սպանեն, մեր օջախներում, մեր յարկերի մէջ։

Ո՛վ կ՚լսի ծերունի նահապետի խօսքերին, ամէն մարդ ցանկանում է իւր գլին ազատել վտանգից, փախնում են, ինչպէս խսիրը փռած գետնին։

— Չէ՛ք լսում, հա՛, հապա ես ինչո՞ւ եմ գնում, ո՞ւմ համար, ուրեմն դուք ազատեցէք ես կը մեռնեմ ձեր տեղ. ես չեմ փախնի, ես եմ յանցաւորը թող ինձ դատեն։

Այս ասաց ու գնաց շուտ շուտ դէպի իրենց տունը։ Եւ ինչ զարմանք, տեսնում է որ Բէգը նստած իրենց տան յարկի տակ, հրամայում է թալանել Ռէսի տունը, այն պայմանով որ հարսը, գեղեցիկ Հռիփսիմէն տանեն իրենց տուն, այսինքն Ռէսի տան կողոպուտը ընծայում է աւազակներին իսկ հարսը ինքն է տանում։

Իսկ ծերունի պառաւ կինը, իւր մազերն էր փետում, Բէգի ոտքերն էր համբուրում, աղերսում էր։ — Բէգ, մեր աղու հացին խնայիր, իմ հարսին մի տանիր. մի խօսքով արտասուքը ծով չինած պառաւը իւր ծծերը դուրս էր գձել ու աղաչում էր գոնէ Աստուա՛ծ մի օգնութիւն անի։

— Շուն պառաւ, հեռացիր ոտքերիցս, ի՞նչ ես քեաւթառ շան նման ոտքերս լիզում, քո հարսը ձեր լեաղի կին չէ՛ նա՝ ինձ համար է ստեղծուել, դու

կարծում ես որ ես ձեր տուն եմ գալիս քո քեաւթառ երե՞սը տեսնելու. կամ քո շո՞ւն մարդուն, ո՛չ, ես գալիս էի քո հարսի համար, ես սիրում էի նրան, հիմայ էլ պէտք է տանեմ ինձ կնիկ անեմ, այսքան հայ կանանց մէջից ի՞նչու ես ալ չունենամ, բոլոր Խաները, Բէգերը ունեն, իսկ ես չունենամ, հեռացրէք էսկեարներ, կամ եթէ չ՚հեռանա, շան նման սատկացրէք։

Խեղճ պառաւը, ձեռքերը բարձրացրեց ու վրէժխնդիր լեզուով թափեց հազար ու մի տեսակ նախատինք երկնքի երեսին, այն անամօթ երկնքի երեսին։ Ա՛խ անգութ Աստուած գեղեցիկ հարս ու աղջիկ ունենալն է՞, մինչև անգամ չի կարելի այս անխիղճ աշխարհում։

Ի՞նչ անենք, Աստուծոյ տուած գեղեցկութիւնը ո՞րտեղ պահենք, ա՛խ ջանաւարները հազար անգամ գութ ունեն քան թէ մարդիկ։

Այս տխուր տեսարանին չ՚կարողացաւ դիմանալ խեղճ ծերունին. Սուրը քաշած և բռնած ձեռքը, ինչպէս Հայկ Նահապետը, յարձակւեց էսկերների վերայ, իւր համար ճանապարհ բանալով։

— Շնե՛ր, որոտաց ծերունին, իմ յարկս էլ պղծեցիք, իմ հարսիս էք քաշում տանում. Ու բոպէական կայծակի արագութեամբ թուրը խփում է, իջեցնում է Բէգի գլխին. բայց դժբախտաբար, Բէգին չի կպնում հարուածը, այլ մօտին կանգնած քուրդ պահապանին։

Շւարել էին աւազակները, այս ծերունու քաջութեան վերայ։

Բէգը սթափւեց ու գոռաց քիւրդերի վերայ։

— Բռնեցէք այդ շանը, և կապեցէք այդ սեան վերայից։

Հրամանը կատարուած էր։ Պառաւ կինը որ տեսաւ

իր ծերունի մարդու այդ չարչարանքը, յարձակուեցաւ քիւրդերի վրայ իր ձեռքի երկաթով հարուածեց ու գլորեց ցած մի քանի քիւրդի։ Այդ ժամանակ Բէգը հրամայեց «կրակ»․ մի քանի վայրկեանից յետոյ թաւալում էին, տառապում էին իրենց արիւնի հետ շաղաղուած մի քանի տասնեակ հոգիներ։

Յանկարծ լսւեց մի շան հաչոց, որ ահռելի ձայնով կապը կտրեց ու յարձակուեցաւ քիւրդերի վերայ ինչպէս մէկ առիւծ։ Կարծես թէ հաւատարիմ կենդանին հասկացել էր իր տիրոջ այդ դրութիւնը։ Քիւրդերը հարուածում էին սրով, բայց արիւնլուայ շունը մարդկանց կծոտելով թռչնելով գլխների վերայից ընկաւ իր տիրոջ ոտքերի տակ։ Եւ արտասուքը հեղեղի պէս թափւում էր հաւատարիմ կենդանու աչքերից՝ Ծերունին բացեց իր չորացած աչքերը և տեսաւ իր հաւատարիմ շանը, մէկ ա՛խ քաշեց և մրմնջում էին նրա շրթունքները

— Ա՜խ, ո՞ւր էք փրկարար հրեշտակներ, եկէ՛ք, հիմայ ազատէք ինձ։ Ո՞վ էիք արդեօք։

Ցնչեց, յնչեց այն խօսքերը, որ երիտասարդներից մէկը գոռաց «Ուէ՜ս երանի չ՚փոչմանես»։

Բէգը իր հրամաններով էր զբաղուած, երբ լսւեց հրացանի ձայներ, աղմուկ աղաղակ։

Բէգը կարծեց թէ իր եղբայրն է, և եկել է իրեն օգնութեան, ու տեղից չ՚շարժեցաւ։

Բայց ձայնը, հրացանաձգութիւնը, քանի գնում աւելի ու աւելի սաստկանում էր։ Յանկարծ, քիւրդերը լեղապատառ դալիս են Բէգի մօտ ու ասում։

— Բէգ, օգնութիւն, էլ քիւրդ չմնաց բոլորը կոտորեցին։ Օգնութի՛ւն, գոռում էին քիւրդերը լեղապատառ։

Բէգը ցանկանում էր շարժուել իր այդ չւարած

դրութիւնից երբ ներս թափւեցան երիտասարդներ միայն Բէգը լսեց մի բարձր ձայն, որ որոտաց ամպի պէս։

— Տղերք, ջարդեցէք անխնայ, այդ անաստուածներին։ Այդ տեսանք, մօտ յիսուն հոգի ընկան քիւրդերից, և շան նման թաւալում էին գետնին։

Բէգը, բարկացած որոտաց, քիւրդերին։

— Կրա՛կ, և սկսեցին կռիւ։ Կռիւը շատ սոսկալի էր՝ Բայց և այնպէս քիւրդերը հարիւրաւոր մարդ թողնելով, փախան ազատուեցան։ Երիտասարդները գնացին ծերի մօտ որ ձեռք ու ոտքերը բանան, բայց ծերունին, դեռ չէր մեռած հոգեւարք դրութեան մէջ բացաւ աչքերը, և բացուած ձեռքը սկսեց պտտցնել օդի մէջ,

— Մարդ է փնտռում խեղճը, ասաց խմբապետը, այնտեղ, որ վիրաւորուած էր նաև ծեր Նահապետի որդին, մօտեցաւ փաթաթուեցաւ հօր պարանոցով, ու սկսեց համբուրել հօր ձեռքը,

— Հա՛յրիկ, անբախտ հայրի՜կ, ե՛ս եմ, քո մին ու ճար որդի՛ն։ Ծերունին մօտեցրեց իր որդու ճակատը իր չորացած շրթունքներին և համբուրեց, փափաքը առաւ,

Այս այն քաջ երիտասարդն էր որ Իգիթի գաղափարները համակրելով, Իգիթի անբաժան ընկերն էր դարձել, սարերի ձորերի, մէջ էին ապրում միասին։ Ծերունին էլի իր ձեռքը պտտեցրեց օդին մէջ։

— Ո՞ւմ ես փնտռում, հայրիկ ջան, հարցնում է որդին,

— Նր․․․անց․․․այն․․․առաքեալներին։

Իգիթը մօտեցաւ, համբուրեց ծերունի Նահապետի ձեռքը։ Ծերունին իր հոգեւարք դրութեան մէջ, բացաւ իր աչքերը գէթ վերջին անգամ, ու սկսեց ան-

հասկանալի ձայնով ղլղլալ, որ հազիւ կարելի էր հասկանալ այս խօսքերը։

—Նե...րեց...էք...մեզ...փրկ...արար...հրեշտակ...ներ, մենք...չէինք...կար...ողա...ում հասկան...ալ որ...մեր...փրկ...ութիւնը...ձեր...ձեռ...քով...պէտ...քէ լինի...ներեցէք...նե...րեց...էք...ինձ...և...մեր...գիւ...ղա...ցիներին...մնաք...բա...րեաւ...թող...Աստ...ուած ձեզ...աջո...ղու...թիւն տայ։ Ահա այս խօսքերով փչեց խեղճ ծերունին իր վերջին շունչը։

Երիտասարդները, աւարը յանձնեցին գիւղացիներին ու պէտք է գնային։ Երբ խմբապետի աչքը ընկաւ ընկերների վերայ շատ զարմացաւ որ մօտ երեսուն հոգուց մնացել էին տասն և երկու հոգի։

Խմբապետը վերցրեց իր ընկերներին, արշաւեցին մօտակայ ձորը։ Ճանապարհին հանդիպեցան հարիւր հոգուց բաղկացած մէկ աւազակաց խմբի, որոնք ո՞վ գիտէ թէ ի՞նչ դիտաւորութեամբ էին գնում։ Կամ աւերելու, կամ թալանելու, կամ սուր քաշելու։ Մեր խումբը կանգ առաւ։

—Բի՞մ սէն. գոռում է աւազակապետը։ Ձայն չ'կայ, մերոնք ոչ մի ձայն չեն հանում։

Այդ ժամանակ նրանք մէկ անգամ բոլորը մէկէն հրացանազարկ են անում Հայ Ֆէտայիներին։ Իսկ երիտասարդները տեսնում են որ էլ ուրիշ ճար չ'կայ, սկսում են պատասխանել նորից հրացաններով։ Սկսւում է կռիւ, մեր երիտասարդները չնայելով իրենց փոքրամասնութեամբ, բաւական ժամանակ դիմանում և դէմ են կանգնում։ Խմբապետը տեսնում է որ տասն ու երկու ընկերներից մնացել են միայն երեք հոգի։ «Տղե՛րք եթէ տ.գպէս է ազատեցէք ձեզ եթէ կարող էք։

Գիշերը մութն էր, շատ սաստիկ մութը, երեք հոգին էլ միասին փախնում են դէպի ձորը, և անհետանում։

Թիւրքերը տէրը կորցրած շների պէս սկսում են փնտռել ամէն տեղ, բայց ի զո՛ւր, ապարդիւն է անցնում ամէն բան, չեն կարողանում բռնել։

Մի քանի ժամից յետոյ, երեքը որ միասին էին փախել, եկան նստեցին մէկ ծառի տակ ու սկսեցին միմեանց հետ խօսել, ու չէին ճանաչում թէ ո՞վ ընկերներն էին ընկնողները. Սմբատը նայեց, կարծես թէ մի բան, մի աղօթք մրմնջաց ինքն իրեն։ Ազատուածներից մէկը Իգիթն էր, Վարդուհին ու Սմբատը։

Սմբատը նայում է Իգիթին, որ քանի գնում թուլանում է,

—Ի՞նչ եղաւ քեզ, Իգի՛թ, ինչո՞ւ ես այդպէս դրութեան մէջ, չլինի թէ վիրաւորուեցար։

Զ'գիտեմ սիրելի Սմբատ ձեռքս շատ սաստիկ ցաւում է։

Սմբատը նայեց ու զարմացաւ որ ամբողջ թևի մէջ, արիւնը լեռթացել էր։

—Վարդա՛ն, թաշկինակ չունի՞ս արդեօք որ Իգիթի վէրքը կապես։ Կարծես թէ Վարդանը այդ հրամանին էր սպասում, հանեց թաշկինակը և ամուր կապեց թևը։

Իգիթը յանկարծ սթափւեց, որ տեսաւ թաշկինակը։ Այդ այն թաշկինակն էր, որ Իգիթը թողել էր Վարդուհու մօտ իբրև յիշատակ. Բայց Վարդուհին անզգուշաբար միևնոյն թաշկինակով կապում նրա թևը։

Իգիթը երբ որ տեսնում է թաշկինակը, կաթւածահարի պէս գետին է գլորւում, Սմբատը հասկանում է գործի եղելութիւնը, ու բարձր ձայնով գոռում է...,

—Վարդուհի ինչ արիր․ այսքան ընդհարումների մէջ քեզ կարողացար պահել, բայց այս մի փոքրիկ անզգուշութիւնից մարդու պէտք է սպանե՞ս։

Սմբատը եկաւ, Իգլիթի գլուխը դրեց իր ծնկներին ու սկսեց աղերսալից խօսքերով խնդրել, բայց Իգլիթի շնչառութիւնը կտրւում էր։

Վարդուհի, ջուր բե՛ր, գոնէ ջրով ուշքը տեղը բերենք, բայց Վարդուհին ինչո՞վ ջուր բերէր, կամ ո՞րտեղից գտնէ, յուսահատ դրութեան մէջ, Վարդուհին սկսում է անիծել, իւր վիրաւոր սրտով, չորացած շրթունքներով։

—Յանկարծ լսւում է հրացանի ձայներ, ու հարայ հրոցներ, որոնք գոռում էին, լօ՜, լօ՜, Զնտօ,

—Սուս Վարդուհի, ձայն չ՚հանես, Աստուած գիտէ թէ ինչ կարող է պատահել։ Ահագին դէպքերից ազատուած հիմայ այսպէս մեր քաջ հերոսին չարժէ ի զուր տեղը մահուան պատճառ դառնալ։

Մի քանի վայրկեան, Սմբատը, Վարդուհին կպել էին գետնին և ձայն չէին հանում։

Միայն լսւում էր քիւրդերի ոռնալու ձայները, որոնք քաղցած գայլերի նման թափառում էին դիակների միջով։

Իսկ գիշերային բայղուշի ձայները սարսափեցնում էր մարդու, որ ողբում էին, բո՛ւ, բո՛ւ։

— Ձայներնիդ կտրէ, ինչ էք գոռում, էլ ինչ մնաց ամբողջ Հայաստանը աւերակ դարձաւ, էլ ինչ մնաց, որ ողբում էք, բաւական չէ՞։

Իսկ Սմբատը խրախուսում էր Վարդուհուն և ասում.

— Վարդուհի, լաց մի լինի, ոչինչ չկայ, նա շուտով կ՚առողջանայ միայն յանկարծ որ տեսաւ թաշկինակը կարծես թէ նա՛ այլայլւեց, թէ այս թաշկինա-

կը, որ ես եմ նւիրել իմ պաշտելի էակին ո՞րտեղից կարող է ընկնել ուրիշի ձեռքը։

Իգլիթը որ լսեց Վարդուհու անունը կարծես թէ մի քիչ սթափւեց ու ինքն իրեն սկսեց արտասանել․

— Վարդուհի՛, պաշտելիդ իմ, ես այնքան ընդհարումներից ազատւեցայ, Հայաստանը արեան լիճ դարձաւ, իսկ ես ի՞նչպէս մէկ թշուառ ձկնորս, թափառում էի այդ արեան լճակում, այս արեան դաշտում, ինձ ոչ ոք չկարողացաւ սպաննել, բայց ես ապրում էի քո սիրովը, քո սիրտն էր որ ինձ խրախուսում էր այս մարդակեր աշխարհում, իսկ հիմայ ես քո դաւաճանութեան զոհն եմ։ Ինձ դաւաճանե՞լ, այդքան շուտ մոռա՞նալ. գոնէ մեռա՞ծ լինէի, ա՛խ, երանի թէ ես էլ զարնուած լինէի, գոնէ ուրախութեամբ, իմ գաղափարներս առանց չեղելու գերեզման կ՚մտնէի, օ՜ քանդւի՛ր աշխարհ, ինձ էլ խորտակիր քո մէջ։ Սմբա՛տ, այստե՞ղ ես։

— Այո՛, սիրելիս, գլխիդ վերեւ նստած։

— Սմբատ տեսա՞ր, որ Վարդուհին ինձ դաւաճանել է, իմ տուած թաշկինակս տւել է ուրիշի, մէկ ուրիշ հերոսի։ Սմբա՛տ։ հրացանդ լի՞քն է—ինչո՞ւ Իգլիթ ջան, ինչո՞ւ ես հարցնում։

— Թող որ ինձ խփեմ սպաննեմ, կամ դու սպանիր ինձ ու գնայ, Աստուած քեզ հետ լինի։

Այդքան ժամանակ որ Վարգուհին, այն քաջ հերոսուհին, կծկւել ու լաց էր լինում Իգլիթի գլխավերեւում, էլ չկարողացաւ հանգստանալ, իրեն զսպել, փաթաթւեց Իգլիթի պարանոցով ու լացով աղերսալով ասաց։

— Իգլիթ ջան, իմ թանկագին սիրականս վեր կաց, տես թէ ո՞վ է նստած ու լաց է լինում քեզ մօտ։ Սիրելիս ես դաւաճան չեմ, ես քո սիրուց չկարողացայ

դիմանալ, սար, ձոր, ոտքիս տակը տալով եկայ հասայ քեզ, և քո հետ միասին կուում էի թշնամու հետ առանց յայտնելու իմ ո՛վ լինելուս մասին: Ե՛ս եմ, ե՛ս, իմ Թանկագին, վեր կաց, խղճայ ինձ, իմ սրտիս նորից վէրք մի բանայ:

Այս աղերսանքի վերայ, Իգիթը սթափւում է, նստում այնպէս, ինչպէս Ղազարոսը, յարութիւն առաւ իւ գերեզմանից Քրիստոսի խօսքերի վերայ: Նըստեց Իգիդթը նայեց իւր չորս կողմը ու հարցրեց Սմբա՛տ:

— Ի՞նչ է Իգիթ ջան, ի՞նչ ես ուզում,

— Սմբատ: ասա՛ ինձ, ես ո՞ր տեղից եմ լսում Վարդուհու ձայնը, արդեօք երեւակայութի՞ւն էր այս, թէ յիրաւի իրականութիւն...

— Ո՛չ Իգիթ իրականութիւն է, նայի՛ր, մօտինս Վարդուհին է:

— Ես եմ Իգիթ ջան, սիրականս, ե՛ս եմ, ե՛ս. քո սիրոյ կայծը ինձ այրեց, ես չ՛կարողացայ հանգստանալ. եկայ որ իմ արեան գնով քեզ ազատեմ: Այս ասաց Վարդուհին և իրեն ձգեց Իգիթի վզովը, մէկ ժամից աւելի էր որ լո՛ւռ մո՛ւնջ համբուրում էին միմեանց.

Իսկ Սմբատը իբրև ուխնդիր լուռ նայում էր այդ սրտաճմլիկ տեսարանին:

Բաժանւեցան երկու սիրահարները, ու սկսեցին միմեանց երես նայել, կարծես թէ չէին հաւատում իրենց աչքերին:

— Ասա՛ ինձ: ի՛մ հրեշտակ, ի՛նչը ստիպեց քեզ որ գաս ու կեանքդ վտանգես, միթէ չ՛խղճացի՞ր քեզ վերայ:

— Ոչ, իմ Թանկագին, քեզանից յետոյ ինձ համար կեանք չ՛կար: Սէրը, սէրը, իմ սիրական ինձ մղեց

այստեղ, ես ցանկանում էի քեզ հետ մեռնել, քեզ հետ ապրել:

Իսկ Սմբատը ամենաուրախ տրամադրութեամբ, լսում էր երկու սիրահարների խօսակցութիւնը և ուրախանում, որ ինքը ներկայ էր մէկ հարազատ և անբիծ սիրոյ, որոնք ցանկանում էին Հայրենիքի փրկութեան սեղանում կեանքը վայելել. կամ ապրել միասին, կամ մեռնել միասին:

Լոյսը բացւեցաւ: Արեւը իւր ճառագայթները ձգել էր խոնաւ գետնին, որ միայն գոլորշին էր երեւում:

Ամէն տեղ լուսաւորեց, լուսաւորեց նաեւ այն աւերւած տները, քար ու քանդ եղած օջախները: Արեւը գետինը տաքացնելով տաքացրել էր նաև այն անմեղ դիակները, որոնք թափթւած էին ամէն տեղում, ամէն քարի տակ, ամէն թփի վերայ: Մարդ[illegible] գետինը, կանանչ մարգագետինը կարմրագոյն էր դարձել, իսկ արիւնի հոտը խառնւել էր օդի հետ ու մի սոսկալի հոտ էր ձգել անհուն տարածութեան մէջ,

Մեր երեք հազւագիւտ հերոսները, եղբայրացած ճանապարհ էին գալիս անընդհատ:

Մի քանի օրից յետոյ պարսկական սահմանագլխից անցնում էին երեք հոգի ուրախ և զւարթ. դրանք մեր հերոսներն էին, որոնք գնացել ու իրենց պարտքը, իրենց խղճի պարտքը կատարել էին. և վերադառնում էին իրենց Հայրենիքը, իրենց հարազատների գիրկը, իրենց ծրագրած, երկրորդական նպատակները կատարելու,

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԻԳԻԹԸ, ՎԱՐԴՈՒՀԻՆ ԵՒ ՍՄԲԱՏԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Իգիթը գրել էր Վ. գիւղը որ իրենք վերադառնում են։ Իգիթի ծնողների ուրախութեանը չափ ու սահման չ'կար, Իգիթը վերադառնում էր իւր սրտի, իւր անբիծ սիրոյ հետ միասին։

Վարդուհու ծնողները իմանալով որ Իգիթը գալիս է Վարդուհու հետ միասին, մտածում են որ երկուսին էլ ձերբակալել տալով բանտ ուղարկէն։ Վերջապէս երկար տանջւելուց յետոյ գալիս են երեքը միասին Վ. գիւղի կայարանը։ Կայարանում սպասում էին Իգիթի եւ Սմբատի բարեկամ ու ազգականները, իսկ Վարդուհու տանից մարդ չ'կար, նրա ծնողները չէին եկել։ Վարդուհին նայեց որ իրենցից մարդ չէ եկել դիմաւորելու. սիրտը սկսեց յուզւել, չնայելով որ նա անբաւական էր իր հայր տէրտէրից, բայց նորէն սիրում էր իւր մօրը։ Վարդուհին կարօտացել էր, նա կարծում էր որ իւր մայրը կ'սպասեր իրեն, որովհետեւ երկար ժամանակ էր որ չէր տեսել իւր մինուճար աղջկան։ Վերջապէս նրանք փառաւորապէս առաջնորդւեցան Իգիթենց տունը։ Նրա մայրը տեսնելով իւր որդուն. և նրա սրտի էակին՝ ուրախութեամբ մօտեցաւ երկուսին և նրանց գլուխը դրեց իր կրծքին, և սկսեց մայրական ջերմ համբոյրներ դրոշմել նրանց երեսին. «Ա՜խ զաւակներս, դուք մէկմէկուց կորած էք, այս զոյգը հաւատալի զոյգ է, թող Աստուած ձեր նպատակները կատարէ. Ա՜խ չմեռնէի մինչեւ երկուսիդ պսակին արժանանայի»։ Իսկ Իգիթի հայրը ուրախութեամբ ընդհատեց կնոջ խօսքերը առե-

լով, «էլ ի՞նչ կայ, ի՞նչ է դժուարը, վաղը նոյն իսկ մենք կարող ենք կատարել ամուսնութեան հանդէսը եթէ իմ որդու պաշտելի հակի ծնողները ցանկանան։ Վարդուհին լսելով իր ծնողների անունը յանկարծ ա՜խ քաշեց, և ընկաւ անշարժ։

Այն օրիորդը որ լեռներում, դաշտերում, թշնամիներով պաշարուած, չէր ընկճւում, իր անգութ ծնողների անունը յիշելով գետին տապալւեց։ Այո՛, Վարդուհին մարեցաւ, բայց նրա յիշողութիւնը դեռ տեղն էր, նա յիշում էր այն սոսկալի անցեալները, որ ունեցաւ արեան երկրում, վերջապէս նա յիշեց իր ծնողներին, և վայրկենապէս գունատւեց, աւելի ևս սոսկալի դրութեան մէջ ընկաւ, աւելի ևս ուժասպառ եղաւ։ Տանը մէջ իրարանցում ընկաւ, մեծ ու փոքր սկսեցին իրար խառնուել, բժի՜շկ, գոռում է Իգիթի մայրը «Օգնեցէք հրեշտակիս» գոռում է Իգիթը։ Վերջապէս հազիւ հազ Վարդուհու ուշքը վերան բերին։ Վարդուհին փոքր ինչ խելքի գալով գոչում է մա՛յրս, մայրս կանչեցէ՛ք։

Մի քանի բարեկամներ գնացին Վարդուհու ցանկութիւնը կատարելու։

Բարեկամները մօտեցան տէր Ա-ենց դուռը և սկսեցին զանգահարել։

— Ո՞վ էք, հարցրեց Վարդուհու մայրը։

—Դուք դուռը բացէք երեցկին, մենք բարի հիւրեր ենք, եկել ենք ձեզ աւետիս տալու։

Դուռը բացին, ներս մտան մեր բարի հիւրերը։ Տէր հայրը իւր սովորական նեխութեամբ հարցրեց հիւրերին.

—Է՜, պարոններ, ասացէք ինձ խեր ըլլայ, ինչո՞ւ էք եկել այս կէս գիշերին մեր տունը, կնո՞ւնք կայ, պսա՞կ կայ, ի՞նչ կայ։

—Ոչ, տէր հայր, այդպէս բաներ չ'կայ, բայց

աղջիկդ եկաւ մեր Իգիթի հետ միասին, բնական է որ կուրախանաք, քանի որ նա ձեզ համար թանկարժէք է, քանի որ միուճար աղջիկնիդ է, այնպէս ինչպէս մերը։

Դեռ խօսքերը չէին վերջացրել որ տէր հայրը բարկութեամբ ընդհատեց նրանց խօսքերը։

—Ես կարծեցի թէ մի ինչ որ ծխակատարութեան համար է որ եկել էք եթէ ո՛չ, ես ձեր առաջ իմ դուռս չէի բանալ, ինձ աղջիկ չունեմ, իմ աղջիկս լիրբ, անբարոյական լինելու պատճառաւ ես հեռացրի իմ տնից, ես ինձ թոյլ չեմ տայ նրան իմ աղջիկս անւանելու, ո՞վ է տեսել, ո՞վ է լսել որ աղջիկ մը թողած իւր ծնողները գնայ տղայի հետեւից, Աստուած տայ մէկը ողջ չ'մնայ Թուրքահայերից, դուք չ'գիտէք թէ ի՞նչ են Թուրքահայերը, ես գնացել եմ կեդրոնական Թուրքիան, Կ. Պոլիսը, ես այնտեղ հայեր չեմ գտել, այլ անբարոյականներ, այլասերուած մարդիկ, որոնք իրենց տասը փարայի համար կուրանան թէ ազգութիւն թէ կրօնք, եթէ տասը շուն ունենամ, մի հատ չեմ զոհի այդպիսի ազգի համար, որոնք Հայ անունը չահագործում են, ի հարկէ բացառութիւնը պէտք է հարգել որն է գաւառները, գաւառներում այո ես էլ ձեզ համաձայն եմ որ կան Հայեր, շատ լաւ այդ հայերը ոչ յարգ ունեն, ոչ պատիւ, նրանք ինչ պէտք է իմանան այդպիսի մարդկանց գործունէութեան յարգանքը։

— Շատ լաւ, Տէր հայր բայց նրանք Պոլիս չէին գնացած, այլ գնացել էին այն երկիրը, որը ծնել է արեան, գրեխի արգանդից, չէ որ նրանք մեր եղբայրներն են....։

— Այո, ես բան չունեմ դրանում, բայց եթէ ես մեռնեմ դուք յիշեցէք որ վաղը միւս օրը այդպիսի

անմեղների արիւնով ազատուած Հայաստանը, պէտք է խաղալիք լինի Կ. Պոլսեցիների ձեռքում, և նրանք չ՚պէտք է հասկնան այս անմեղ զոհերի պատիւը այլ պէտք է հալածե՞ն. Պոլսոյ ժողովուրդը երախտամոռ ժողովուրդ է, նրանք այլասերուած են. (ճշմարիտ մարգարէութիւն):

Ո՛չ, ես չեմ թողնի իմ կինը գնայ այն տունը, որոնք մարդու հարազատ որդուն յափշտակում են ծնողների ձեռքից: Վերջապէս շատ վիճաբանելուց յետոյ Վարդուհու մայրը եկաւ և Վարդուհուն բերաւ իրենց տունը:

Այդ օրը փոխանակ ուրախ անցնելու, լացի, սուգի օր եղաւ, Վարդուհու ծնողները փոխանակ ուրախանալու որ իրենց աղջիկը, թէ մեռել էր կենդանացաւ, թէ կորած էր գտնուեցաւ, այլ հառաչում էին աղջկան, և սպառնում էին որ դու Իգիթին չ՚պէտք է առնես, եթէ իմանանք որ պիտի մեռնես, չենք թողնի որ դագաղի մօտ դոյ այդ սրիկան:

Ի հարկէ հարազատ սիրոյ առաջ խաղալիք դարձող սիրտը, չէր կարող հանդուրժել այդքան անտանելի խօսքերին, որոնք ուղղւում էին դէպի իւր պաշտելի առարկան: Վարդուհին չէր կարողանում տանել այն խօսքերը որը ամենակատաղութեամբ ցատկում էր իւր ծնողների բերանից, մանաւանդ սրիկա. խօսքը:

Վարդուհու և Իգիթի յարաբերութիւնը իզուեցաւ, էլ չէին թողնում որ Վարդուհին երեւայ Իգիթին, մանաւանդ որ հասկացան թէ երկար ու ձիգ ժամանակից յետոյ Վարդուհին ապրել է Իգիթէ հետ, դեռ կոյս է մնացած, մտածում էին բոլորովին հեռացնել միմեանցից: Նրանք սիրում էին միմեանց, նրանք երդուել էին որ բացի աստուծոյ տուած անխուսափելի մահից ոչ ոք չէ կարող բաժանել նրանց միմեանցից,

մի խօսքով նրանք աւելի ջերմ էին սիրում միմեանց, քան թէ առաջ:

Իգիթն ու Վարդուհին արդէն սովորել էին միմեանց, նրանք կ՚խելագարուէին եթէ միմիանց չտեսնէին. բայց ահա մի քանի օր էր որ չէին տեսնում իրար, տանջւում էին պարզապէս: Իգիթի ծնողները որ գիւղի առաջնակարգ դասին էին պատկանում վճռեցին պաշտօնապէս առաջարկ ընել, Վարդուհու ձեռքը խնդրել, մի քանի անգամ նրանք առաջարկ ըրեցին, և այնքան էլ մերժում ստացան:

Վարդուհու ծնողների մտատանջութիւնը քանի գ՚նաց սոսկալի դարձաւ, նրանք գիտէին որ Իգիթը ինչ որ ցանկանար կարող էր անել, քանի որ գիւղի երիտասարդների պատիւը. և յարգանքն էր վայելում, ուրեմն մի այնպիսի միջոց պէտք է գտնէին, որ կարողանային Իգիթին դաւաճանել, ո՞վ կարող էր հանդկնել, բնականաբար պէտք է դիմէին Իգիթի թշնամիներին, այսինքն կառավարութեան, որ արդէն մեծ կասկածով էր նայում նրա վերայ, մանաւանդ որ Իգիթը արդէն կաղում էր, այդ կաղալը շատ բան էր հասկացնում ոստիկաններին: Մէկ օր էլ Տէր Ա-ի ճարը կտրած գնում է ոստիկանատուն, յայտնում է որ Մարտիրոս Աշուղեանը մեզ հանգստութիւն չէ տալիս, նա պատկանում է Հնչակեան Սոց. Դեմօկրատ կուսակցութեան և մօտ օրս եկաւ Տաճկաստանից, դրան իբրեւ ապացոյց նայեցէք ոտքերը թէ ո՞րքան փամփուշտի տեղ կայ, և մի քանի էլ սոսկալի տեղեկութիւններ,

Ոստիկանութիւնը արդէն սոսկալի կասկած ունէր նրա վերայ, վարկենապէս պաշարել տուաւ տունը, խուզարկեց և մի քանի կասկածելի թղթերի հետ բանտ ուղարկեց Իգիթին,

Գիւղը իրարանցման մէջ էր, ամենը խօսում էին

Իգիթի քաջութեան մասին, և խօսում էին որ ինչ գութ, ի՞նչ սիրտ ունէր ոխերիմ «չէյթանը» որ համարձակեցաւ բանտարկել տալ քաջն Իգիթին։

Իգիթը անտրտունջ տանում էր բանտարկեալի սոսկալի կեանքը, և իւր անցեալը յիշելով, թէ սոսկում էր, և թէ ուրախանում որ Վարդուհին իւր հետ էր, նրա ուրախութիւնը տեւում էր մինչեւ այն ժամանակ, որ միտքին վերադարձան այն քեամբախ երկրէն, իսկ նրանից յետոյ նա հալւում էր, բարկանում էր երբ յիշում էր այն հրէշին, որ ազեմի հագուստով էր ներկայացել մարդկանց, և զարմանում էր. Աստուած իմ, ինչքան վրէժխնդիր, ինչքան ստո՞ր մարդ, ինչո՞ւ բաժանեց մեզ միմեանցից, դաւաճա՛ն, գոռում էր Իգիթը ինքն իրեն բանտի մութը նկուղի մէջ քալելով, ու բռունցքները օդի մէջ դարձնելով։ Հապա Վարդուհին, ինչ է արդեօք նրա դրութիւնը, մի քանի օրեր հաց չէր կերած. երբոր լսեց Իգիթի բանտ տարուիլը, մանաւանդ իւր հօր դաւաճանութեամբ, քիչ մնաց որ խելագարուէր, նա իր մազերն էր փետում. անիծում էր իւր հօրը, որ իրենց դժբախտութեան պատճառ դարձաւ։

Վարդուհին լուսամուտից նայում էր, յիշում էր իւր սիրելուն, երբ այն վարկեանին անցնում էր ոստիկանապետը. Վարդուհին կանչեց նրա հետեւից։ Ոստիկանապետը մօտեցաւ լուսամուտին, տեսաւ որ մի գեղանի օրիորդ նստած է, մօտը առած իւր փոքրիկ քոյր Սաթենիկն ու աղի արցունք է թափում։

—Ինչո՞ւ կա՛նչեցիք օրիորդ, կամ ինչո՞ւ էք լաց լինում։

Օրիօրդը յուզւած, աղերսագին աչքերը ձգեց երիտասարդ ոստիկանապետի երեսին, ու ասաց. բարի ոստիկանապետ, ասա խնդրեմ, ինչո՞ւ ձերբակալեցիք

Իգիթին, ինչ էր արել, նա բարի մարդ է ոճրագործ չէ, նա բարի երիտասարդ է։

—Ներեցէք օրիորդ, նախ կը հաճէ՞ք ձեր անունով յայտնել ինձ, ո՞վ էք դուք, որ նրա մասին տեղեկութիւն էք խնդրում, ասում է ոստիկանապետը։

—Ես Տէր Ա.-ի աղջիկն եմ, և նրա նշանածը, պատասխանում է Վարդուհին։

—Որի՞,

—Այն երիտասարդի, որ դուք ձերբակալեցիք, որի մասին խօսում ենք։

Ոստիկանապետը ապշեցաւ, նա չէր հաւատում իւր ականջներին։

— Ի՞նչ էք ասում օրի՛որդ, դուք տէրտէրի աղջիկն է՞ք և նրա նշանա՞ծը։

— Այո,

— Միթէ կարելի է որ մարդ իրեն աղջկայ նշանածին բանտարկել տայ։

— Այո՛ պարոն, հաւատացէք ինձ որ իմ նշանածս ոչինչով յանցաւոր չէ՛, նա ոչ մի առնչութիւն չունի ռուսական կառավարութեան հետ, նա գանգատւում էր այն կառավարութիւնից, որը Հայ՚ն մորթում է հաւի նման, նա բողոքում էր Համիտ կոչւած հրէշի դէմ, որ վեհապետ է Թուրքիոյ, որի հաճոյքը կայանում է միայն ու միայն հայի արեան մէջ։ Իմ հայրը տեսաւ որ ես սիրահարւած եմ այն երիտասարդի հետ, մենք Աստուծոյ առաջ ուխտ էինք արել որ ամուսնանանք կարճ ժամանակում, իսկ անխիղճ հայրս լսելով այդ, եկաւ մատնեց որպէսզի ես բաժանւեմ նրանից, բայց հաւատացէք Բարի ոստիկանապետ, ես բաժանւած չեմ, և չեմ էլ կարող բաժանուել նրանից։ Ես նրա հետ կապւած եմ հոգով ու սրտով,

— Օրի՛որդ, դժբախտաբար ես ձեզ օգնել չեմ

կարող որովհետև որդէն սաղ է, ես հաւատալով հօրդ խօսքերին փոխադրել տւեցի նրան Երեւանի կեդրոնական բանտը, և քանի որ ես յիմայ հասկացայ շարժառիթը, միայն կարող եմ օգնել իմ տւած զեկուցով, որ դեռ չեմ ուղարկել դատաւապէտին, այնպէս որ փոխանակ բանտի դատապարտւելու, կաքսորէն Ռուսաստանի մի որ և է գիւղ, ահա այդ կ՚լինի իմ օգնութիւնը։ Մնաք բարեաւ, յարգելի օրիորդ, ես չեմ կարող երկար մնալ, որովհետև շտապում եմ. գոհ մնացի որ լսեցի այդ անմեղ բացատրութիւնները։

Ոստիկանապետը գնաց բայց նա նորից սկսեց լալ, նրա սիրտը չէր դիմանում, նա ինքն իրեն ասում էր «գնա պաշտելի Իգիթ, գնա՛ թող Աստուած քեզ խրախուսէ, ինչպէ« եղաւ այն արեան աշխարհում, այն Աստուածը, որը մեզ փրկեց հրէշների ձեռքից, ես յոյս ունեմ որ քեզ կազատի այս գազանների ձեռքից էլ, բայց աւա՜խ, ես, ես չ՚պէտք է կարողանամ տեսնել- (ճշմարիտ մարգարէութիւն),

Սաթենիկ, ահա իմ պաշտելի քոյրս, ի՞նչ պէտք է լինի իմ դրութիւնս, այնքան յուսահատուած եմ որ...։

—Հոգ մի ըներ քոյրս, Աստուած ողորմած է, էլի կ՚լինի քո ցանկացածով։ Դու գիտես որ հայրիկս ինչքան տանջւում է, նա համարեա հանգստութիւն չունի, դէմքը գունատուած է...։

—Թող սատկի Սաթենիկ ջան, թող սատկի՛ այնպիսի հայրը որ իր որդիներին թշւառութեան պատճառ է լինում։ Ա՜խ Սաթենիկ, դաւաճա՞նել, դու գիտես թէ ի՞նչ է նշանակում դաւաճան, մանաւանդ դաւաճանել իր աղջկա՞ն, իր փեսացուի՞ն, ա՜խ Սաթենիկ, հաւատա ինձ, որ ես անձնասպան պէտք է լինեմ, ինձ համար ուրիշ միջոց չ՚մնաց։

Այդպէս խօսակցութեամբ էին զբաղուած, երբ փոստաչին դուռը զարկեց։

Սաթենիկը խելագարի պէս դուրս թռաւ սենեակից, ստացաւ մէկ նամակ, ուրախութեամբ Վարդուհուն տւաւ։ Վարդուհին բացաւ նամակը կարդաց հետեւեալ պարունակութեամբ։

Սիրելի Վարդուհի՛

Ընդունիր սիրալիր համբոյրներս, դու վրէժխնդիր չ՚լինես անառակ հօրդ, դու համբե՛րիր, համբերիր իմ թանկագին, Աստուած ողորմա՜ծ է։ Դու ինձ վերայ չ՚մտածես ես լաւ եմ, բայց դու աշխատիր որ շատ չ՚մաշւես, ես կեանք ունեմ, բայց իմ կեանքս քոնն է, ա՜խ հրեշտակս, մի մոռանար անցեալը, թէ ի՞նչպէս էինք կռւում այն քեամբախտ երկրում, և ա՛նքան արեան մէջէն մենք ազատւեցանք, որովհետև Աստուած պահեց, յոյս ունեմ, որ հիմայ աւելի ևս պէտք է բախտաւորւենք, Աստուած մեր կողմն է։

Ա՜խ Վարդուհի, ես առաջ մէկ կորիւն էի սաւառնում էի քեզ հետ միասին լեռներում, և մահ ու սարսափ էի տարածում, բայց հիմայ մի բանտարկեալ, մի թշւառ կալանաւոր ընկած եմ բանտի մի անկիւնում, յիշում եմ քեզ, և քո անցեալ սիրով մաշւում, իմ աղաւնեակ, այս բա՛աստեղծութիւնը ես գրում եմ բանտից, բայց չ՚յուղւես, քո սէրդ ինձ բանաստեղծ էլ շինեց։

Եթէ որ դէրտս պատմեմ,
Համայն աշխարհին սիրական,
Չեմ կարող վերջացնել
Մէկ ամբողջ տարի սիրական։

Բոյդ բարձր սալբի չինար
Դէմքդ մախմուրի խաւ է,
Եթէ քեզանից բաժանւեմ
Ինձի համար շատ մեծ ցաւ է։

Սիրտը շուշա է կ'կոտրուի
Քո սէրդ ի՛նչ անիրաւ է
Որ չի թողում արժանանամ
Այդ քո ազնիւ թուխ մազերիդ։
Ես քո սիրականդ,
Ամենայն տեղ քո լաւդ եմ ուզում,
Ո՛ւր որ լինեմ, ուր գտնուեմ,
Քո բարի համբաւդ եմ ուզում,
Միասին անենք խորուրդ
Ծովագնաց նաւ եմ ուզում
Խնդրում եմ չ'մոռանաս
Ինձի պէս խեղճին սիրական։

Վարդուհի, իմ հրեշտակ, երբ որ միտս ես գալիս մազերս փուշ-փուշ է լինում, կարծես թէ մեր անցած օրերը երազ լինէին, ո՜հ դժբախտութիւն։ Բայց ես յոյս ունեմ, յոյս ունեմ որ դու իմս պէտք է լինես, յաւիտեան, ընդմի՛շտ. սենեակս Վարդուհի շատ խոնաւ է ու մութ, և ես սենեակիս մէջ միշտ քնոտ եմ խօսում, և գալիս ու նեղանում են ոստիկանները թէ ես ո՞ւմ հետ եմ խօսում, ո՞վ կայ մօտս։ Եթէ այսպէս անցնի ես կ'խելագարուեմ, ա՜խ որքան ցանկանում եմ չ'յուզել, չի լինում, ընդունիր իմ ջերմ համբոյրները, և իմացիր որ նամակս ո՛չ թէ գրել եմ մատիտով, այլ արտասուքով։ Իմ դրութիւնից ես ոչինչ չեմ կարող յայտնել քեզ, քանի որ շատ խիստ են ոստիկանները։ Մնաս բարեաւ Վարդուհիս, մնաս բարեա՜ւ։

Քո սիրուն հաւատարիմ, ՄԱՐՏԻՐՈՍ

Վարդուհին նամակը կարդալուց աչքերը պաղեցան, գլուխը պտոյտ եկաւ և գլորուեցաւ գետին։ Սաթենիկը աղմուկ հանելով, լալով գնաց իմաց տուաւ մօրը, իսկ մայրը ամենաանտարբերութեամբ, կարծես թէ իւր որդին չ'լինէր, իւր մի՛ ունար աղջիկը չէր այդ գետին տապալուողը։ Նորաւ Վարդուհու դէմքի գեղեցկութիւնը, նրա կամքի ուժը, նա ուրախութեամբ գնաց արեան երկիրը, քանի որ յոյս ունէր, վստահ էր որ առանց մի որ և է վտանգի կ'վերադառնայ՝ բայց այս անգամ նա յոյս չունէր, նա կարծես մի ինչ որ թուլութիւն էր զգում իրեն մէջ, նա միշտ ասում էր որ «Ես այսուհետև չեմ ապրելու, նա միշտ աղօթում էր Իգիթի համար։ Վերջապէս այդպէս անցաւ մի քանի օր, նրան մխիթարում էր փոքրիկ քոյրը Սաթենիկը, և ծածուկ Իգիթի մայրը։ Բայց Վարդուհին չ'կարողացաւ երկար տանել այդ ցաւը, նա անկողին ընկաւ, նա մաշւում էր, հալւում էր ինչպէս ձիւնը արեւից։ Վերջապէս խելագարի պէս գոռաց իւր քրոջը։

Սաթենիկ, ինձ գրիչ ու մելան բեր ես նամակ պէտք է գրեմ․

Վարկենապէս հրամանը կատարուեցաւ։

Իսկ Վարդուհու հիւանդութեան լուրը մէկ օրուայ մէջ տարածուեց ամբողջ գիւղը, բոլոր գիւղացիները խօսում էին այդ քաջ հերոսուհու վերայ և անիծում էին նրա կռապաշտ հօրը և մօրը։ Վերջապէս Վարդուհին գրիչը առաւ ձեռքը ու սկսաւ գրել։

Ազնուասէր Մարտիրոս․

Ստացայ քո նամակը, ես հիւանդ եմ, և մի գուցէ փափաքս առանց առնելու գերեզման մտնեմ, էլ չ'պէտք է տեսնեմ քեզ իմ սիրելիս, ես այսուհետեւ կեանք չունեմ, ես զգում եմ որ իմ տունս պէտք լինի իմ գերեզմանս, օ՜, որքան դժբաղդ եմ, առ մէկ ճակատագրա-

կան դժբախտութիւն էր․ երէկ միւս օրը մենք լեռներում էինք միասին, կարծես թէ ես ինձ բախտաւոր էի զգում, բայց հիմայ դու հեռացած ինձանից, ես ո՛ւր մնացի, դու ո՛ւր, երանի հազար երանի թշնամու գնդակով ընկնէի, երանի կուրծքս պատառեր քիւրտի գնդակը, ես բախտաւոր կ'լինէի, բայց հիմայ պէտք է վերջին շունչս փչեմ իմ թշնամու, իմ անհոգի հօրս ձեռքերում։ Ո՛հ, հեռո՛ւ, հեռո՛ւ ինձանից չար թշնամի, դէմքդ ինձ ցոյց մի տար. Իմ պաշտելի, դու ապրիր, ապրիր այս վերան, քանդուած աշխարհում և ինձ յիշիր, չ'մոռանաս։ Սիրելիս, դու չ'կարծես թէ ես խելագար եմ, ո՛չ, ներիր ինձ իմ սիրական, էլ տանել չեմ կարող այսքան որ ես դիմադրեցի սիրոյ կրակին, ես չեմ կարծում որ ամենաքարասիրտն էլ կարողանայ տանել, բայց հիմայ էլ չեմ կարող դիմադրել, ես բոլորովին ընկճուեցայ, ա՛հ հրեշտակ, հեռու գնայ ինձանից, թող որ փափագս առնեմ, փափագս ցաւալի։ Սիրելիս ահա նւիրում եմ այս բանաստեղծութիւնս քեզ, պահիր ինչպէս յիշատակ. Նախ չ'մոռանամ ասելու որ ինձ համար մնաց տասը կամ տասնըհինգ օր ժամանակ։ Ես խօսեցի ոստիկանապետի հետ, նա խօստացաւ քեզ աքսորել տալ. եթէ այս մի քանի օրւայ մէջ աքսորուես, անպատճառ եթէ գիշեր լինի, փախի՛ր, թռի՛ր, արի ինձ տես, այդ կ'լինի վերջին տեսութիւնդ. Ա՛խ սիրտս բաբախում է, գլուխս պտըտւում է, Աստուա՛ծ դու օգնես, Աստուա՛ծ դու խղճաս։ Իգիթ չ'մոռանաս այս գրուած բանաստեղծութիւնը անգիր արա, և երբեւ մահուանս հանգստեան շարական կասես իմ անշունչ հողաթմբի վերայ։

Մնա՛ս բարեա՛ւ, կ'հեռանամ
Հոգւոյս հատոր քեզանից,
Հեռու երկիր, ես կ'գնամ

Թողնելով քեզ տրամալից։

Մնաս բարեա՛ւ, ես գնում եմ
Ես բացակայ կ'դառնամ,
Ուրեմն արի որ համբուրեմ
Ես վարդ այտերդ մի անգամ։

Մնաս բարեա՛ւ, միշտ կ'յիշիս
Ինձ, իմ միակ մխիթար,
Արդեօք մէկ էլ կ'տեսնեմ քեզ
Վայելեմ սէրդ այդ արդար։

Մնաս բարեա՛ւ, մի արտասուեր
Տուր քո սէրդ ուղակից
Զ'լաս, հրեշտակ լուսանւեր
Սիրտս չէ հեռանում քեզանից։

Մնաս բարեա՛ւ, իմ աղաւնեակ
Ահա հասաւ այն ժամը,
Որ համբուրեմ նկարդ քաղցրիկ
Տամ սրտակէզ ողջոյնը։

Ստացիր դու իմ բարեւս
Տեսութիւն անարգել
Ա՛հ, արտասուած կաթիլները,
Ինձ չեն թողնում բան խօսել։

Յիշեցնում եմ կրկին, եթէ մինչեւ տասնուհինգ օր ինձ չ'գաս տեսնելու, և եթէ Աստուած հոգիս չառնէ մինչեւ տասնուհինգ օրը, ես կ'թունաւորեմ ինձ, գոնէ այդպէսով թէ կ'մոռանամ քեզ, և թէ իմ դաւաճան հօրս։

Ուրեմն ընդունիր իմ կարօտեալ համբոյրները իմ սիրելիս․․․․․։ Մնամ քո սիրով մաշւող քո

Հաւատարիմ ՎԱՐԴՈՒՀԻ

Նամակը դեռ չ'հասած Իգիթին, նաչանդապետի կողմից հրաման է ուղարկւում բանտային տեսչութեան, որ Մարտիրոս Աշուղեանին, աքսորել Կուբանեան շրջանը Եկատերինօդար քաղաքը: Նաչանդապետի հրամանը կատարուած էր։

Այն օրը որ նաչանդապետը հրաման ուղարկեց, միւս օրը արդէն Իգիթը նամակը ստացաւ. Նամակը հասել էր մի շաբաթւայ մէջ, որովհետև մի քանի օր միայն նամակը մնացել էր բանտային տեսչութեան և սանսիւրի սեղանի վերայ. իսկ Իգիթը հալ ու մաշ էր լինում, թէ ինչո՞ւ պատասխան չէ ստանում։ Վերջապէս Իգիթը ստացաւ նամակը, որ արդէն ըստ օրէնքի բացուած էր և բանտային մի քանի կնիք էր խփուած վերան. կարդաց, յուզուեց, լաց եղաւ, և միւս օրը առաւօտեան ելաւ լւացուեց, աչքերը դէպի երկինք բարձրացրեց և ասաց, «Աստուած թող քո կամքը լինի» Աստուա՜ծ դու ինձ ուժ տուր և նրան համբերութիւն»։ Դեռ նախաճաշ նոր էին արել, երբ ներս մտաւ բանտային տեսուչը, և մի քանի սպառազինուած զինուորներ

— Իգի՛թ. գոռաց ոստիկանապետը դու պատրաստուիր, քո հրամանը եկաւ, և քեզ պէտք է աքսորեն Կուբանեան շրջանը։ Իգիթը պատրաստուեց և ոստիկանների ուղեկցութեամբ գնացին կայարան, Իգիթը երեք օրւայ մէջ հասաւ Եկատերինօդար: Նա ազատ աքսորական էր միայն շաբաթը մէկ անգամ պարտական էր գնար ու ներկայանար ոստիկանութեան։ Արդէն տասը օր էր անցած այն օրից, որ Վարդուհին նամակ էր գրել Մարտիրոսին: Իգիթը յարմարութիւնից օգտուելով ուզեց երկուշաբթի օրը փախնել Եկատերինօդարից, գնար Վ. գիւղը Վարդուհուն տեսներ ու վերադառնար ոստիկանութեան, այդ

էլ չէր կարող անել, որովհետև հինգ օրւան ճանապարհ էր Եկատերինօդարից մինչև Վ. գիւղը, մանաւանդ որ անցագիր էլ չունէր: Իգիթը ինքն իրեն մտածում էր «թող գնամ տեսնեմ նրան, թող նոր կց ձերբակալուեմ այդ էլ հոգս չէ»: Վերջապէս նա մէկ հեռագիր ստացաւ Եկատերինօդարում, իր հասցէին ուղղուած, այս պարունակութեամբ.

ՍԻՐԵԼԻ ՄԱՐՏԻՐՈՍ

Եթէ դու շաբաթ երեկոյեան այստեղ չլինես, էլ կիրակի ողջ չես տեսնար ինձ. շտապիր եթէ կարող ես.

Քո թշւառ Վարդուհի:

Իգիթը այդ հեռագիրը ստանալուն պէս որպէս խելագար, քիչ մնաց որ կաթւածահար լինէր: Երեքշաբթի գիշեր, արագնթաց շոգեկառքով ուղեւորուեցաւ դէպի Կովկաս, դէպի թշւառութեան տունը: Իգիթը հասաւ Տփխիս շաբաթ օրը, այնտեղից հեռագրեց իր ծնողներին, ծածուկ լեզւով, այնինքն թւերով, որ կարելի էր հասկանալ:

«Սպասէք ինձ կայարանում, բայց դժբախտաբար ոչ թէ շաբաթ գիշեր այլ կիրակի առաւօտեան, որովհետև մեր շոգեկառքը փոխուեցաւ, հիմայ սպասում եմ ուրիշ շոգեկառքի:»

Ձեր Մարտիրոս:

Ա՜խ սիրելի ընթերցող, չէ՞ք հետաքրքրւում թէ ինչ էր անում Վարդուհին. Շաբաթ գիշերը մէկ սոսկալի գիշեր էր. Վարդուհու հիւանդութիւնը սաստկացաւ, նա յոյս չունէր որ մինչև լոյս պէտք է ապրէր, ու ինքն իրեն մտածում էր.

— Ինչպէս տեսնում եմ դեռ ես պէտք է տանջուեմ, ո՞վ գիտէ Իգիթը ի՞նչ դրութեան մէջ է, արդեօք նամակս և հեռագիրս ստացա՞ւ թէ ո՛չ, յանձնեցին նրան իմ արտասուքով, խորտակուած սրտով գրած

նամակս ու հեռագիրս. ա՜հ, ի՜նչ աշխարհ է այս աշխարհը, եթէ մարդու հարազատ հայրը իրեն որդուն դաւաճանի, էլ ի՞նչ կսպասեմ ուրիշներից: Ո՛չ, երբ որ բոլորը քնեն, ես ինձ կ՚թունաւորեմ: Վարդուհին դեռ մտածում էր, երբ եկաւ Իգիթի եղբայրը, դուռը թակեց, տէր հայրը ելաւ դուռը բացեց տեսաւ որ Գ. Բ.ն էր·

—Տէր հայր կ՚թոյլատրէ՞ք Վարդուհուն տեսնել, թէ ո՛չ·

— Ոչ Գ. Բ. նա քնացած է, ինչ որ պիտի ասէք, ինձ ասացէք, ես կ՚խօսեմ նրա հետ:

— Տէր հայր հաւատա՞մ քեզ, որ ոստիկանութեան դուռը չես վազի լրտեսելու:

— Ոչ հայորդի, կարգս վկայ· ես դաւաճան չե՛մ:

— Դէ ասացէք Վարդուհուն որ չյուզուի Իգիթը առաւօտեան այստեղ կ՚լինի:

— Շատ լաւ կ՚յայտնեմ·

Գ. Բ. վերադարձաւ հանգիստ սրտով, իսկ Տէր Ս. քահանան սկսեց տանջուել, նրա սրտի օձերը սկսեցին շարժուել, Իգիթը վաղը առաւօտեան այստեղ պէտք է լի՜նի, և ես պէտք է նրա մասին, նրա գալստեան մասին յայտնեմ Վարդուհուն, ո՛չ, ես չեմ յայտնի, ու այդպէս գազանային սրտով գնաց իր սենեակը:

— Ո՞վ էր տէ՛ր հայր, հարցրեց երիցկինը·

— Ոչ ոք չկար ժամկոչն էր որ եկել էր վաղուայ համար եկեղեցի հրաւիրելու, և շատ շուտ պէտք է գնամ կնունք կայ, այս ասեց ու պառկեց:

Վարդուհու պահապանը փոքրիկ Սաթենիկն էր որ անբաժան կերպով նստած էր քրոջ ոտների տակ: Գիշերը բաւական անցած էր· Սաթենիկի քունը տարել էր, ու հանգիստ կերպով պառկել էր Վարդուհու անկողնու տակ:

— Վարդուհու մտքի մէջ մի բան յղացա՜ւ, մի սոսկալի բա՜ն, անձնասպան լինե՛լ Ո՜հ թշուառ աղջիկ:

— Վարդուհին ելաւ տեղէն, թոյնը պատրաստեց ու գրիչը ձեռքն առաւ:

Սիրելի Մարտիրոս

Մի քանի բան պէտք է գրեմ քեզ, բայց գլուխս պտտում է, ձեռքերս դողում, ես մահուան անկողնու մէջ եմ գրում այս հետեւեալ տողերը: Սիրե՛լիս, ես զգում եմ որ չ՚պէտք է թողնեն քեզ ինձ արժանանալու, և դու էլ իմ պատճառաւ ի զուր մի թշուառանայ, ա՛խ ափսո՛ս, հազար ափսոս մեր քաշած օրերին, սիրելի Իգիթս, դու վրէժխնդիր չ՚լինես իմ ծնողներին· նրանց Աստուած կ՚դատէ, ես յոյս ունեմ որ իմ կռապաշտ հայրս տանջանքով պէտք է մեռնի: Դու շատ չ՚մտածես ինձ վերայ, լաւ պահիր երիտասարդութիւնդ, և եթէ գտնես այդպիսի մէկին, որը վառ պահէ քո սէրդ, և ինձ յիշելուդ համար չ՚արհամարհի քեզ: Ամուսնացիր, բայց յիշիր ինձ, ո՞ւր որ լինես, պարտ եմ դնում վերադ յիշես քո թշուառ Վարդուհուն, ա՛հ Աստուած իմ մի՛թէ ա՛յս էր ճակատագիրս: Սիրելի Իգիթ· չմոռանաս, ահա այս փոքրիկ ոտանաւորը, կ՚գրել տաս իմ չորացած, փտած գերեզմանիս վերայ, որպէս տապանագիր:

Ա՛ստ, քարի տակ ննջում է
Մօրը միակ աղջիկը,
Ա՛ստ, քարի տակ հանգչում է
Ընկերների հոգեակը·
Որքան քաղցր է սրա հոգին,
Այնքան քաղցր խօսքերը,
Բարի ունէր բերանումը

Արդար էին գործերը։
Տասնումէկ տարւայ հասակում
Երբ բացւել էր վարդակէդ,
Սէրը բացաւ խոց սրտում
Աւանդ դրաւ ճիշտ այստեղ։

Գնա՛, հոգիս մեր ընկեր
Մենք քեզ ունենք մեր սրտում,
Գնա պօէտի սրտի սէ՛ր,
Որին թողիր միշտ տրտում։

Սիրելի Մարտիրոս, իսկ տապանիս միւս կողմում գրել կ'տաս, ԴԱՒԱՃԱՆ ԾՆՈՂԱՑ ԱՆՄԵՂ ԶՈՀ

Ա՛խ չար հոգի, չար Աստուա՜ծ, քո մէջ բարութիւն չկա՛յ, եթէ դու էիր ինձ փրկողը այն արիւնոտ աշխարհից, ինչո՞ւ վերջապէս փափաքս սրտումս թողի՛ր, ո՛չ, անգութ են, ա՛խ սի...րե...լի...ի-գիթ ես... շատ... բաներ... ունե...մ գր...ելիք... բայց չե...մ... կար...ողա...նում. ա՛խ, մնաս... բա...րեաւ սէր... իմ... ցաւ...ալի...

Մննն...աամմ քո հա...րազ...ատ և անբի...ծ սի...րով... մաշւող.

Քո... թշշշւ...առ ՎԱՐԴՈՒՀԻ

Այս գրելուն պէս այնպէս շւարած ծալեց նամակը որպէս խելագար, դրեց իւր բարձի տակ խմեց պատրաստւած թոյնը ու ընկաւ գետին։ Կէս ժամից ետոյ արդէն նրա ձայնը, նրա աղիողորմ հառաչանքը ամբողջ շէնքը դղրդեցնում էր. արթնցաւ նրա դաւաճան հայրը, նրա անգութ մայրը, իրենց մազերն էին փետում, ծունկ չոքած աղօթում էին առ Աստուած. բայց ի զուր էր. անմեղ աղջկայ եղունգները կապուտ-

ցել էին աչքերը սեւացել, և խօսը ընկել։ Մի քանի վարկեանից յետոյ ներկայանում է մեծ բժիշկը, որ Իգիթի մօրը եղբայրն էր. գնաց հիւանդի անկողնու մօտ, տեսաւ որ արդէն թունացել էր, և ճրագի աղօտ լոյսը ընկած նրա դէմքին, ցոյց էր տալիս նրա անմեղութիւնը. իսկ թոյնի շիշը, ինչպէս մէկ ոճրագործ, ինչպէս մէկ դաւաճան նայում էր սեղանի վերայից իւր անմեղ զոհին։

Բժիշկը արտասուքով մօտեցաւ դիակին այնպէս, ինչպէս մէկ ուխտաւոր կ'մօտենայ սրբավայր'ն երկիւղածութեամբ. նստեց նրա մօտ ու ասաց. «Աղջի՛կս, խմիր այս դեղը և իմացիր որ հիմայ Իգիթը այստեղ կ'լինի». այս ասելով, բերել տւաւ հեռագիրը բռնեց նմա չորացած աչքերի առաջ. Վարդուհին կարդալով հեռագիրը, երբ որ ամենից վարը կարդաց Մարտիրոս անունը, յանկարծ սթափւեց ու ասաց.

—Դօք...տօր..., ե՞րբ պէտք է գայ... նա..,

—Կէս ժամէն այստեղ կ'լինի աղջիկս, դու այս դեղերը խմիր,

Վարդուհին խելագարի պէս դուրս ցատկեց տեղից, իւր թոյլ ոտքերը քաշ տալով, կարծես ուզում էր ցոյց տալ սպասաւորներին, որ ցանկանում է գնալ ու դիմաւորել։

Դօքտորը բռնեց Վարդուհու ձեռքից անկողնում պառկացրեց ու հրամայեց որ հանգիստ ձգեն, որովհետեւ էլ օգուտ չկար։

—Դօքտոր, այլեւս ես մեռնել չեմ ցանկանում նա գալի՛ս է, փրկէք ինձ. սպասաւորներ, ես դեռ մեռնել չեմ ցանկանում։

Իսկ դօքտորը միեւնոյն արտասուքով հեռացաւ։

Վարդուհու գլխի վերեւը կանգնած էին Իգիթի մայրը և քոյրը, Սաթենիկին մօտերը առած, իսկ մայրը նստել էր նրա ոտների տակ, ու լաց էր լինում։ Ցան-

կարծ տէրտէրը որպէս խելագար ոճրագործ, եկաւ ծունկ չոքեց իւր աղջկայ ոտքերի տակ ու ասաց.

—Ներիր ինձ, ներիր քո դաւաճան հօրը, որը ինչպէս մեղապարտ չոքած է ոտքերիդ տակ. մի քանի վարկեանէն կ'գայ Իգիթը, որ որքան քեզ համար է սիրելի, այնքան էլ ինձ համար է, նա պէտք է մնայ մեր տանը մինչեւ քո առողջանալը և ես իմ ձեռքով պէտք է պսակեմ. քեզ։

Վարդուհին անթարթ աչքերով նայում էր իւր ճերմակած մօրուքին, որոնք արտասուքի կաթիլների տակ պսպղում էին։ Վերջապէս մի քանի թոյլ անկապ խօսքերով ասաց իր հօրը.

—Հայրիկ... թող. . Աստուած ներէ... քեզ... բայց... իմա..ցիր... որ... դաւ...աճանին... փր-կութիւն չ'կայ...քո հա.. ւատա..ցած հան..դեր... ձեալ .. կեա՛քում։

Ու կանչեց Իգիթի մօրը. մա՛յր, մայր իմ հարազատ, բեր քո ծունկը իմ գլուխս դնեմ քո ծնկին, և այդպէսով քո որդուն փախաքը առնեմ քեզանից։

Կանչեց իւր մօրը, համբուրեց նրա ձեռքը ու ասաց. մայր... դու... չ'մոռա..նաս... որ... դու էլ... էիր իմ... մահ...ւան մեղ..սա...կից։ Բայց... ոչինչ... էլի... փառք Աստուծոյ։

Եւ յետոյ հանեց Իգիթի պատկերը, համբուրեց, ու գոռաց. ա՛հ, պաշտելիդ իմ, ա՛րի, արի... եկա՞ր իմ հրեշտակ, եկ համբուրեմ քեզ, շուտ արի, որ իմ վերջին կուսական անմեղ համբոյրը, չ'մնայ իմ չորացած շրթունքներում։ Ա՜հ, չես գալիս, ինչո՞ւ նեղացար, մի՞թէ ես դաւաճանեցի քեզ. ո՛չ, նաէր, նրանք էին մեզ մի'իանցից բաժանողը։ Մէկ էլ համբուրեց նկարը, դրեց իւր երեսին, ու ինչպէս աղօթք մրմնջաց։ Մն... աս... բար...եւաւ իմ... թշւ...առ սիրա...կան.

մննն...աաս... բարրրեւաւ... ու հոգին աւանդեց։

Տանը մէջ ահագին աղմուկ բարձրացաւ, ամբողջ գիւղը եկել էին թափել տէրտէրենց բակը. փողոցը ասեղ ձգելու տեղ չ'կար. ամբողջ շուկան հաւաքւած խումբ խումբ խօսում էին այն անցեալ օրւայ հերոսուհու վերայ, որը իբրեւ մի թշւառ էակ ընկած էր մահւան անկողնում անշունչ։

Իգիթի եղբայրը գնացել էր դիմաւորելու իւր եղբօրը. Ահա կանգնեցաւ հարիւր տասը թիւ շոգեկառքը, և նրա միջից դողի պէս, բայց համարձակ դուրս թռաւ քաջն Իգիթը, և բռնեց իւր եղբօր ձեռքից. նրանք համբուրւեցին, ու նստեցին կառք։

Իգիթի եղբայրը պատւիրել էր կառապանին, որ ճանապարը փոխէ ու չանցնի տէրտէրենց տների մօտով, բայց կառապանը չլսած կառքը քշեց ուղիղ նրանց դռնով։ Իգիթը տեսաւ որ տէրտէրենց դուռը կանգնել էին բազմաթիւ մարդիկ, կանայք, աչքերը դարձրեց եղբօր ու ասաց,

— Եղբայր ի՞նչ բան է այս, ինչո՞ւ են հաւաքւել սրանք։

— Ոչինչ ո՞վ գիտէ ինչ է, եղբայրը խօսում էր Իգիթի հետ, բայց աչքով նշան էր անում կառապանին առանց կանգնելու շտապէ, խփէ ձիերին որ շուտ շուտ գնան։ Իսկ Իգիթը չ'կարողանալով զսպել իրեն քաշեց կառապանի օձիքէն ու կանգնացրեց ձիերը, թռաւ կառքէն ու գնաց։ Հասարակութիւնը տեսնելով Իգիթին զարմացան թէ ո՞րտեղէն եկաւ այդ մարդը հրեշտակի պէս։ Ճղեց բազմութիւնը գնաց և տեսաւ Վարդուհուն որ ընկած էր անկողնում անշունչ, բայց աչքերը դեռ բաց էին ու սպասում էին ճանապարին, Իգիթը մօտեցաւ ծունկ չոքեց և խելագարի պէս ընկաւ գետին։ Այդ դժոխքում Իգիթի մայրը տես-

աւ որ մի ինչ որ թուղթ է երեւում բարձի տակին, նրանք զբաղուած էին Իգիթով, Իգիթի մայրը վերցնում է նամակը և դնում իւր ծոցը, Դաւաճան տէրտերը իմանալով Իգիթի գալը, ի հարկէ գուշակել էր իւր գլխի գալիքը, մէկ էլ լուր եկաւ որ տէրտէրը իրեն կախել է խոհանոցում: Բոլոր հասարակութիւնը ուրախացած գոռում էին «Այո, արժանի էր, և արժանի պատիժը ստացաւ, Յուդայի նման: Ա՜հ սիրելի ընթերցողներ. գրիչը անզօր է նկարագրել մնացածը, թէ ի՞նչ էր անում Իգիթը, դրանից հետոյ... Ո՞վ որ եղած է սիրահարուած հարազատ և անբիծ սիրտ է կրել իւր մէջ նա միայն կ'զգայ նրա դրութիւնը

Բաւական տարիներ էր անցած այն օրէն որ մի օր ինձ պատահեցաւ մէկ երիտասարդ Մօսկւայում, սև օձիք սև թեւերով. Համարեայ բոլոր հասարակութեան ուշադրութիւնն էր գրաւում այս խորհրդաւոր երիտասարդը. Նրա դէմքին նայողը կ'հասկանար որ նա մի ի՞նչ որ հոգեկան վիշտ է ունեցել, և տանջւում է այդ հոգեկան վիշտով: Մի առ ժամանակէն յետոյ լսեցի որ նոյն խորհրդաւոր երիտասարդին աքսորում են Սիբիրիայ տասնըութը տարուայ տաժանակիր աշխատութեան:

ՀԵՐՈՍՈՒՀԻՆ

Ամառային մի տաք երեկոյ էր. կեանքը եռում էր հիւսիսային մեծ մայրաքաղաքում. Բուլւարում հաւաքուած էին շատ մեծ բազմութիւն, բախտաւոր և անբախտ մարդիկ զբօսնում էին. իսկ մի քիչ հեռու, մութը ծառերի մէջ նստած էին հրեայ օրիորդներ, երիտասարդներ և երիտասարդուհիներ, որոնք արդէն քրիստոնէութիւնը ընդունած էին ու խօսակցում էին միմեանց հետ: Օրիորդներից մէկը ասում է.

— Ասացէք խնդրեմ ինչո՞ւ համար ամէն ազգ իրաւունք ունի Ռուսաստանի մեծ մայրաքաղաքներում ապրելու, իսկ մենք ոչ, երեւի նրանից է որ մե՞նք քրիստոնեաներ չենք: Այդ հարցին պատասխանում է մէկ երիտասարդ ասելով.

— Օրիո՛րդ, միայն մենք չենք որ մեր կեանքի վերայ տրտնջում ենք, կայ մէկ ազգ եւս, մի բազմաչարչար ազգ, մի գաղափարական ազգ, որ դեռ քրիստոնեա է, որոնց ազգի միջից դուրս են գալիս հերոսներ, և հերոսուհիներ, որ կրթութեամբ, (կուլտուրապէս) եւրոպականացած են, իսկ զինավարժութեամբ, կազմ և պատրաստ. այդ բազմաչարչար Հայ ազգն է: Երեւի շատ կ'երկարացնէր, եթէ խօսքը չ'ընդհատէր մի ուրիշը:

— Ասէ՛ք խնդրեմ, հայերն էլ ունեն յեղափոխական կազմակերպութիւն, թէ միայն ռուսաց յեղափոխութիւնն է որ մուտք է գործում ամէն տեղ:

— Ո՛չ, պատասխանում է երիտասարդը. հայերը ունեն զատ զատ յեղափոխական կուսակցութիւններ, որոնցից նպատակայարմարը, և մայր կուսակցութիւնն

է Հնչակեան կուսակցութիւնը, կամ աւելի պարզ, Հնչակեան Սօցեալ Դեմոկրատ կուսակցութիւնը. կամ ինչպէս մենք ճնշւում ենք Ռուսաստանում, այնպէս էլ նրանք են ճնշւում և հալածւում Կովկասում. Կովկա՛ս, երկրորդ Իտալիայ, կամ Եդեմական դրախտ սուրբ գրքի ասելով:

Շատ լաւ, ասում է օրիորդը. մենք դառնանք դէպի մեր գործը. ի՞նչի չեկաւ, ինչի՞ ուշացաւ (Իգիթը կեղծ անուն) որ խօսակցէինք այն գործի վերայ. Ահա՛, գալիս է Իգիթը, ասում են միմեանց ու ցոյց են տալիս իրար. ինչպէս երեւում է մեզ է փնտռում ասում է միւսը: Այդպիսի խօսքերով էին զբաղւած, երբ եկաւ Իգիթը, ողջունեց ու ասաց.

— Պարոնա՛յք, հաւաքուել էք այստեղ, և ուրիշների ուշադրութիւնն էք գրաւում. գնա՛նք, մենք այսօր բաւական գործ ունենք:

Բոլորը միասին, հանդարտ քայլերով դուրս են գնում ճեմելիքից և գնում մէկ տուն, որոնք արդէն վաղուց էին սպասում այդ յարգելի հիւրերին: Մի կէս ժամից արդէն պէտք է կազմէին մէկ պլատֆո՛րմ, մէկ կեանքի պլատֆօրմ

Երբ որ վերջացրին, սկսեցին վիճակախաղ.... վիճակ պէտք է ձգէին որին որ վիճակւեցաւ, նա պէտք է կատարէր այդ գործը, այդ ծրագիրը: Վիճակը ինկաւ մէկ օրիորդի, որ չնայելով ինքը հրեայ էր բայց ռուսութեան օրէնքը, կրօնը ընդունած էր, և նրան անւանում էին Սոնիայ: Ահա՛, այդ օրիորդը պէտք ն կատարէր այն ծրագիրը, այդ վատ մարդու վերայ: Ահա՛ այդ օրիորդը պէտք է կատարէր մի գործ մի հրաշա՛լի գործ, որ հիւսիսային մեծ մայրաքաղաքը պէտք է ազատւէր այդ մարդ կոչւած հրէշի ձեռքից, և այդ հրէշը նա՛ էր, որ երկու տարի զին-

ւորական դրութիւն ստեղծեց մայրաքաղաքում, և շրջաններում, որ ամենափոքր յանցաւորին զինւորական դաշտային դատարանին էր յանձնում: Այդ այն հրէշն է, որ երեսուն հազար հոգի մի քանի օրւայ մէջ կոտորել տւեց, որոնց մեծամասնութիւնը երեխաներ և դպրոցականներ էին:

Ահա այդ «չէ թանի» վերայ պէտք է թափէ իւր սրտի թոյնը, Այն կանացի սեռը, որոնց մենք թուլամորթներ ենք կարծում, որոնց վերայ, մինչև 19երորդ լուսաւոր դարը այլ գաղափարներ ունե՛նք. և ահա այդ թուլամորթ կոչւած սեռից դուրս է գալիս մէկը, որ պէտք է ազատէ միլիօնաւոր մարդկանց այդ հրէշի ձեռից, այն «չէյթանի» ճանկերից: Անցնում է մէկ օր, օրիորդը ծանօթանում է այն բոլոր ճանապարհներին, որով ինքը մեծ յաջողութիւն պէտք է ունենար:

Միւս օրը, օրիորդը շուտ արթնում և գնում է պարտէզ, կարծես ցանկանում է իւր վերջին հրաժեշտը տալ իւր սիրած պարտէզին, և ծառերին.

Օրիորդը յուզւած նայում է երկնակամարին, զգաստւում, քաջալերւում, կարծես երկնակամարը իւր բոլոր հարստութեամբ ներշնչում էր այդ թոյլ բազուկներին ասելով.

— Զօրացի՛ր օրիորդ, քաջա՛ցիր, քեզ է սպասում մէկ գո՛րծ, մէկ հերոսական գո՛րծ, նայի՛ր օրիորդ, վրէժ են գոչում այն հերոսները, այն անմեղ մատղաշ նահատակները իրե՛ց անշուք գերեզմաններից, որոնք զոհ դարձան եղբայրասպան կօզակների անարգ գնդակներին: Քաջա՛ցիր, ազգերի փրկութիւնը, քեզ պէս հերոսուհիների է սպասում: Օրիորդը բարկացած աչքերը սեւեռեց դէպի մի կէտ, որ իւր աչքերին ուրւականի կերպարանք էր ստանում, բարկանում էր ինքն իրեն գոռում:

— Պիտի գա՛մ, պիտի սպաննեմ, սուր արարած, վրէժ են գոռում, վրէ՜ժ, այո՛. այո պէտք է գա՛մ, պէտք է ազատեմ այն թշւառ մարդկանց, որ կարողանան հանգիստ պառկել սև հողի մէջում:

Այսպիսի խօսակցութեամբ, ինքն իրեն գնաց սենեակ շւարած դրութեամբ, տեսաւ որ մայրը իւր գնալուն էր սպասում

— Մայրի՛կ, մնաս բարեա՛ւ, ես պիտի գնա՛մ, և պիտի մեռնեմ. իսկ դու այսուհետև զաւակ չունես. սիրեկան մայրիկս քեզ պէտք է կորցնեմ. ա՜հ որդիական թունաւոր վէրքը, կրծում է հոգիս, մայրի՛կ, հազիւ եմ կարողանում շնչել, մա՛յր, մնաս բարեա՛ւ, այսուհետև էլ աղջիկ չո՛ւնես այս աշխարում, չե՛մ կարող, չե՛մ, մի խնդրիր մայրիկ, ես վճռել եմ և պէտք է լինի:

Մայրը արտասուքը աչքերին, մօտեցաւ իւր աղջըկան, փարւե՛ց, և սկսեց խնդրել,

— Լսի՛ր, Սոնիա՛, հրեշտա՛կս, միշտ անօղո՛րմ պիտի մնաս, չե՞ս խղճում արդեօք քո ծերացած մօրը, լսի՛ր, սիրական աղջիկս, լսիր ինձ, և խղճայ քո առամեալ մօրդ վերայ, քեզ մահ է սպասում մա՜հ, - աղաչում եմ զգաստացիր իմ հրեշտա՛կ, եթէ քեզ ճանաչեն, եթէ քեզ բռնեն, կախաղան կ՚հանեն, անգո՛ւթ, խղճայ ի՛նձ մինակ մի թողնիր:

— Ո՛չ, մայրի՛կ, ասում է սառնասրտութեամբ օրիորդը, ուրախացիր, որ իմ անունս պէտք է անմահացնեմ աշխարում:

Մայրը տեսնում է որ աղջկան չի կարողանում համոզել, ճարահատեալ շեշտում է այս խօսքերը.

Աղջի՛կս, գնա՛, գնա Աստուած քեզ հե՛տ, իմ կաթս քեզ հալալ լինի:

Աղջիկը համբուրում է մօր ձեռքը, և յուզւած-

քայքայւած սրտով դուրս է գալիս փողոց, և գնում է Իգիթի սենեակը, որ շատ հեռու չէր այնտեղից:

Ուսանող Իգիթի սենեակը հաւաքւել էին երիտասարդներ, և օրիորդներ, իրենց վերջին հրաժեշտը տալու իրենց ազնիւ ընկերուհուն։ Ներս է մտնում օրիորդը, ընկերները և ընկերներուհիները ընդունում են ամենաքաղաքավարի կերպով, բայց զգում են որ օրիորդը շատ յուզւած դրութեան մէջ է գտնւում: Մի քիչ խօսակցութիւնից յետոյ, յայտնում են օրիորդին որ ժամը երկուսին արդէն պէտք է կատարւի ծրագիրը, որովհետև այդ ժամուն, նա՛ իւր շքախմբով կանցնի միջին փողոցով իսկ նրանց թիւը քանի կ՚հասնի:

Այդպիսի խօսքերով վերջացրին կարեւոր խօսակցութիւնը, Իգիթը կանգնեց մի կարճ ճառախօսութիւնով խրախուսեց օրիորդին ասելով.

— Գնա՛ օրիորդ, Աստուած քեզ հե՛տ, թող ուրախանայ Սօց. Դէմօկրատիան որ ունի քեզ պէս անձնըւէր օրիորդներ, քեզ պէս անձնւէր հերոսուհիների արիւնով պէտք է ազատւի Ռուսաստանի համայն մարդկութիւնը:

Վերջացրեց Իգիթը իւր ազդարարա՛ւանը. օրիորդը վերկացաւ արտասուքը աչքերին իւր վերջին հրաժեշտը տւեց իւր բոլոր ընկերներին և ընկերուհիներին, համբուրեց բոլորին, և աւելացրեց այս խօսքերը.

Ընկերնե՛ր և ընկերուհի՛ներ:

Մնաք բարեա՛ւ, ինձ սպասում են 30,000 նահատակներ և սուրբ մարտիրոսներ, նրանց արիւնի ձայնը մեզ հանգստութիւն չէ տալիս, ինձ խրախուսում են որ գնամ նրանց վրէժը լուծեմ ա՛յն հրէշ՚ից. այն «շէյթանից» որի ճանկերի մէջ հեծում և տնքում են հազարաւոր մարդիկ և կանայք: Սիրե՛լիք, ինձ այսօր սպասում է մէ՛կ գործ, որ մի գուցէ ինձ կախաղանի

կ՚ենթարկի, չ՚մտածէք, չ՚տխրէք ձեր սիրած Սոնիայի համար, եթէ ես կախւե՛մ, մեռնեմ չարաչար տանջանքի մէջ, իմացէք դեռ կենդանի եմ հոգով, և գաղափարով:

Սիրե՜լիք սիրտս լիքն է, սիրտս յուզւում է երբ յիշում եմ որ պիտի բաժանւեմ ձեզանից: Սարսուած մարմնով համբուրում է ընկերներին և ընկերուհիներին ենդրում որ հող տանեն իւր մօր վերայ: Յանկարծ, որպէս խելագար ասում է. ընկե՛րներ, մա՜յրս, մայրս ձեզ եմ յանձնում, սիրելի Իգի՛թ, իմ մայրս այսուհետև պէտք է լինի ինչպէս քո մայրը. ուրեմն մնաք բարեա՜ւ:

Բ.

Ահա Միջին փողոցով, «տրոտուարի» վերայ ման է գալիս մէկ օրիորդ, հանդարտ քայլերով և մի ինչ որ բանի վերայ մտածում, կարծես սրտի խորքերում պահւած ունէր մէկ գազան, մէկ ջանավար, որ կրծում էր խեղճ օրիորդի սիրտը ու հոգին, օրիորդը շարունակ ա՛խ էր քաշում, յառաչում, և նրա այդ մելամաղձոտ դէմքին նայողը կ՚խղճահարւէր, այդ դեռ քսան տարեկան նոր բացւած վարդի վերայ:

Նա ձեռքում բռնած ունէր մէկ պայուսակ, որի մէջ կար միս, հաց, և դրանց տակը տեղաւորւած էր թունաւոր խնձորներ: Ահա երևում է շքախումբը, որոնք շրջապատել էին կառքում բազմած «չէյթանին»: Օրիորդը գնում է կանգնում ճանապարհի այն տեղում, որ տեղով պէտք է անցնէր շքախումբը, և այնպէս է ցոյց տալիս որ կարծես թէ հազիւ պէտք է ազատւի կառքի անիւներից և այդ շփոթւած դրութեամբ դիդամամբ ձգում է իւր ձեռքից պայուսակը, որի մէջ կար

եղեր թունաւոր խնձորները, իսկ ինքը խառնւում է ժողովուրդին:

Ձին ոտքերը զարնում է խնձորներին, խնձորները պայթում են, իրենց կտորների հետ օդն են ցնդեցնում կառքը, իւր միջի «չէյթանով»: Մի քանի վայրկեանից յետոյ կառքի կտորների հետ թափւում է «չէյթանի» ոսկորների կտորները:

Այդ միջոցին, այդ սոսկալի րոպէին, խանութները բոլորը փակւեցաւ, ամէն մարդ փախնում էր իւր տունը, որ կարողանայ ազատւել, կօզակների գնդակից: Իսկ ոստիկանութիւնը որսորդ շների պէս փընտռում և գտնում են օրիորդին, բռնում ու տանում ոստիկանատուն,

Հարցաքննում են օրիորդին, օրիորդը չի ուրանում, պարզապէս, առանց երկիւղի ասում է.

— Այո՛, ես սպանեցի, ես կատարեցի այդ տէռորական գործը, հետոյ ինչքան ցանկանում են, ինչքան ստիպում են օրիորդին, օրիորդը ոչինչ չէ պատասխանում, կամ բացասական պատասխան է տալիս:

Օրիորդին ենթարկում են կաղախանի և կախւելուց առաջ նորից հարցաքննութեան են կանչում, օրիորդը գնում է, քննում են, և նա պատասխանում է.

— Այո ես ստիպւած էի սպանելու այդ գազանին, որովհետև այն երեսուն հազար անմեղ զոհերը պատիւ էին պահանջում, վրէժ էին գոռում իրենց քայքայւած շիրիմներից և դուք չ՚կարծէք թէ ինձ սպանելով կ՚վերջացնէք ամէն բան, ո՛չ. ես զոհւում եմ գաղափարի համար.—իդեալի համար, ինչպէս մեծ վարդապետը զոհ դարձաւ իւր գաղափարները տարածելու համար. ես ո բախ եմ, չատ ուրախ, որ նրա պէս խաչի եմ ենթակայ լինում. Նրա պէս խաչւում: Այսօր չազատւեցաւ ազգս գերութիւնից, վաղը կա-

զատւի, և պիտի ազատւի անշուշտ և շատ երկար չէ տեւելու. այն սերմերը որ մենք ենք ցանել, շուտով կաճի, և կ'բազմանայ, դուք անգութ էք թող կորչի միապետութիւն, ասում եմ ձեր ներկայութեամբ, որ դուք հրեշներ էք և ոչ թէ մարդիկ, էլ չունեմ ոչինչ ասելու ինչ որ կ'ցանկաք կարող էք անել։

Միւս օրը քաղաքից դուրս պատրաստել էին կախաղանը, որ սպասում էր բերանը բաց, իւր անմեղ զոհին։ Ես էլ չեմ ցանկանում նկարագրել կախաղանի ձեւը, սիրելի ընթերցողներս, որպէսզի չ'յուզուէք։ Բայց այսքանը կասեմ որ այդ օրը շատ ցուրտ էր. երկինքը ամպա՛մած, ամպերը կատաղել էին, և իրենց սրտի թոյնը թափում էին, մարդկանց վերայ ցոյց տալով կայծակի որոտումի ձայնը, և նրա զօրութիւնը։

Գոռում էին ամպերը, կարծես ցանկանում էին համայն մարդկութեանը հասկացնել որ հիւսիսային մեծ մայրաքաղաքում խաչւում է Քրիստոսի առաքեալը, ցանկանում էր հասկացնել. որ կայ մի զո՛հ մէկ անմեղ զո՛հ, ինչպէս մեծ մարգարէն խաչւեցաւ Գողգոթայ լեռան վերայ, զոհ դարձաւ իրեն գաղափարները տարածելու համար, և ահա նրա առաքեալը պէտք է խաչէին մի այլ խաչի վերայ որ աւելի եւս սոսկալի էր։

Տանում են օրիորդին, իսկ նա գնում է այնպէս վճռական և յաղթական ձեւով ինչպէս Մովսէս մարգարէն Սինայ լեռան վերայ։

Օրիորդը հասնում է կախաղանին, սարսռում է ամբողջ մարմնով, կանգնում է այն նստարանի վերայ, որի վերայ կանգնած պէտք է բարձրանար կախաղան, սկսում է իւր վերջին հրաժեշտը տալ ժողովրդին ասելով։

— Յարգելի հանդիսականներ, դուք այսօր հաւաքւել էք այստեղ, մէկ օրիորդի հարսանեաց հանդէսին ներկայ գտնուելու համար։

Ահա իմ ամուսինս, ա՛հ ահռելի ամուսին որ կանգնած է գլխիս վերայ, հանդիսականներ իմ բախտս այսպէս էր, որ ինչպէս նոր ծաղիկ պէտք է թառամեմ։ Ցանկարծ աչքը ընկաւ մէկ կնոջ, որ իւր մազերն էր փետտում, գլխին խփում, այդ Սոնիայի մայրն էր. խօսքը ուղղելով մօրը ասաց, յուսահատ. ընկճւած և կցկտուր ձայնով. «մայր ուրախացի՛ր, մ'չ թէ լաց. այսօր քո մինուճար աղջկայ հարսանեաց հանդէսն է, ուրախացիր մայր իմ, թշւառ անմխիթար մայր.» արտասուքը խեղդում էր գեղանի օրիորդին և չէր կարողանում արտասանել խօսքերը։

Ուրախացէք և դո՛ւք, յարգելի հանդիսականներ, ընկե՛րներ, ուրախացէք եթէ կաք այս բազմութեան մէջ, ես մեռնում եմ գոհ սրտով, իսկ իմ գաղափարներս ողջ են և կ'մնան աշխարում առանց տատանման մինչև յաւիտեան,

Կրկնում եմ նորից թող կորչի միապետութիւն, կեցցէ Սոց. դեմոկրատիայ կեցցէ ռամկավարութիւն, մահ բռնակալին, անկցի՛ բռնապետութիւն Ընկերներ, հետեւեցէք ինձ, պատերազմ, պատերազմին, կեանքին պատիւ, կեանք Սոցիալիստ յեղափոխութեան. ուրեմն պատրաստ եմ։ Աչքերը բարձրացրեց տեսաւ որ ահռելի կախաղանը բերանը բաց իրեն յափշտակել է ցանկա՛ում, նորից բարկացաւ ու ասաց.

— Ահա գալիս եմ, անգո՛ւթ, խեղդիր ինձ։ Ինքը բարձրացաւ, կախուեց իւր ձեռքով։ Այս ժամից յետոյ մարդիկ տեսնում էին որ կախւած էր կախաղանի վերայ մէկ անշուք դիակ, մէկ վեհանձն էակի դիակ որ քամին հանգստութիւն չէր տալիս միշտ օրօրում էր այդ սրբացած դիակը։

Ահա մէկ էակ, որ երբէք չէր ընդունում բռնակալութիւն, լինի թէ միապետի կողմից, թէ բիւրոկրատի, թէ իւր հօր, կամ եղբօր։ Ուրեմն ազատութիւնը կանանց համար անհրաժեշտ է, քանի որ ազատութիւնն է որ ծնում է իւր միջից այսպիսի վեհանձն հերոսներ, ու հերոսուհիներ։

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Մի շատ տխուր երեկոյ էր. Խ. քաղաքի բնակիչները վաղուց արդէն իրենց գործերը վերջացրած գնացել էին իրենց տները։

Քաղաքի այդ թաղամասի բնակիչները յոյսերը կտրած մի ինչ որ բանի վերայ փախսում էին.

— Ա՜խ Աստուած էլի որի՞ն պէտք է բռնեն, որի՞ն բանտարկեն, կամ թէ որին աքսորեն։

Օրը անձրեւոտ էր. կարծես բնութիւնը ողբում էր այդ թաղեցիների վերայ, նրանց դրութեան վերայ։ Փողոցները արդէն վաղուց դադարել էին իրենց յաճախորդներից, միմիայն գիշերապահ ոստիկանների սվխտոկի ձայնն էր որ խանգարում էր քաղաքի մեռելային դրութիւնը։ Մեծ փողոցի վերայ, մէկ երկյարկանի տան մէջ ապրում էր մէկ երիտասարդ, որ մինչև այդ քաղաքը հասնելը մի քանի անգամ աքսորուել էր, ծեծի և բանտի էր ենթակայ եղել։

Ժողովրդի ճնշման, յառաջանքի ձայնը, նրանց արդար բողոքի ձայնը, երիտասարդին հանգստութիւն չէր տալիս, այդ երիտասարդը Իգի՛թն էր։

Քաղաքի այն վերնայարկում միայն կենդանութիւն էր երեւում. հաւաքուած մի քանի երիտասարդներ խորհրդակցում էին, խօսում էին մէկ ահռելի գործի

վերայ։ Ծրագի աղօտ լոյսը ընկել էր Իգիթի գժգոյն երեսին, որ այդ պահուն տեսնողը կ՚կարծեր, կ՚նշմարեր նրա վճռողական դէմքը, որի վերայ կարելի էր կարդալ, Ազատութիւն, Եղբայրութիւն, Հաւասարութիւն խօսքերը։ Նրանք խօսակցութեամբ էին զբաղուած, յանկարծ լսում են ոտքերի ձայն. դուռը բացւում է, ներս է մտնում մէկ երիտասարդ, մազերը գզգզուած, գունատ, նրա մելամաղձոտ դէմքից և շփոթմունքից յայտնւում էր, որ երիտասարդը կատարել է մի գո՛րծ, մի դիւցազնական գործ,

— Գէո՛րգ ջան, պրծա՞ր, կատարեցի՞ր.

— Այո պարոնս տղամարդի պէ՛ս քաջի պէ՛ս։

Իգիթը նստած տխուր տրամադրութեան տակ կարծես մի ինչ որ բանի էր սպասում, յանկարծ լսւում է բուի չարագուշակ ձայնը, որ եկել նստել էր այդ երկյարկանի տան կտուրի վերայ։ Այդ ձայնը չարագուշակ է ասում է Իգիթը, և անհամբերութեամբ բանում է դուռը. նայում հեռո՛ւ, շատ հեռո՛ւ, բայց ոչինչ չէր կարելի տեսնել, քանի որ այդ երեկոն շատ մութն էր և խորհրդաւոր։

Կարծես լուսինն էլ այդ օրուայ դէպքից վախեցած, պառկել էր ամպերի, մո՛ւթ ամպերի ծոցում. մերթ ընդ մերթ հանում էր իւր գլուխը հսկայ ամպերի ծոցից, կարծես ցանկանում էր գիշերապահ ոստիկաններին հասկացնել մէկ գաղտնի՛ք, մէկ քաջագործո՛ւթիւն։

Լուսը բացւելու վերայ էր, գիշերապահ ոստիկանները պատահում են մէկ դիակի, մէկ գազանաբարոյ մարդու դիակի, որի օրով բանտերը լեցուել էին, բանտերի խորքերում, հեծում, և տնքում էին իդիալիստ մարդիկ, հերոսներ, ու հերոսուհիներ, Ահա պատահում են այդ դիակին։

Բ.

Մէկ ցուրտ երեկոյ էր․ Լուսնի շողերը ընկել էին դեռ նոր ընկած ձիւնի վերայ, և ձիւնը մէ՛կ հրճւանքով արծաթի պէս պսպղում ու պլպլում էր․

Դիտմամբ, կարծես իր փայլը ձգում էր այն դռների վերայ, որոնք արդէն կասկածւած էին, որոնք արդէն խուզարկւում էին։

Խուզարկութիւնը շարունակւում էր, Իգիթը նստած լուռ ու մունջ, և մտածում էր այդ օրւան բարբարոսութեան վերայ, յանկարծ ներս է մտնում մէկ երիտասարդ, յուզւած դրութեամբ, ու գոռում,

— Պ. Իգի՛թ, դեռ նստա՞ծ էք, ոչինչ չիմացա՞ք, չիմացա՞ք որ այսօր ոստիկանապետը ճաշել է մեր տէրտերենց տանը, ես հաստատ աղբիւրից տեղեկացայ, որ իբրև թէ քահանան խնդրել է ոստիկանապետին, որ քեզ աքսորել տայ այստեղից․ առարկելով թէ դու ոտնատակ ես տալիս եկեղեցին, և իբրև յեղափոխական, ամեն չարեաց պատճառ ես դառնում, ինձ ասաց նրանց աղախինը, օրիորդ Նատեան, ու խնդրեց որ քեզ հաղորդեմ․ ուրեմն շտապենք թագցնել որ ո՞վ գիտէ կարող է խուզարկութիւն լինել։

Այն երեկոյ քաղաքի շատ տներում սուգ էր արդէն, որի՝ եղբայրն էր բանտարկւած, որի՝ որդին, որի՝ ամուսինը, որի՝ ազգականը, մի խօսքով որին կասկածել են․ Բանտարկութիւնը լինում էր այսպէս․ եթէ տեսնէին մի որև է երիտասարդի լայն գօտիով, կամ երկար մազերով, նրան կ'բանտարկէին առանց մի որևէ հարցաքննութեան։ Բայց մոռացել էին նրանց ղեկավարին, այն էլ շնորհիւ հայ քէշիշի, ներս են մտնում Իգիթի բնակարանը, ու սկսում են խուզարկել, տակնուվերայ անել։

Մի ժամւայ մէջ հասնում են մարդկանց անհամար բազմութիւն, ոստիկաններ, զինւորների խմբեր, դիակը փոխադրում են իր տունը։ Կատաղել էին ոստիկանները, կատաղել էին բիւրոկրատները, ձեռն ընկած մարդկանց ծեծում, հայհոյում էին, և յետոյ փոխադրում էին բանտ. մի խօսքով ժողովրդի դրութիւնը շատ սոսկալի էր․ մանաւանդ այն րոպէն, որ հաւաքւել էին բոլոր զինւորները, մուզիկայով պէտք է գաղանին տանէին եկեղեցի, և այնտեղից էլ դէպի վերին Երուսաղէմ

Եկեղեցիում հաւաքւել էին հազարաւոր ոստիկաններ, զինւորներ, ու երկսեռ բազմութիւն․ Ռուս քահանան ամբիոն է բարձրանում, ու սկսում է այնտեղից ճառախօսել։

— Դո՛ւք, Ռուսաստանի հարազատ զաւակներ, տեսնո՞ւմ էք դագաղի միջում, հանդարտ ու խաղաղ պառկած է այն դիւցազնը, որը իր կեանքում կռւում էր Ռուսաստանի բոլոր թշնամիների հետ․ կռւեց նա և այդ դաւաճան յեղափոխականների դէմ, ցանկացաւ կայսրութեան դրօշը բարձր պահել։ Հալածեց, բանտարկեց, կախաղանի ենթարկեց այն մարդկանց, որոնք ցանկանում էին տապալել Աստուծոյ և մարդկանց ընտրեալին, (Կայսրին) Սիրե՛լիք, իմացէք թէ ինչքան հզօր է Ռուսաց կառավարութիւնը, որ նախ ինչպէս յաղթեց Թրքաց բանակին։ ինչպէս յաղթեց Ճապոնիային, ինչպէս յետ խլեց տւած սահմանադրութիւնը, կա՞յ մի այնքան հզօր, և քաջ կառավարութիւն, ինչպէս Ռուսաստանը․ Ռուսաստանի հարազատ զաւա՛կներ չ'դաւաճանէք մեր ամենահզօր կառավարութեանը, չ'ցանկանաք սահմանադրութիւն, չ'թողնէք ձեր մէջ աճէն և բազմանան չար փչեր․ ինչպէս Սօց, դեմօկրատները և միւսները, հալածեցէք ան-

պիսի դաւաճաններին և դուք չ'մոռանաք որ այսպիսի հերոս, որը հիմայ տեսնում էք դագաղում, դեռ շատ կան Ռուսաստանում, որոնք պէտք է պաշտպանեն մեր կառավարութիւնը։

Այն յօդուածագիրը, այն գրագէտը, որը կ'համարձակի գրել լրագրներում և վարկաբեկ անել կառավարութեան պարկեշտ դիմակը, նրա մատները կտրեցէք։

Այն պերճախօսը որը կ'համարձակուի իւր լեզուով անարգել կառավարութեա՛ն և նրա կազմին, նրա լեզուն կտրեցէք,

Մի խօսքով, թէ ցանկանում էք որ մենք լինենք մեր երկրի տէրը, այն ժամանակ պէտք է սպանէք բոլոր հայերին, հրեաներին, լեհացիներին, վրացիներին, բժիշկներին, փաստաբաններին, ուսանողներին, ուսուցիչներին, վերջապէս բոլոր զարգացած մարդկանց. այն ժամանակ Ռուսաստանը մեր սեփական երկիրը կ'դառնայ (այս ճառի վերայ ծիծաղեցին բոլոր լրագիրները բացի Նովոյ Վրեմեայից, և դատի հրաւիրեցին քահանային)։

Ահա այսպիսի մէկ անձռանի քարոզով խրախուսում էր սև հարիւրակներին, որ նորից բեակսին յառաջ բերե, ընդհանուր ջարդ, և մասնաւորապէս հրեաներին։

Վերջանում է ճառը, և պէտք է յուղարկաւորէն։ Թաղման հանդէսը, յուղարկաւորումը վերջացնելուց յետոյ, սկսեցին ջարդել ու սպանել հրեաներին և խուզարկել հայերի ու ռուսների տները։

Խուզարկում էր և հայ քահանան, չ'զարմանաք, քանի որ այդպիսի հոգեւորականներ շատ ունենք Ռուսահայաստանում և մասնաւորապէս Թուրքիայում։

Անսպասելի կերպով ներս է մտնում քահանան Իգիթի բնակարանը, և յետոյ հարցնում նրա որպիսութեան մասին։ Իսկ մի քիչ վերջ ներս են մտնում ոստիկանները իրենց պետերով, ու սկսում խուզարկել, քարուքանդ անել։ Իսկ քահանան ասում է ոստիկաններին.

— Միք խուզարկի խնդրեմ, պարոնը յեղափոխական չէ, և մի քանի պաշտպանողական խօսքեր ըրաւ։ Իսկ Իգիթը չ'համբերելով բարկանում է քահանայի վերայ ու ասում.

Քէշի՛շ, քէշի՛չ, ինձ համբուրելով ես մատնում, կորի՛ր, հեռացի՛ր, այստեղից։

Քահանան և Իգիթը խօսքի էին բռնւել, ոստիկանապետը գնում է պահարանը բանում, սկսում է հետաքրքրութեամբ փնտռել մի ինչ որ բանի, յանկարծ գտնում է մէկ թուղթիկ, ու սկսում է կարդալ, հէնց առաջի երեսից առաջի տողից կարելի էր հասկանալ, այդ պրէկլամացիայի ինչ եղածը։ Ահա այդ թուղթիկի թարգմանութիւնը։

— Ընկերնե՛ր, դուք տեսնում էք ռուս կառավարութեան բռնած ընթացքը դէպի յեղափոխականները, դէպի ժողովուրդը. մեզ խարեց անիրաւ կառավարութիւնը, սահմանադրութիւն տւեց, որպէսզի պղտոր ջրի մէջ ձուկ որսայ. տեսնում էք ինչքան հարազատ ընկերներից բաժանւեցանք։

Որը կախաղանի ենթարկեցին, օրին տաժանակիր աշխատութեան, որ՚ն յաւիտեան աքսոր, և քանի քանի հարիւրներով մարդիք թափւեցան բանտը, այս անիրաւ ոստիկանապետի երեսից, մանաւանդ որ բանտից տեղեկութիւն ստացայ, Կարպոյին ծեծելով են սպանել, Պետրոս՚ն խշտիկների վերայ են առել, և այսպէս չարաչար սպանել, միւսին աքցանով մսերը փետել,

սպասեցէ՛ք, սպա՛սեցէք, մինչև ե՞րբ, մինչև երբ այս անարդարութիւնները կատարուի յեղափոխութեան առաջ, յեղափոխութեան սրտի մէջ. սպասեցէք մինչև ե՞րբ մենք մեր երկրի տէրը չ՚լինենք, կարծեմ որ մենք անասուններ չե՛նք, ինչպէս որ կարծում են այդ անգութները։

Ընկե՛րներ, այսօր ժամը երկուսին անպատճառ կ՚վերջացնենք այդ աւազակին, և այդ տէռորական գործը կ՚յանձնէք ընկեր Գէորգին որը գտնւում է Պ. Իգիթի հրամանի տակ, և աշխատեցէք որ չ՚բռնւէք։

Որտեղ որ կայ. որտեղ որ կիմանաք կայ անխիղճ կալուածատէր և կամ հակայեղափոխական կղերականներ, սպաննեցէք, որովհետև նրանք են եղել յեղափոխութեան քայքայիչները։

Մեր կողմերում 500,000 բանւորներ գործադուլ արին, աշխատէք այդտեղ էլ գործադուլ անել, կազմեցէք մէկ սիրտ. մէ՛կ հոգի, և դուք հաւատացէք որ զինւորների մեծամասնութիւնը մեր կողմն է

Այս «պրօկլէմացիան» կ՚փակցնէք ամէն տան անկիւններում թող քաղաքացիք կարդան և հասկանան որ մեր կառավարութիւնը քրիստոնեայ լինելով Քրիստոսի խաչի դէմ է գնում ինչպէս գրել է հայ գրագէտներից մէկը, (Նրասնի պրիխոտ, պրոտիւ կրիստա,) քրիստոնեայ զօրքը քրիստոսի խաչի դէմ,։

Իմացէք ժողովուրդ, որ մենք չենք ցանկանում միապետութիւն թող կո՛րչի միապետութիւն, կեցցէ ընկերվարութիւն, կեցցէ՛ Սօց. դեմօկրատիայ։ Ամբողջ աշխարհի բանւորներ միացէք և խորտակեցէք այդ միապետութեան ռէժիմը.

Ոստիկանապետը կարդալուց յետոյ այնպէս խփեց իւր չաշկայով Իգիթի գլխին որ արիւնի հետ շաղախւած ընկաւ գետին։

Իսկ դաւաճան քէշիշը տեսնելով այդ սարսափելի դէպքը, շտապում է տուն, խմում իւր վաղուց սիրած քրիստոսի արիւնը, և ընկնում մօրփ՚ինի գիրկը իսկ Իգիթին մահւա՛ դրութեամբ, տանում են բանտ

Այդ գիշեր մի սոսկալի գիշեր էր. Հայ, Ռուս, Հրեայ տեսնում են որ կորցրին իրենց սիրած բարեկամին, իրենցից պատիւ վայելող Իգիթին։ Համարեայ ամէն տան առարկան էր այդ, ողբում էին Իգիթի ծաղիկ հասակի վերայ։

Առաւօտեան բանտի լուսամուտից նայում էր մէկ երիտասարդ, գլուխը կապած, ու ինքն իրեն ասում. Ա՜խ, թէ ձեռքս կնկնե՛ս, գազան ոստիկան, ես քեզ այդպէս չեմ զարկի այլ մի ուրիշ տեսակ, այնպէս ինչպէս մի քանիսներին ուղարկել, եմ վերին Երուսաղէմ Ցանկարծ սթափւում է ասելով. Ա՜խ բա՛նտ, բա՛նտ, հազիւ հեռացել էի քեզանից, էլի ինձ ձգեցիր դէպի քեզ, ա՜խ ինչքան ազատո՛ւթիւն, գարշահոտո՛ւթիւն, Մովսէս մարգարէի նկարագրած դժողքին է նմանում դեռ մի գուցէ նրանից էլ աւելի վատ։

Իգիթը սոսկալի դրութեան մէջ էր, որ լսեց բանտի սրահում, մէկ աղմո՛ւկ, մէկ լացի ձա՛յն, մէկ թշւառ մօր լացի ձայն։ Իգիթը տեսնում է որ այդ կինը իւր մազերն է փետում, կուրծքին է խփում, ու ասում.

— Թողէ՛ք, թողէ՛ք, անխիղճներ, թողէ՛ք գնամ իմ մինուճար որդուն տեսնեմ. ա՜խ դուրս եկէք գայլե՛ր, արջե՛ր, բորենի՛ներ, դուրս եկէք ձեր որջերից, պատառոտեցէք իմ այս արիւնոտ կուրծքս, միթէ կախաղան է սպասում իմ խեղճ ու կրակ որդուն.

Այդ անբախտ կինը խեղճ Իգիթի մայրն էր։

Ա՜խ ծնողական կսկիծ քա՜նի քա՜նի մայրեր գցել ես այս դրութեան մէջ, քա՜նի քա՜նի անմեղ մայրեր

այս դրութեամբ ընկել են Ռուսաստանի սև մութ բանտերում։

Ով որ մայր է եղել, ով որ ծնողական կսկիծ է տեսել, նա՛ միայն կարող է երևակայել նրա դրութիւնը։

Խեղճ մայրը որ տեսնում է չեն թողնում որ գնայ իւր կարօտեալ որդուն տեսնի, ուշաթափւում և ընկնում է գետին։

Այդ ալի արտասուքի ձայնը ընկնում է Իգիթի ականջը, Իգիթը հասկանում է որ այդ ձայնը իւր խեղճ ու կրակ մօր ձայնն է, իւր անբախտ մօր ձայնը։

Իգիթը ինչքան ուժ ունէր գոռում է ոստիկաններին վերայ, — դուռը բա՛ցէք, եթէ ո՛չ, կ՚ջարդե՛մ, տեսնում է որ ուշադրութեան առարկայ չէ լինում, ուշադրութիւն չեն դարձնում իւր խօսքին, վերցնում է իւր մօտ դրած երկաթը, այնպէս է խփում դռան երկաթներին որ կողպէքը ջարդւում է։

Իսկ ինքը շղթաներով դուրս է գալիս սրահը, ծունկ է չոքում մօր շնչասպառ գլխի մօտ ու ասում.

— Մայրի՛կ, մայրիկ, ես ե՛մ, քո Իգի՛թը. խօսի՛ր, զգաստիր, խօսիր հետս։

Այդ աղեկտուր խօսքերից զգաստանում է մայրը, ու կցկտուր ձայնով ասում.

— Ա՜խ որդի՛, ո՛րդի, անբախտ մայր մի եմ. ու ձեռքերը բարձրացնում է դէպի երկինք, ու թափում է իւր կրակւա՛ծ, վառւած բերանից այս խօսքերը.

— Կրակւի՛ր երկինք, քանդւիր երկի՛ր, քանդւի՛ր այսպէս միապե՛տին, այ պէս կառավարութեանը, խորտակիր քո երկրի քանդւած կտորներում, կամ թէ իմ արւած սիրտս պատառիր, որ ես էլ հանգստանամ, ու այսքան ցաւ չ՚տեսնեմ։

Ահա, այդպիսի ողբալի տեսարանին ներկայ էին բանտի բոլոր աւազակ ոստիկանները, Երբ յանկարծ Իգիթը աչքերը յառեց դէպի մէկ ոստիկանապետ, ամենաճարպիկութեամբ վերցրեց մօտ երկաթը, և այնպէս խփեց ոստիկանապետին, որ գազանի պէս գոռալով գետին ընկաւ։ Այդ սրտաճմլիկ տեսարանին, մայրը նորից ուշաթափւել էր, և յանգամանքից օգտւելով, այդ դրութեամբ, վերցնում են անբախտ կնոջը և փոխադրում իւր տունը։

Մէկ ակնթարթում, ոստիկանները յարձակւեցան Իգիթի վերայ, նորից փակեցին երկաթէ դռների յետեւում.

Մի քանի օրից յետոյ, Իգիթին փոխադրում են գիշերով Մոսկւայի կենտրոնական բանտը։

Գ.

Ապրիլ ամսւայ մէկ փոթորկալից գիշեր էր. քամի և ձիւնախառն անձրև էր տեղում, դաւաճան երկնքից, բանտի լուսամուտից դուրս էր նայում Իգիթը ու ինքն իրան ասում.

Օ՜ չար տխուր երեկո՛յ է, կարծես բնութիւնն էլ է ողբում իմ պեղճ ու կրակ դրութեան վերայ։ Ոստիկաններից մէկը, որ իբրև պահ պան նշա՛նակւած էր Իգիթի բնակարանի, նրա օթեակի առաջ, մօտենում է կամացուկ, ու ասում.

— Սիրե՛լիս, վաղը առաւօտեան ձեզ պէտք է տանեն դատարան, դատի օրն է։

— Դու ոստի՛կան, սիրելի բարեկամս, ինձ ճանաչո՞ւմ ես։

— Այո՛, ինչպէ՞ս չէ, դուք, սահմանադրութեան այն երջանիկ օրերին եկաք այստեղ միթինկ դումարե-

ցիք, և խայտառակեցիք կառավարութեանը, և նրա բիւրոկրատիկ կազմին, ես քեզ այնտեղից իմ ճանաչում.

— Ուրեմն ես ազատ կեանք էլ եմ տեսել, օ՛, Աստուա՛ծ իմ, Աստուա՜ծ իմ, մինչև ե՞րբ թշուառ մնամ։

Իգիթը սկսում է յուզուե՛լ, մութ մտքերը պաշարում են նրան, ու տրտնջալով ասում է.

— Ես արդէն գուշակել եմ իմ կեանքս, սիրե՛լի բարե՛կամս։ ինձ կամ կախաղանի պէտք է ենթարկեն, կամ թէ՛, յաւիտենականապէս պէտք է աքսորէն։

Լոյսը բացուեցաւ, առաւօտեան գալիս են մի խումբ զինուորներ, ու բանում են այն բանտ կոչուած սպանդանոցի դռները, դուրս են հանում Իգիթին, նայում շղթաների վերայ, նորից ամրացնում. որպէսզի չ՚փախչի։

Այդ օրը բանտի փողոցը լիքն էր անհամար բազմութեամբ, Իգիթին նայելու համար էին եկել, քանի որ այդ փողոցը ծանօթ էր Իգիթին իւր ուսանող եղած ժամանակից։

Կանայք լալիս էին. երբ տեսնում էին Իգիթին շղթաների տակ Իգիթը դժգունացել էր, նրան չէր կարելի ճանաչել, թէ այն անձը, այն կտրիճ, և հռչակուած յեղափոխականն է։ Բայց նա գնում էր զինուորների հետ, յաղթական և վճռողական քայլերով. ժողովուրդը յուզուած ասում էր.

— Թող Աստուած օգնի քե՛զ, խեղճ երիտասարդ։
Ահա և դատարանը.
Իգիթին կանչում են ներս ու հարցնում.
— Դու յեղափոխական ե՞ս.
— Այո՛ պ. ոստիկան.

Դու տեղեկութիւն ունե՞ս այն ազնուահոգի, գերեբալ, Նահանգապետի սպանութիւնից.

— Այո, պ. ոստիկան.

— Դէ՛ պատմէ տեսնենք ի՞նչ գիտես.

— Ես ոչինչ չ՚գիտեմ, պատասխանում է Իգիթը, նեղացած։ Այն պահուն նրա վերայ նայողը կ՚տեսնէր, թէ ինչպէս կրակ էին թափւում նրա աչքերից, մանաւանդ որ աչքերը յառում էր դէպի ոստիկանները։ Վճռում են Իգիթին տասնըութը տարի տաժանակիր աշխատութեան, Սիբիրեա, Ուրեմն Իգիթի գուշակութիւնը սխալ չէր եղած։

Իգիթին բերում են բանտ շրջապատուած զինուորներով. տեսարանը համարեայ թէ նոյնն էր։

Մի գեղեցիկ օր, արեւի ճառագայթները ներս էին ընկել բանտի լուսամուտից, և լուսաւորում էր բանտ կոչուած սպանդանոցը։ Իգիթը գլուխը դրել էր իւր երկու ձեռքերի մէջ, ու ինքն իրեն ասում.

— Մ՛ի մէկ էլ կ՚տեսնեմ քեզ, ազա՛տ, համարձակ. արե՛ւ, մէկ էլ պիտի ապրեմ այս աշխարհում, ո՞հ դեռ նպատակներս չ՚կատարած հող պէտք է մտնեմ։

Մէկ էլ ինքն իրեն սիրտ է տալիս ու ասում. ո՛չ սրանք չ՚պէտք է կարողանան ինձ տանելու տաժանակիր աշխատութեան կազատուե՞մ, Աստուած ողորմա՛ծ է։

(Այդ էլ ճշմարիտ գուշակութիւն)։

Իգիթը զբաղուած էր այդ հարց ու պատասխանով, երբ ներս մտաւ բանտի զինուորը, ու յայտնեց որ վաղը բանտակեալներին պէտք է տանեն կայարան, որ այնտեղից էլ փոխադրեն Սիբիրիայ.

Այս լուրը յայտնեցին, մէկը գնաց զինուորներից, իսկ միւսը մնաց Իգիթի օթեակում։

Հոն մնացող զինուորը մօտեցաւ բանտարկեալին, ու ասաց քաղաքավարութեամբ։

— Սիրելի Իգիթ, ինձ ճանաչո՞ւմ ես. Ես ձեր յեղափոխական զինւորներիցն եմ. ինձ վերցրին զինւոր, և ես էլի յեղափոխան եմ, ու միշտ պրօպականտայոնք զբաղւում: Այն զինւորները օրոնք որ մինչև Սիմբիրիայ պէտք է տանեն ձե՛զ նրանք բոլորն էլ յեղափոխականներ են, ու բոլորն էլ քեզ ճանաչում են: Լենք որ տեսանք քեզ, վարկենապէս ճանաչեցինք, ու մտածեցինք որ մի կերպ փախցնենք քեզ, կա՞րող ես փախնել, ու ազատւել.

— Օ՛ սիրելիս եթէ դուք ինձ ազատէք, ես կ՛փախնե՛մ քա՛ջի պէս:

— Ուրեմն եթէ կարող ես քեզ պատմեմ. չոգեկառքը կանգ՝ի Սիբիրիայի վիթխարի անտառով, և այն անտառում կայ մէկ կայարան որ կոչւում է (Իսկուսկից) ահա՛ այն կայարանում «պոեզդը» կանգ կառնի մէկ ժամ, դու սուտ հիւանդ կ՛ձեւանաս, իսկ մենք կ՛գնանք կ՛յայտնենք ոստիկանապետին, որ բանտարկեալներից մէկը, շատ դէշ հիւանդ է, և ցանկանում է որ մի կէս ժամ մնայ արեւի առաջ, կաղաչենք մենք էլ, մեր օֆիցարը, (սպան) Տօլստօյի աշակերտներիցն է, և բաւական բարի երիտասարդ է, մանաւանդ որ ձեզ էլ ճանաչում է: Այս պլանը նա՛ է կազմել, երբ թոյլ կ՛տայ, և երբ մենք կիջնենք անտառ դու կ՛պահւիս քարայրի մէջ, մենք կ՛թողնենք քեզ. կ՛վազենք դէպի անտառ, ու կսկսենք հրացաններ պարպել, գոռալով իբրև թէ բանտարկեալը անյայտացաւ. քեզ այդպիսով կազատենք, համաձա՞յն ես. չ՛նայելով մենք քո փոխանակ կ՛բռնւենք:

— Շատ ուրախ եմ սիրելի բարերարս, եթէ այդպէս նպատակ ունես, շուտ իրագործիր:

— Մենք արդէն մտածել ենք, ու պատրաստ ենք, ուրեմն մնաս բարեաւ:

Կէսօր էր արդէն, ոստիկանապետը եկաւ բանտ, և բանտի նաչալնիկին յայտնեց որ, քառասունը չորս հոգի այսօր պէտք է ուղարկէք աքսոր, տասը հոգի կախաղանի պէտք է երթարկէք, որոնց մէջ էր և Գէորգը, ութը հոգի յաւիտենական աքսոր, երկու հոգի պէտք է գնդակահար լինեն, իսկ մնացածը, տասը տարի տաժանակիր աշխատանքի, որը տասնուհինգ, իսկ Իգիթից որ շատերը սոսկում էին, նրան տասնըութը տարի:

Բացւեցաւ բանտի դռները, փողոցներում բազմաթիւ մարդիք էին հաւաքւել, ու նայում էին բանտարկւած երիտասարդների վերայ, ու շատերի աչքերից կաթկաթում էր արտասուք:

Այնպիսի մէկ սոսկալի տեսարան էր, որ նկարագրել անկարելի էր. դուրս եկան քառասունը չորս հոգի, իրար կապւած շղթաներով, որ ամենաքարսիրտ մարդու երակներին նոյն իսկ կ՛ազդէր: Տեղաւորեցին բանտարկեալներին, ու ուղեւորւեցան...,

— Ահա և Սիբիրիայի գազանանոց անտառը որ մարդ ցորեկով կ՛սոսկայ նրա միջից անցնելու.

Ահա և կայարանը... Շոգեկառքը կանգ առաւ, զինւորներից մէկը որը որ պաշտօնով մեծ էր, մօտեցաւ, ծածուկ, և ասաց Իգիթին. «քաջա՞ցիր, ժամանակն է:»

Զինւորը գնում է սպայի մօտ ու ասում.

— Ձերդ մեծափայլութիւն, բանտարկեալներից մէկը շատ տկար է, և ցանկանում է որ դուրս գայ մի քանի րոպէ, առարկում է թէ ես պէտք է մեռնեմ, և կարօտ պէտք է մնամ այս արեւից:

Սպան հրամայում է, տարէք չորս զինւորներով, և լաւ նայէք որ չ՛փախչի:

Զինւորները հրամայում են Իգիթին որ ցած իջնի

շոգեկառքից, իջնում է բանտարկեալը չորս զինւորների հետ, ու գնում անտառ։

Բաւական հեռանում են, ցոյց են տալիս բանտարկեալին մէկ քարանձաւ, պահում են նրան այնտեղ, ու իրենք քանի որ ուժ ունեն, վազում են անտառի խորքերը, ու հրացանները արձակում. Նրանց ձայնին պատասխանում են կայարանի զինւորները, ու գնում են օգնութեան, կարծելով թէ զինւորների վերայ յարձակւում է գործել, կամ արջը, կամ գայլը, կամ բորենին։ Բայց ի՞նչ զարմանք... գնում և տեսնում են որ Իգիթը փախել է. Ամբողջ չորս ժամ տակն ու վերայ են անում անտառը և չեն կարողանում գտնել Իգիթին, որովհետև բանտարկեալը, պահւել էր գազանի որջում, շատ ապահով։

Ոստիկանները տեսնում են որ չեն կարողանում գտնել, թողնում ու գնում են կայարան։

Իգիթը քարայրում մնում է տասը օր, քաղցած, ծարաւ. վերջապէս դուրս է գալիս քարայրից շղթաներով, բայց երկիւղ չէ անում որ մի գուցէ երկդրորդական գազաններ՝ չհանդիպի Ա՜հ, սոսկալի կեա՛նք, շղթաները արգիլում են խեղճին, եթէ մի քիչ չշտապէր, կամ անզգուշութիւն անէր, մի գուցէ գազանները լսէին ու այն ժամանակ, երբէք փրկութիւն չկար։

Խեղճի թէ ձեռքերը, և թէ ոտքերը կապած էին ի՞նչ անէր յամենայն դէպս այդ կաշկանդւած դրութեամբ պոկում է գետնից կանանչ խոտ, և մի քիչ էլ վայրենի պտուղ, ու գնում իր քարից ձուլւած բնակարանը ճաշելու. Ճաշում է, կշտանում, և էլի աշխատում է մի կերպ ազատւի այդ շղթաներից, այդ անիծւած շղթաներից։

Այն մարդը որ այնքան քաջութիւն էր արել, այն

վարիկեանին ծունկ էր չոքել աչքերը դէպի վեր յառել, ու աղօթում էր Աստուծուն, ասելով.

— Ցոյս դո՛ւ ես Աստուա՛ծ, եթէ կա՛ս, եթէ գոյութիւն ունես, մի թողնէր ինձ գազանների փայ դառնամ։

Աղօթելուց յետոյ, նորից քարը վերցնում և սկսում է ջարդել կողպէքը, և յանկարծ տեսնում է որ բացւեց։ Իգիթը տեսնում է որ այդ գործում մի գերբնական ուժ օգնեց իրեն, ծունկ է չոքում, նորից աղօթում է Աստուծուն, ու այնտեղից վերադառնում է։ Արդէն գիշեր էր. մէկ սոսկում կար անտառում, մի սոսկում, որ սարսափեցնում էր ամենաքաջասիրտ մարդուն

Իգիթը լսում է որ անտառի խորքերից գալիս է մէկ դղրդոցի ձայն, որ ճիւղերը կոտրելով դէպի իրեն է գալիս։ Իգիթը իմանում է որ այդ գազանը արջ է, ու գնում է իր բունը, այն բունը, որ ինքը բաւական ժամանակ հիւր էր մնացել։ Առանց ժամանակ կորցնելու, բարձրանում է հաստ արմատ կաղնու ծառի վերայ, մինչև գալիս և անցնում է գազանը։

Լուսը բացւեցաւ։ Իգիթը իջնում է ծառից, և գնում ուղիղ, երկաթուղու ճանապարհով, բայց անտառի խորքերով, մէկ շաբաթւայ մէջ, հազիւ է կարողանում, դուրս գալ, անտառից։ Դուրս է գալիս, կանգնում անտառի ծայրին, ու մտածում, — ո՞ւր գնամ, տեսնում է որ հեռուից գալիս է շների հաչոցի ձայն, ու սկսում է գնալ, դէպի այդ ձայնը։

ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Յուլիս ամսուայ մէկ տխուր երեկոյ էր․ Սիբիրիայի Սալա գիւղը նիրհում էր թանձր խաւարում․ կարծես թէ այդ կախարդիչ գիշերը, ցանկանում էր գիւղացիներին հասկացնել, մի տխուր իրողութի՛ւն, մի չարագուշակ լո՛ւր։

Այն տարին, ցաւալի էր Սիբիրիայի, և իւր շրջակայ գիւղերի դրութիւնը։ Մարդիկը ցանք են արել, ցորեն ցանել, անձրեւ չի եղել, բերք չկայ․ որ կողմ նայում ես ցաւ, քաղծացութիւն, մերկութիւն, տառապանք։

Զգիտե՞ք ո՞ր ժամանակ, այդ կողմերում բուն է դրել․ մէկ գազան, մէկ աւազակ գիւղացիների հոգին հանող։ Գերմանացի յայտնի վաշխառու, կալուածատէր Ֆէյնը, որ իւր խարդախութեամբ, գրաւել է գիւղացիների կալուածները, հողերը. և հիմայ 200,000 դեսեատին հող ունի․ մինչև հիմայ էլ կողոպտում է գիւղացիներին․ և դժբախտաբար այդպիսի տզրուկներ շատ կան՝ Ռուսաստանում, որ պրօլետարիատ դասակարգին խաղալիք են շինել իրենց ձեռքում։ Ահա այդ տխուր երեկոն, ուր տառապանքի վշտից ամէն տան մեռելութիւն էր տիրում, հեռո՛ւ, բաւական հեռու երեւում էր մի անշուք ապարանք, որի միջի աղօտ լոյսը ներկայանում է մէկ սպանդանո՛ց, կատարեալ սպանդանոց։

Այդ գիւղական դատարանն էր, ուր մարդիկ հաւաքուել էին խորհրդակցելու, իրենց տէրսին դարման անելու։

Բոլորն էլ տխուր տրամադրութեան տակ, չէին համարձակւում սեննակի խաղաղութիւնը խանգարել, կամ մի խօսք արտասանել։

Այդ մեռելական վարկեանին, ներս է մտնում մէկ եր' տասարդ։ փտած քուրջերով, ողջունում, և առանց հրամցնելու նստում դռան հետեւում․ դա՛, Իգիթն էր։ Գիւղացիներից մէկը ասում է․—Երիտասարդ, ո՞վ ես, ո՞ւր ես գնում, ի՞նչ գործ ունես այս ժամանակ, իսկ միւսը ասում է. ա՛յէ, Հայէ Հա՛յէ, և միւսներն էլ սոսկալով նայում են երիտասարդի վերայ։

— Ես հա՛յ եմ. հա՛յ, պարոննե՛ր, դուք երեւի հայ չէք տեսել, և շատ հասկանալի է որ հայի մասին գաղափար էլ չէք ունենալ, Ես հա՛յ եմ, Հայկ Նահապետի ցեղից, ես այ՝ մարդկան ցեղից եմ, այն տանջուած մարդկանց ցեղից, որոնք պատճառ արձան Ռուսաստանի փրկութեա՛ն, հզօրութեան. եթէ կուզէք իմանալ, ահա պատմեմ․

Լօրիս Մելիքով, Շօլկօվնիկով, Տէր-Ղուկասով, Բէյբութով, և այլն։ Ես այն հերոսների ցեղից եմ։ Հիմա, ես աքսորուած եմ տասնութը տարուայ ժամանակիր աշխատութեան ա՛խ ձեր կառավարութիւնը, ձեր նախարարութիւնը... դուք աքսորւա՞ծ էք...։

—Այո պարոններ...։

—Ինչո՞ւ, և ի՞նչ պատճառաւ ,...։ Ես բարեկամներ, պատկանում եմ մի այնպիսի կուսակցութեան, որի օրով պէտք է փրկւէք դուք, և համայն մարդկութիւնը․ այդ Սօց․ Դեմօկրատ կուսակցութիւնն է։ Այդ խօսակցութիւնը լինում էր այնպէս լուրջ, և այնպիսի մէկ տխուր ոճով, որ գիւղացիները մոռացած իրենց ցաւերը, և մտածում էին այն մաշուած երիտասարդի վերայ։ Իսկ միւս կողմից մէկ ծերունի, որ կ՚լինէր մէկ վաթսուն տարեկան, չդիմացաւ, այդ սրտաճմլիկ խօսքերին, ու արտասուքը աչքերին ասաց․

—Ա՛խ Աստուած անիծէ այսպիսի անարգ, և սոր

կառավարութիւնը, այդպիսի նախարարութիւնը, Բանդեցին մեր հայրենիքը, քանդեցին մեր օճախը, մեր նահապետական անվտանգ և սուրբ Թացած օջախը: Այս երկրորդ խնդիրն է որ ուղարկում ենք կառավարութեան, դատապետին, ոչ մի պատասխան, ոչ մի լո՞ւր. մենք հաւաքուել ե՛նք այստեղ այդ մասին խօսելու, այդ մասին խորհրդակցելու. եթէ կարող էք խնդրեմ մեզ այդ մասին խորհուրդ յայտնեցէք, ի՞նչ անենք որ մեր երեխաներին, սովից ազատենք: Իսկ մի ուրիշը ընդհատում է խօսքը.

—Ի՞նչ կասէք, յարգե՛լի պարոն, իմ դրութեան վրայ, հինգ որդի ունէի, երեքը ընկան Ռուս—Ճապոնական կռւում, կիները, երեխաները որբ մնացած, ինձ են նայում, իմ աշխատութեանը սպասում: Իսկ երկուսը օտարութեան ցուպը ձեռքերը առին, և մինչեւ հիմա Թափառում են Տաւրիկեան շրջանում: Ով Հայր է եղել կորիճ երիտասարդների, ո՛վ ծնողական կսկիծ է տեսել, նա միայն կարող է հասկանալ իմ դրութիւնը, իմ տառապանքը, չարչարանքը:

Այս խօսքերի հետ միասին, այս կծկուր խօսքերի հետ միասին, արտասուքի կաթիլները կաթկաթում էին ծերի աչքերից, և ողողում էին ծերի ալեխառն մօրուքը:

Երիտասարդը վերջ է տալիս այդ ցաւալի [illegible]տին ասելով.

—Դո՛ւք, բարեկամնե՛ր, կ'համաձայնէք իմ խորհրդին եթէ ազատեմ ձեզ, այդ Թշուառ կացութիւնից:

Ամեն կողմից լսեցան այո՛, այո՛, խօսքերը:

—Բայց իմացէք սիրելի՛ք, որ իմ այս առաջարկը դուցէ առանց կենդանի զոհերի չլինի:

—Թող լի՛նի, Թող լի՛նի, Թող արիւնով լինի, պատասխանում են գիւղացիները:

Այդ դէպքում, եկէք կազմենք գիւղացիական, Պրոլետարիատ միութիւն, իսկ առաւօտեան, կ'բերէք ինձ ձեր գիւղական զգեստներից, կ'հագ՝ իմ, և ձեր որդիների հետ միացած, կ'յարձակուենք այ՛ կալւածատէրի էկանոմիայի վերայ, և կ'դատարկենք շտեմարանը, համաձա՞յն էք:

—Այո՛, այո՛, կամ կ'մեռնինք, կամ կազատենք մեր երեխաներին, այս օրհասական դրութիւնից, այս սովի ճիրաններից:

Ժողովականները գնում են տուն, խրախուսում են որդիներին, որ առաւօտեան շո՛ւտ, գնան Հայ երիտասարդի մօտ, ու պատրաստ լինեն Նրա հրամանների: Մէկ ժամւայ մէջ, հասնում են մէկ խումբ երիտասարդներ սպառազինուած, վերցնում երեսուն սայլ, և գրոհ տալիս դէպի էկանոմիայ: Դժբախտաբար կալւածատէրը, տանը չէր, նա գնացել էր Պետերբուրգ իր պաշտպանին, իր բարեկամին տեսնելու...: Ահագին էկանոմիան, որ մէկ գիւղի նմանութիւն ունէր, յանձնել էին կառավարիչին: Իսկ կառավարիչը այն տխրահռչակ, Մաթէն էր, որ իւր սպայ եղած ժամանակ սպաննել է տասը զինւոր, մէկ Հայ «Օֆիցար» և իւր կնոջը: Ահա՛ այդպիսի մէկ ոճրագործի էր յանձնուած այդ ահագին էկանոմիան:

—Ի՞նչ էք ցանկանում խախոլներ (տգէտ գիւղացիներ)

Հայ երիտասարդը պատասխանում է.

—Պ. կառավա՛րիչ, եղէք այնքան բարի, տուէք մեզ, մի քանի կոտ ցորեն կամ ալիւր, մենք ձեզ կ'վճարենք վերադրով:

—Դուք սրիկանե՛ր էք, գոռում է կառավարիչը, մենք ոչ մի պարտականութիւն չունինք ձեզ օգնելու, և էլի մի քանի անձոռնի խօսքեր:

—Տղե՛րք գոռում է Հայ երիտասարդը, երկու մասի բաժանուէ՛ք, կէսը թող յարձակուի չտեմարանի վերայ, իսկ կէսը թող ոստիկան դիրք բռնի, մինչեւ աւարտիլը։

Երբ որ երիտասարդները դատարկում էին չտեմարանը, կառավարիչը լուր է տալիս ոստիկանութեան։ Եւ մինչեւ ոստիկանների գալը, երիտասարդները վերջացնում են գործը, և ճանապար են ընկնում դէպի գիւղ։ Ճանապարհին պատահում են մի վաշտ զօրքերի, և սկսում հրացանաձգութիւն. մէկ ժամ կռուելուց յետոյ վեց հոգի ընկնում է երիտասարդներից, տասնուհինգ հոգի կոզակներից։ Ոստիկանները տեսնում են որ հետեւանքը վատ է, թողնում և հեռանում են դէպի քաղաք, լուր տալու գործի եղելութիւնը։

Երիտասարդները գալիս են գիւղ, յայտնում են այդ չարագուշակ լուրը գիւղացիներին։

Գիւղացիները այլայլւում են այդ տարօրինակ դէպքից, ու ասում.

—Ուրեմն մեր որդիները գալիս են՝ մեր դէմ կռուելու՞, մեզ սպաննելո՞ւ....։

Գրիչս պատմել չի կարող թէ այդ գիւղացիները ինչպէս գնացին և բերին դիակները, ամբողջ գիւղը համարեայ թէ սուգի մէջ էր.

Փոխուեցաւ Ռուս օրիորդների, տիկինների ուրախութիւնը, փոխուեցաւ լացի սուգի ու կոծի։

Ողբում էին, որովհետեւ գիւղի մէկ երիտասարդը բոլորին էլ որդի էր, ամէնի տանը նա աղ ու հաց է կերել, ամէնի հետ ուրախացել։ Ուրեմն այդ սուգը բոլորինն էլ էր։

Բ.

Լուսնկայ գիշե՛ր, սարերի կատարները փայլում էին լուսնի արծաթափայլ ճառագայթներով, եւ այդ խորհրդաւոր գիշերը խրախուսում էր ժողովրդին նորից պատրաստո՛ւիլ յարձակուել այդ աւազակային որջի վերայ, կամ մեռնել կամ իրենց անմեղ արեան վրէժը լուծել, այդ աւազակ կառավարիչից։

Այդ անսպասելի դէպքից յետոյ, կառավարիչը հեռագրում է կալուածատիրոջը. որը գտնւում էր Պետերբուրգում, և խնդրում է նրանից օգնութիւն։ Կալուածատէրը՝ հեռագիրը ստանալուն պէս վերցնում ու գնում է պալատ, տեսնւում ու զինւորական դաշտային դատարանի նախարարի հետ, յայտնում եղելութիւնը, և ասում.

—Տէ՛ր, նախարար, եթէ դուք թնդանոթով վերջացնէք այդ գիւղը, ես ձեզ կընծայեմ 200,000 րուպլի, և առարկելով թէ այդ գիւղացիները բոլորն էլ յեղափոխականներ են։

Իսկապէս այդ տարօրինակ դէպքը մեծ աղմուկ է բարձրացնում հիւսիսային առջի պալատում։ Վարկեան չանցած հեռագրում են այն տեղի նահանգապետին որ քննէ այդ գործը, նահանգապետը, իր կողմից ուղարկում է ամենայայտնի պաշտօնեաներին, գաւառապետին, զինւորական հազարապետին, և դաշտային դատարանի քննիչին, մէկ խումբ կոզակներով։

Գիւղում սարսուռ է ազդում, որ կողմդ նայես լա՛ց, աղաղա՛կ, և այդ տխուր բոպէին մեր Հայ երիտասարդը հաւաքում է յիսուն հոգուց բաղկացած մէկ խումբ երիտասարդներ, պատրաստում, որ երբ մէկ փոքրիկ ընդհարում լինի, չխնայեն ոչ մէկին։ Պ. ոստիկանները հրամայում են ժողովրդին որ հաւաքուէն դատարանի պարտէզը։ Հաւաքուելուց յետոյ, ոս-

տիկաններից մէկը սկսում է ճառախօսել, և սպառնում է ժողովրդին թնդանօթներով։ Իսկ ժողովուրդը արդէն յուզուած, ալեկոծուած դրութեան մէջ, չեն լսում Գ. ոստիկանի ոչ մի խօսքերին։ Իսկ միւս կողմից երիտասարդած խումբը գոռում է.—Թող կորչի միապետութի՛ւն, կեցէ՛ Սոց. Դէմօկրատիա՛յ, Թող լինի հաւասարութի՛ւն, մենք չենք ցանկանում ստրուկ, և քաղցած լինել մեր հայրենիքում, մենք ցանկանում ենք Ռամկավարութիւն։ Այդպիսի խօսքեր դժուար էր լսել անճոռնի ոստիկաններին, ու հրամայում են հրացանազարկ անել ժողովրդին։ Մի քանի երիտասարդներ այդ սրտաճմլիկ և ահռելի տեսարանին, ամենաճարպիկութեամբ, մօտենում են ոստիկաններին, յարձակւում վերաները, իսկ միւսները սկսում են դիմադրել ոստիկանութեան կազմին։

Բռնում են երեք ոստիկաններին, և բանտ են տանում, թեւերը կապած, ինչպէս բանտարկեալը։ Այդ երկուժամեայ կուի մէջ ժողովրդից ընկնում են տասնուհինգ հոգի և չորս հոգի էլ վիրաւորւում։ Իսկ կոզակների կողմից երեսունը հինգ հոգի սպանւում, իսկ տասնուհինգ հոգի էլ վիրաւորւում է։ Կոզակները տեսնում են որ իրենց կորուստը աւելի շատ է, թողնում են բռնուած, բանտ նետած աւազակներին, ու իրենք գնում քաղաք, լուր տալու Նահանգապետին։ Բանտարկեալ ոստիկանները սկսում են տրտնջալ իրենց դրութեան վերայ, նրանք զղջում էին որ խայտառակութեան առարկայ դարձան։

—Գաւառապետը ասում է, պարոննե՛ր. երանի թէ ձեռքերս բաց լինէին, ինչպէս ցանկանում եմ ծխել։

—Իսկ միւսը պատասխանում է. կանչեցէք պահապանին, պահապանը շատ քաղաքավարութեամբ ծառայում է ոստիկաններին. նորից սկսում է խօսակցութիւն ոստիկանների մէջ։

—Ցանցանքը խիս չէ՛. ասում է հազարապետը։

—Ցանցանքը խիս չէ՛, պատասխանում է գաւառապետը. գիւղացիք վայրենի են առ հասարակ։ Դաշտային դատարանի քննիչը, որ ձեռքերի ցաւից կծկւել էր բանտի մէջ անկիւնում, ասում է.

—Ճիշտ որ պարոննե՛ր, ի՛նչքան խոնաւ, և ախտոտ է այս բանտը, ի՞նչպէս են ապրում այստեղ խեղճ բանտարկեալները։ Այդ դէպքում բանտի պահապան երիտասարդը ժպտալով մօտենում է բանտի դռանը, և ասում.

—Այո՛, Գ. ոստիկաններ, շատ ախտոտ և խոնաւ է մեր բանտը. վնաս չունի՛, դուք էլ ճաշակեցէք այն եղեռնական դրախտի պտղից, որ մենք կերել ու մերկացել ենք։

Դո՛ւք, ա՛նխիղճներ, քանի, քանի, մայրերի թողել էք առանց մին ու ճար որդիների, քա՛նի, քա՛նի, քոյրերի խլել էք իրենց հարազատ եղբայրներից, քա՛նի, քա՛նի, ամուսինների բաժանել էք իրենց հարազատ ամուսիններից։ Դո՛ւք անգո՛ւթներ, դուք ամենից շուտ պիտի հետեւիք Սոց. Դէմօկրատիական գաղափարներին, այն ինչ, դուք էք դաւաճանում մեր սուրբ հայրենիքին, դաւաճանում ձեր եղբայրներին։ Մենք փրկութեան գաղափարը ստանում ենք Հայերից և նրանք պէտք է լինին մեր երկրի փրկարարները։

Այդպիսի խօսակցութեան մէջ էին, երբ գիւղի մեռելային դրութիւնը փոխւեց աղաղակների, լոյսը բացւեցաւ, գիւղացիք սարսափեցան երբ տեսան Նահանգապետին, և բազմաթիւ կոզակներին, որոնք պաշարեցին ամբողջ գիւղը։ Կառքը կանգ է առնում գիւղի դատարանի մօտ, մէկ ակնթարթում. հաւաքւում են գիւղացիները դատարան, որը առանց լուացւելու, որը մէկ երկար շապիկով։ Նահանգապետը հրամայում

է արձակել բանտարկուած զօրականները, և սկսում է կառքի միջից հայհոյանքներ թափել իր անպատկառ բերանից, ժողովրդի հասցէին, և յետոյ մի առանձին տօնով, շեշտում է.

—Դո՛ւք, անհնազանդ աւանակնե՛ր, ի՞նչպէս համարձակեցաք յարձակում գործել, մի այնպիսի պատկառելի կալուածատէրի վերայ, և դատարկել շտեմարանը, կամ թէ ի՞նչպէս համարձակեցաք յարձակում գործել, բանտարկել, Աստուծոյ և մարդկանց ընտրեալներին. դեռ խօսքը չէր վերջացրել, որ հինգ հարիւրի չափ ժողովուրդ մէկէն սկսեցին բոռալ, ահռելի ձայնով.

—Թող կորչի միապետո՛ւթիւն, կեցցէ՛ Ընկերվարութիւն. կեցցէ՛ Սօց. Դէմօկրատիայ: Իսկ միւս կողմից ծերերից մէկը սկսեց բարձր ձայնով գոռալ.

—Դո՛ւ աւազակապե՛տ փոխանակ վէրքերս բուժելու. վէրքերիս վրայ նորից աղ ու տաքտե՞ղ ես ցանում, գո՛ւրս, գո՛ւրս մեր գիւղից եթէ ոչ ողջ չես մնալ.

Նահանգապետը տեսնում է որ բա՛նը բուրդ է, թողնում է ու հեռանում իր արիւնարբու կոզակներով:

Իսկ ժողովուրդը յուզուած դրութեամբ. յարձակում է գործում կալուածատէրի էկանոմիայի վերայ, այրում բոլոր ապարանքը, և սպանում ոճրագործ կառավարիչի, ու յետոյ հանգիստ սրտով դատարկում շտեմարանը, Մինչեւ հիմայ, այս ահագին դէպքը մընում է հիւսիսային արջի պալատում առանց հետեւանքի. Իսկ այդ ժամանակ Սահմանադրութիւն հրաչակեց Թուրքիայում: Ռուս ժողովուրդը մեր Հայ երիտասարդին բերեցին Սեւաստօպօլ մեծ ցոյցերով, և այն տեղից էլ ճանապար դրին դէպի Պօլիս:

ՀԱՅ ՕՐԻՈՐԴԻ ՄԻԹԻՆԿԸ ԵՒ ՃԱՌԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

905 թիւն էր, Կովկասը ճնշւում էր միապետական միահեծան իշխանութեան եւ նրա արբանեակների ձեռքում, որոնք թողած արդարութիւնը, սկսում էին ճնշել հալածել խեղճ ու կրակ ազգաբնակութեան:

Այդ ժամանակն էր որ Գոլեցինը, Կովկասի այն ժամանակւայ բօրենին, (փոխարքայ) որ սկսել էր իւր հայակեր քաղաքականութեամբ ջնջել Հայ անունը Կովկասից. Բնականաբար ճնշւում էին և միւս ազգաբնակութիւնները. որոնք Հայերի նման յառաջադէմ ազգ էին, բայց Գոլիցինի կարծիքով եթէ Հայերը չլինէին Կովկասը հանգիստ կ՚լինէր. Նա կարծում էր Հրեաները Վրացիները Հայերից էին օրինակ առնում, մի խօսքով նրա կարծիքով Հայերը էին որ յեղափոխութեան հեղինակներն էին, եթէ Հայերը չլինէին Կովկասը թշնամիներ չէր ունենալ. բոլոր բնակիչները հաւատարիմ կ՚մնային պետութեան, կամ կովերի նման կը տանէին այն անտանելի լուծը որը դրած էր իրենց վզին. Ամէն ազգ ցանկանում էր թոթափել այդ լուծը, բնականաբար Հայերն էլ կ՚ցանկանային թօթափել այնպէս որ մինչեւ անգամ կանայք և օրիորդներ խմբեր էին կազմում խորհրդակցում զատ զատ կամ խառն կերպով:

Բ. Քաղաքի մի թաղամասում հաւաքուել էին երկսեռ դասակարգ որոնք պատկանում էին Հնչակեան կուսակցութեան: Նրանք խորհրդակցում էին օրւան քաղաքականութեան մասին. Նրանք սովորութիւն էին արել շաբաթը մի քանի անգամ հաւաքւում էին այդ գաղտնի խորհրդարանը խորհրդակցում էին: Այդ օրն էլ նրանք հաւաքուել էին մի քանի կարեւոր հարցերի մասին խորհրդակցելու.

բայց ի՛նչ է դժբաղդութիւնը, առ հասարակ ամէն երկիր ունի իրեն անառակ զաւակը, ամէն երկրի մէջ կը գտնուի մատնիչը, որը իրեն օրական հացի պատճառաւ, որը իր գերդաստանի օրապահիկը հայթայթելու նպատակաւ, յանձն կ՚առնէ ամէն տեսակ դաւաճանութիւններ անելու Այդ քաղաքում ապրում էր վանեցի Սողոմոնը, որը երկար ժամանակ պարապ պտտելուց յետոյ, գնացել վարձուել էր ոստիկանութեան ամսական քառասուն րուբլի: Այդ Սողոմոնը գնում է ոստիկանատուն յայտնում է ոստիկանութեան որ Բ. թաղամասում, բանւորները հաւաքուած միթինգ են գումարել, բնականաբար հանդէպ կառավարութեան:

Կառավարական ոստիկանապետը մօտ հարիւր կոզակներով շրջապատում է այն դահլիճը որտեղ հաւաքուած են բանւորները:

Այդ ժամանակ օրիորդ Թէրէզան կանգնած է լինում մի նոր շինած ամբիոնի վրայ և այն տեղից ճառում է Կովկասի բորենիի մասին նրա ատելութիւնը մասնաւորապէս Հայերի մասին: Ներս է մտնում ոստիկանապետը, նայում տեսնում է որ մի քանի հարիւր հոգի նստած են խելօք աշակերտների պէս, իսկ օրիորդը ամենա պերճախօսկերպով ճառում էր. ոստիկանապետի ներկայութիւնը սարսափ է ազդում բանւորների վերայ, բայց օրիորդը երբեք չի կորցնում իրեն, իրեն սովորական սառնարիւնութեամբ, առանց ընդհատելու իր ճառը սկսում է շարունակել իւր խօսակցութիւնը, կարծես թէ ոստիկանապետը չէր եկողը, այլ իրեն ընկերներից մէկը, որը մինչեւ կոկորդը լեցուած է պաւօտի աղտով:

Բայց իր ճառի մէջ հասկացրեց ընկերներին որ չշփոթուէն, ու կասկածի տեղի չտան. Նորից շարունակեց Ռուսերէն լեզուով:

— Եղբայրնե՛ր, այո, ես հարս պէտք է լինիմ, դուք այստեղ հաւաքուած էք խորհրդակցելու, բայց ես որ այսպէս կրթուած ազատամիտ բանւորուհի, զգում եմ թէ ինչքան դժուար է ամուսնութիւնը, ինչ ծանր լուծ է ամուսնութիւնը, դուք եկաք այստեղ ձեր քրօջ վերջնական ամուսնութեան մասին խօսելու. խորհրդակցելու, ես էլ զգում եմ թէ ինչքան դժուար հարց է, բայց դուք այդքան հոգիով առաջարկելու էք եկել ձեր ընկերին: Ես մերժել չեմ կարող, թող լինի Աստուծոյ եւ ձեր կամքը, ու դառնալով դէպի ոստիկանապետը, որը ինչպէս համալսարանական ազնիւ ունկնդիր լսում էր պրոֆեսորի դասախօսութեանը, ու չէր համարձակւում ընդհատել: Շնորհակալ եմ Ջեզանից ազնիւ ոստիկանապետ, որ դուք էլ առանց մեր խնդրելու թոյլ էք ուել Ջեր ազնւութեանը ներկայ գտնւելու իմ նշանախօսութեան կնքահանդէսին: Այս ասելով իջաւ ամբիոնից և մասնաւորապէս սեղմեց ոստիկանապետի ձեռքը և շնորհակալութիւն յայտնեց որ ներկայ է եղել: Իսկ միւս ընկերները հանդամանքից օգտուելով սկսեցին դուրս գալ դահլիճից. Բայց դուրսը ոստիկաններ էին կարգնած, ոստիկաններն էլ տեսնում են որ իրենց պետը չ՚ արգիլում նրանց իրենք էլ չարգիլեցին. այնպէս որ երիտասարդների կէս մասը արդէն գնացած էր որ ոստիկանապետը սթափւում է ու օրիորդի՛ն ասում որ արգելէ նրանց դուրս ելնելը: ու սկսում է հարցնել:

— Օրիորդ, դուք ինչո՞ւ էիք հաւաքել այստեղ ի՞նչ անելու:

— Ես ձեզ բացատրեցի Պ. ոստիկանապետ: Ես պէտք է ամուսնանամ, և այսօր ընկերներս, որոնք եղել են ինձ պաշտպան իմ թշուառ օրերում, մանաւանդ որ այս ընկերներիս ցրամոլն է որ ես կրթուել

եմ, և բնականաբար պարտական էր վերջին անգամ շնորհակալութիւնս յայտնել եմ բարեկամիս։

— Շատ լաւ. օրիորդ, հապա ո՞ւր է ձեր նշանուածը չ'տեսնանք

— Այս երիտասարդն է Գ. ոստիկանապետ այս երիտասարդը. այս ասելու պէս բռնում է մի ծանօթ երիտասարդի ձիռք և բերում է ոստիկանապետի մօտ։ Ոստիկանապետը հաւատալով օրիորդի խօսքերին, շնորհաւորում է օրիորդի նշանադրութիւնը, և խնդրում է որ ներեն իրին անքաղաքավարութեան համար և յայտնում է որ ի՛նքը խաբուած է եղել, ինքը եկել էր ուրիշ նպատակաւ։

Ոստիկանապետը ներողութիւն խնդրելով հեռանում է դահլիճից իր կոզակների հետ։

Ահա սերելի ընթերցողներ թէ ի՞նչ տեսակ դիւանագէտ օրիորդներ ունի Կովկասը։ Ուրեմն ձայնակցեցէք ինձ հետ ապրի Հայուհին։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԱԶԳ. ԳՐԱԴԱՐԱՆ ԲՈՍԹՈՆԻ
1903
ARMENIAN NAT. LIBRARY OF BOSTON.

2013
14864